



Ֆրանսայի Կառավարութիւնը Հայոց Ցեղասպանութեան Ժխտումը Քրեականացնող Նոր Օրինագիծ Կը Պատրաստէ

Հայաստանի մօտ Ֆրանսայի նորանշանակ ղեկավար Ժան-Ֆրանսուա Շարպանտիէ յայտարարեց որ, կառավարութիւնը Հայոց Ցեղասպանութեան ժխտումը քրեականացնող նոր օրինագիծ կը Պատրաստէ՝ նախագահ Օլանտի թելադրութեամբ:

Դեպքանը տեղեկացուց որ, Ֆրանսայի արդարադատութեան նախարարութիւնը կը մշակէ Հայոց ցեղասպանութիւնը ժխտելու համար քրեական պատասխանատուութիւն սահմանող օրինագիծը, որու նախկին տարբերակը մերժուած էր երկրի Սահմանադրական խորհուրդին կողմէ:

Իր հաւատարմագիրը յանձնել ետք նախագահ Սերժ Մարգսեանին, ղեկավար Շարպանտիէ պատասխանեց լրագրողներու հարցումներուն:

«Ֆրանսիայի նախագահի ցուցմունքով աշխատանքներ կը տարուին նոր օրինագիծի մշակման ուղղութեամբ, որոնք պէտք է անպայման հաշուի առնեն Սահմանադրական խորհուրդի կատարած դիտողութիւնները: Իմիջիայնոց, իրողութիւնը այն է, որ անցած տարուայ Ապրիլին, երբ Փարիզի մէջ կ'ոգեկոչուէր Հայոց ցեղասպանու-



Հայաստանի մօտ Ֆրանսայի նորանշանակ ղեկավար Ժան-Ֆրանսուա Շարպանտիէ

թեան 99-րդ տարելիցը, նախագահ Օլանտ, մասնակցելով այդ արարողութեանը, եւս մէկ անգամ խօսեցաւ այս մասին: Ինչ կը վերաբերի ժամկէտներուն, այս պահուն ստոյգ ժամկէտ չեմ կրնար ըսել, թէ երբ այդ նոր օրինագիծը մուտք կը գործէ խորհրդարան», - ըսաւ Ժան-Ֆրանսուա Շարպանտիէ:

Անցեալ տարուայ Դեկտեմբերին, Ֆրանսական հեղինակաւոր «Լը Մոնտ» թերթը գրած էր, որ յառաջիկայ ամիսներուն կառավար-

Շարք էջ 5

Պատասխանելով Սերժ Մարգսեանին Ընդդիմադիր Եռեակը Նախապայման Կ'առաջարկէ Իշխանութիւններուն

Հայաստանի ոչ իշխանական եռեակը՝ ՀԱԿ-ը, ԲՀԿ-ն եւ «Ժառանգութիւն» Նոյեմբեր 12-ին նախապայման դրին նախագահ Սերժ Մարգսեանի առջեւ՝ կա'մ կատարել իրենց 12 պահանջներէն յստակ՝ 10-րդ կէտը, կա'մ եռեակը իշխանութեան հետ քննարկումներու մէջ պատրաստ չէ մտնելու:

Ոչ իշխանական ուժերու անցեալ Յունիսին հրապարակած 12 կէտերէն 10-րդը կը վերաբերի Ընտրական օրէնագրի բարեփոխման: Ոչ իշխանական ուժերը կ'առաջարկեն ամբողջութեամբ անցում կատարել համամասնական ընտրակարգին եւ հրապարակել ընտրութիւններուն մասնակցած քաղաքացիներու ցուցակը:

Նոյեմբեր 12-ին կայացած եռեակի նիստէն յետոյ, «Ժառանգութիւն» խմբակցութեան ղեկավար Ռուբէն Յակոբեան յայտարարեց, որ այս պահանջի կատարումը ցոյց կու տայ՝ արդեօք իշխանութիւնը իսկապէ՞ս կը ցանկանան կատարել իրենց պահանջները, թէ՞ հերթական անգամ կը փորձեն ոչ իշխանական ուժերուն ներքաշել ձեւական գործընթացի մէջ:

«Եթէ իսկապէս սա իմիտացիա չի, ուշադրութիւն չեղելու խնդիր չի, բարի երեւնալու խնդիր չի, եւ կարծում եմ իշխանութեանը

որեւէ բան չի խանգարում, որ ասի՝ յարգելի ընդդիմութիւն, մենք գտնում ենք, որ իսկապէս 10-րդ կէտը երեք ժամուայ ընթացքում կարող ենք միասին լուծել, ինչպէս եմ մեր առաջարկութիւնը ընդունէք եւ եկէք միասին Ընտրական օրէնագրում փոփոխութիւն կատարենք ձեր յայտնի շեշտադրումներով», - ըսաւ Ռուբէն Յակոբեան:

Մի քանի օր առաջ, Սերժ Մարգսեան անսպասելիօրէն անդրադարձաւ ոչ իշխանական ուժերուն կողմէ ներկայացուած 12 պահանջներուն՝ ընդգծելով, թէ առաջարկած է Կառավարութեան անգամ մը եւս անդրադառնալ այդ պահանջներուն եւ մէկ առ մէկ քննարկել զանոնք:

«Առաջին կէտի մասին կունենանք փոքրիկ ճանապարհային քարտէզ, կունենանք ժամկէտներ, անցնեն երկրորդին, անցնեն երրորդին, որպէսզի եւ խորհրդարանական այս ուժերը կամ եռեակն իրենց բաւարարուած զգան, չասեն մեզ անտեսեցին, եւս միւս կողմից էլ կառավարութիւնը, կարծում եմ, որ մէկ անգամ էլ քննարկելով, միգուցէ, նոր հայեացքով կարող է նայել այս ողջ փաթեթին», - ըսած էր նախագահ Մարգսեան:

Շարք էջ 5

Ատրայէճանական Ուժերը Կրակած Են Ղարաբաղեան Բանակի Ուղղաթիռին Կրայ Երեք Հայ Զինուորներ Զոհուած Են



Ատրայէճանի կողմէ յարձակման ենթարկուած Ղարաբաղեան ռազմաօդային ուժերի միջուկը

Նոյեմբեր 12-ին, Ղարաբաղատրայէճան սահմանի արեւելեան հատուածի օդային տարածքին մօտ վարժական թռիչքի ժամանակ ատրայէճանական ուժերը խախտելով զինադադար, կրակած են Լեռնային Ղարաբաղի ռազմաօդային ուժերու Մի-24 ուղղաթիռի վրայ, իլեղով երեք զոհեր:

Ատրայէճանի պաշտպանութեան նախարարութիւնը յայտարարած է, թէ հայկական ուղղաթիռը յարձակում կը կատարէր անօդային բանակի դիրքերուն վրայ:

Ղարաբաղի նախագահի մամուլի քարտուղար Դաւիթ Բաբեան «Ազատութիւն» ռատիոկայանին հաստատեց, որ հայկական կողմէն կայ երեք զոհ:

Բաբեան աւելցուց, որ հակառակորդը հարուածած է ուղղաթիռին, երբ ան ոչ մէկ մարտական գործողութիւն չէր իրականացներ:

«Այդ ուղղաթիռը խոցուել է, ընկել է չեզոք տարածքում: Եւս մէկ անգամ այդ միջադէպը ցոյց է

տալիս Ատրայէճանի իրական պատկերը, թէ ինչպիսի պետութեան հետ մենք գործ ունենք: Դա ուսումնասիրութեան թռիչք էր, այն որեւէ ձեւով զինուած չէր որեւէ ռազմամթերքով, այսինքն՝ որեւէ վտանգ չէր ներկայացնում, նոյնիսկ թշնամու համար», - ըսաւ Բաբեան, աւելցնելով, որ խորապէս կը ցաւի անձնակազմի կորստի համար, զայն որակելով ողբերգութիւն:

«Այս աննախադէպ լարման հետեւանքները ատրայէճանական կողմի համար շատ ցաւօտ կը լինեն եւ կը մնան Ատրայէճանի ռազմաքաղաքական ղեկավարութեան խղճին», - անդրադառնալով միջադէպին ըսաւ Հայաստանի պաշտպանութեան նախարարի մամուլի քարտուղար Արծրուն Յովհաննիսեանը:

Յայտնենք որ, Նոյեմբերի 6-էն ի վեր Հայաստանի ու Լեռնային Ղարաբաղի զինուած ուժերը կը կատարեն «Միասնաութիւն 2014» անուամբ լայնածաւալ զօրավար-ժուլթիւններ:

Թուրք Դիւանագետ «Վատագոյն Մղձաւանջը Կ'ըլլայ Ամերիկայի Կողմէ Ցեղասպանութեան Ճանաչումը

«Անգարայի համար ամենավատ մղձաւանջը կ'ըլլայ ԱՄՆ-ի կողմէ ցեղասպանութեան ճանաչումը», թրքական թերթերէն մէկուն նման յայտարարութիւն կատարած է Թուրքիոյ Արտաքին Գործոց Նախարարութեան քաղաքականութեան ծրագրման բաժնի պետ՝ Ալթայ Զենգիրգերը, կը տեղեկացնէ «Փրանսփրես» գործակալութիւնը:

Ան ըսած է, որ Թուրքիան պէտք է ռազմավարութիւն մշակէ, որպէսզի հակազդէ Հայոց ցեղասպանութեան մօտեցող Տարիւրամեակի նախաշեմին, Օսմանեան կայսրութեան մէջ այդ իրադար-

ձուցիւնը ճանչնալու ճնշումներուն:

Ալթայ Զենգիրգերը հարիւրամեակը համեմատած է Ֆուլթոնի մէջ «տուգանային հարուած»-ի հետ՝ ըսելով, որ անոր օգնութեամբ ոմանք կը փորձեն լուծել վէճը՝ աւելցնելով, որ Անգարայի համար ամենավատը կ'ըլլայ Միացեալ Նահանգներու կողմէ ցեղասպանութեան ճանաչումը:

Բարձրաստիճան թուրք դիւանագէտը ըսած է, որ Թուրքիան, միշտ կտրականապէս հերքած է հայերու ծրագրուած ոչնչացումը եւ մտադիր չէ փոխել իր դիրքորոշումը:

ՎԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

ԲՀԿ-ին Լուրջ Վտանգ է Սպառնում

ՀԱՅԿԱԶՆ ՂԱՀՐԻՑԵԱՆ

Հայ ազգային կոնգրեսը յայտարարություն է տարածել, որում զգուշացնում է եռեակի իր գործընկերոջը՝ ԲՀԿ-ին, որ «ակտիվ քաղաքական գործողությունների անորոշ ժամանակով յետաձգումը կարող է դառնալ ճակատագրական սխալ, քանի որ վարչախումբն այդ ժամանակամիջոցը կարող է օգտագործել սեփական ճամբարն առաջնություն մոբիլիզացնելու եւ Համաժողովրդական շարժման ներսում պառակտումներ առաջացնելու համար»:

ԲՀԿ քաղխորհրդի այդ նիստում, որտեղ որոշուել էր զբաղվել տարածքային շտաբների ձևափոխումով, Գագիկ Մառուկեանը յայտարարել էր, որ շտաբները բան չկայ, ժամանակն աշխատում է իրենց օգտին: Մակայն, դրանից մի քանի օր առաջ նոյն Մառուկեանը յայտարարել էր, որ ժամանակ քիչ է մնացել:

Ինչ է փոխուել այդ մի քանի օրերին, որ փոխուեց նաեւ ժամանակը: Մամուլի հրապարակումների համաձայն, այդ օրերին տեղի է ունեցել Սերժ Սարգսեանի հանդիպումը Մառուկեանի հետ:

ստանալով տարբեր բնույթի միջոցներ: Այսինքն, ՀԱԿ-ը պէտք է ապահովեր համակարգի սխեմայի «լեզրիտիմությունը»:

Ահա այսպիսի սխեմայով էլ ներքաղաքական կեանքը թեւակոխեց «համաժողովրդական շարժման» ներկայիս փուլը: Եռեակի սկսած գործընթացը, սակայն, առաջին անգամ լուրջ դիսկուրսի ենթարկուեց, ընդ որում՝ բաւական առարկայական, ինչը չկար նախկինում: Այդ բանավեճն այնքան առարկայական է, որ եռեակի բերած աւանդական հակափաստարկներն այլեւս ազդեցութիւն չեն գործում, եւ վերը բերուած սխեման կասկածի տակ է յայտնուել: Եւ տիրապետող է դառնում այն ընկալումը, որ համակարգը շարժուելու է ներքին պայմանաւորուածութիւնների համաձայն:

Հասկանալի է, որ վաղուց չկայ Հայ ազգային կոնգրես, եւ չկայ նաեւ «համաժողովրդական շարժում» եռեակի կատարմամբ: Կոնգրեսն իհարկէ ուժացնում է իրավիճակը, յայտարարելով, թէ Ազատութեան հրապարակում ինչ որ լուրջ գործընթաց է: Իրականում, այնտեղ «ժողովուրդ» չի

Երդողանը Կը Գա՞յ Հայաստան Ապրիլի 24-ին

ԱՆԻ ՍԱՀԱԿԵԱՆ

Վերջին օրերին թուրքական ու հայկական մամուլը ողողուած է թուրքիայի վարչապետի խորհրդականի պաշտօնում պոլսահայ մտաւորական, մեր հայրենակից էթյեն Մահչուփեանի նշանակման մասին լուրերով: Ու մինչ ոմանք Մահչուփեանի նշանակումը որակում են հայ-թուրքական յարաբերութիւնների կարգաւորման ուղղութեամբ կատարուած հերթական քայլ, ի դէպ այս համատեքստում է դիտուում նաեւ թուրքիայի Զինուած ուժերի Գլխաւոր շտաբի կազմից օրերս Հայոց ցեղասպանութիւնը ժխտող 8 հատորանոց աշխատանքի հեռացման փաստը, «իսկ ոմանք էլ այն որակում են իբրեւ Հայոց ցեղասպանութեան հերքման քաղաքականութեան շարունակութիւն»՝ հարիւրամեայ տարելիցին ընդառաջ, Մահչուփեանին ինքը բացառում է որեւէ կապ իր ազգային պատկանելութեան եւ պետական պաշտօնի նշանակման միջեւ եւ յորդորում իր նշանակման մէջ ինչ-որ առաքելութիւններ չփնտռել: Յատկանշական է, որ այս նշանակումից յետոյ կրկին արդիական է դարձել հարցը՝ արդեօք կը գա՞յ թուրքիայի նախագահ էրդողանը Հայաստան եւ ընդունելով Հայաստանի ԱԳՆ-ի հրաւերը կը մասնակցի՞ Ցեղասպանութեան հարիւրամեայ տարելիցին նուիրուած միջոցառումներին: Բանն այն է, որ խորհրդականի պաշտօնում նշանակուելուց յետոյ իր առաջին հարցազրոյցում Մահչուփեանը բացասական պատասխան է տուել այս հարցի վերաբերեալ՝ «Ապրիլի 24-ին Հայաստան գնալը կարեւոր ժեստ է, որն իրենից առաջ բազմաթիւ այլ ժեստեր է պահանջում: Եթէ այդ ժեստերը արուեն, այդ ժամանակ հնարաւոր է իրավիճակը հասունանայ եւ նախագահը գնայ Հայաստան: Սակայն եթէ իրատես լինենք, ես դա հնարաւոր չեմ համարում: Քանի որ սպասուած է, որ Հայաստանը 2015-ին սովորականից աւելի շատ կոշտութիւն կը դրսեւորի, այդ պատճառով էլ թուրքիան այդ ժեստը չի անի: Շատ բան կայ անելու: Եւ դրանց մի մասը թուրքիան պէտք է անի, միւս մասը՝ Հայաստանը: Եթէ Հայաստանը պարզապէս հրաւիրի ու սպասի, ապա չեմ կարծում որ նախագահը կը գնայ» ասել է նա: Երդմնակալութեան արարողութեանը մասնակցելու հրաւերն ընդունած Հայաստանի արտգործնախարար էրդուարդ Նալբանդեանը, չի շեղանք, որ Անկարայում թուրքիայի նորընտիր նախագահ Ռեջեփ էրդողանի պաշտօնակալութեան արարողութիւնից յետոյ դեռ այս տարուայ Օգոստոսին կարճատեւ գրոյց էր ունեցել էրդողանի հետ եւ նրան յանձնել նախագահ Սերժ Սարգսեանի պաշտօնական հրաւերը 2015 թուականի Ապրիլի 24-ին ներկայ գտնուելու Երեւանում կայանալիք Հայոց ցեղասպանութեան զոհերի յիշատակի ոգեկոչման արարողութեանը: Թուրքական դիւանագիտութեանը հաւատարիմ՝ մինչ օրս հրաւերի կապակցութեամբ յատակ պատասխանի փոխարէն, ահա, նմանօրինակ ուշագրաւ գործըն-

թացներ ու իրադարձութիւններ են տեղի ունենում: Հայաստանեան քաղաքագիտական միտքը էրդողանի այցի հետ կապուած լաւատեսական նոտաներ է յղում՝ այցը համարելով հայ-թուրքական յարաբերութիւնների կարգաւորման նախական խթան, բայց պարզից էլ պարզ է, որ թուրքական դիւանագիտական միտքն այսպիսի մեկնաբանութիւններով «թասիբի գցել» հնարաւոր չէ: Թուրքիայում բոլորից լաւ են հասկանում, որ եթէ էրդողանը գայ Հայաստան, ուրեմն ժխտողականութեան քաղաքականութիւնը կը դառնայ էլ աւելի իմաստազուրկ, հրաւերն արհամարհելն էլ ոչ դիւանագիտական պահուածք, ու այստեղ է, որ պէտք է օգնութեան հասնի ոսկէ միջինը:

Նկատի ունենալով, որ իր երկիր այցելել է արտգործնախարարը՝ ուրեմն էրդողանն ինքն էլ կ'անի նման մի քայլ եւ Երեւան կ'ուղարկի, ասենք, փոխնախարարի մակարդակով մի պատուիրակութիւն, որը որքան պաշտօնական է, նոյնքան էլ ոչ նշանակալի:

Թուրքական պատուիրակութիւնը, բնականաբար հերթապահ խօսքերն ու ցաւակցական տեքստերը կ'արտասանի՝ խոյս տալով Ցեղասպանութիւն բառից, բայց այսուհանդերձ թուրքիան ստիպուած կը լինի առերեսուել պատմութեանն ու թուլացնել ժխտողական դիրքորոշումը:

«ՀԱՅԵԼԻ»

Կայ տարածուած տեսակետ, ըստ որի՝ 2008-ի իրադարձութիւններից յետոյ, երբ պարզ դարձաւ, թէ որքան վտանգաւոր է ներքաղաքական վակուումը, ԲՀԿ-ն «գործուղուեց» ընդդիմութեան դաշտ, այն վերահսկողութեան տակ վերցնելու եւ հայկական քրեա-օլիգարխիկ համակարգի անվտանգութիւնը ապահովելու համար

Բացի այդ, Մառուկեանը հանդիպել էր ՌԴ իշխանութեան ներկայացուցիչներին: Ըստ մամուլի այդ հրապարակումների, հանդիպումների ժամանակ քննարկուել են ՀՀ ապագայ իշխանութեան ձեւաւորման հարցերը: Դրանից յետոյ էլ ԲՀԿ քաղխորհուրդը կայացրել է իր որոշումը:

Կայ տարածուած տեսակետ, ըստ որի՝ 2008-ի իրադարձութիւններից յետոյ, երբ պարզ դարձաւ, թէ որքան վտանգաւոր է ներքաղաքական վակուումը, ԲՀԿ-ն «գործուղուեց» ընդդիմութեան դաշտ, այն վերահսկողութեան տակ վերցնելու եւ հայկական քրեա-օլիգարխիկ համակարգի անվտանգութիւնն ապահովելու համար: Այլապէս, ԲՀԿ-ն որպէս երկրորդ իշխանական կուսակցութիւն անիմաստ էր դառնում:

ԲՀԿ-ն ստանձնեց այդ դերը եւ յաջողութեամբ կատարում է այն՝ ընդդիմադիր դաշտի վերահսկումը եւ այն փակ պահելը հանրային նախաձեռնութիւնների համար: Ընդ որում, ԲՀԿ-ն չի յայտարարում, որ ինքն ընդդիմութիւն է՝ անակնկալներից խուսափելու համար:

Փոխարէնը, այդ դերը վերապահուած էր ՀԱԿ-ին, որի գործառույթն այն էր, որ պէսպիսի հանրութեանը համոզի, որ ԲՀԿ-ն ընդդիմութիւն է: Բացի այդ, ՀԱԿ-ը պէտք է ԲՀԿ-ին «մաքէր» համակարգային խնդիրներից, այդ թւում՝ Մարտի 1-ից, դրա դիմաց

հաւաքում, այլ միայն՝ եռեակի կողմնակիցները, կամ «հակահանրույթ», ինչպէս բնորոշել է Զարուհի Յովհաննիսեանը:

Այս պայմաններում, կարող է լինել միայն ներհամակարգային «իշխանափոխութիւն», որի տրամաբանութեան շրջանակներում էլ գործում է ԲՀԿ-ն: Դա է վկայում այն հանգամանքը, որ մինչ այժմ այդպէս էլ պարզ չէ, թէ որն է եռեակի պահանջը եւ ինչ ժամկէտային կտրուածքով՝ 12 կէտեօրը, արտահերթ, թէ՞ հերթական ընտրութիւնը եւ այլն:

ՀԱԿ-ը որոշ ժամանակ առաջ յայտարարում էր, որ եթէ ԲՀԿ-ն չկատարի իր խոստումները, կը յայտնուի աղբանոցում: Իհարկէ, քիչ ինչ տարօրինակ էր արդէն իսկ աղբանոցում յայտնուած ՀԱԿ-ի նման յայտարարութիւնը: Մի կուսակցութիւն, որը նպաստեց քրեա-օլիգարխիկ համակարգի ծրագրերին եւ նպատակներին, կոծկելով Մարտի 1-ը եւ համակարգի այլ յանցագործութիւնները:

Ժամանակները փոխուել են, եւ ՀԱԿ-ը թերեւս փորձում է ապահովագրել իրեն եւ դուրս գալ աղբանոցից: Բայց ո՞ւմ է պէտք ՀԱԿ-ը աղբանոցից դուրս: Առաւելագոյնը, որ նա կարող է անել՝ ԲՀԿ-ին «աղբանոց նետելն է» կամ «մաքաններ սարքելը»: Այնպէս որ, ԲՀԿ-ին լուրջ վտանգ է սպառնում:

«ԼՐԱԳԻՐ»

Յրատարակելով հայաստանեան մամուլին մէջ լոյս տեսնող տարբեր յօդուածներ «ՄԱՍԻՍ» ամսալստիկումներն չի բաժնէր հոն արտայայտուող բոլոր միտքերը

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈՂՐԱՏԻ ՉՆՁԱԿԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Մրջանի
ԽՄԲԱԳԻՐ
SOPH. UNCALY GALVANIS
ՎԱՐՉԱՎԱՆ ԲԱԺԻՆ
ԼԵՆԱ ՄԱՆՈՒԿԵԱՆ
MASSIS Weekly
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E-Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com
(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August
ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA \$50.00, \$80.00 (First Class)
Canada \$125.00 (Air Mail)
Overseas \$250.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.
Periodicals Postage Paid at Pasadena CA.
Please Send Address Change To MASSIS WEEKLY

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ՀԱԿ-ը Պահանջում է Չթուլացնել Հանրահավաքային Պայքարը

Հայ ազգային գոնկրէսը յայտարարութիւն է տարածել, որում մասնաւորապէս ասուում է.

Ս.Թ. Նոյեմբերի 6-ին Բարգաւաճ Հայաստան կուսակցութեան քաղխորհուրդը որոշում է ընդունել հանրապետութեան բոլոր կարեւոր բնակավայրերում Համաժողովրդական շարժման միասնական գրասենեակներ ձեւաւորելու մասին:

Միասնական գրասենեակների ձեւաւորումն ինքնին վատ գաղափար է, եթէ այն գուցարգուցում է մայրաքաղաքի Ազատութեան հրապարակում ընթացող ակտիւ քաղաքական գործողութիւնների հետ, ինչը լրացուցիչ խթան կարող է ծառայել հենց այդ գրասենեակների արդիւնաւէտ գործունէութեան համար:

Ակտիւ քաղաքական գործողութիւնների անորոշ ժամանակով յետաձգումը կարող է դառնալ ճակատագրական սխալ, քանի որ վարչախումբն այդ ժամանակամիջոցը կարող է օգտագործել սեփական ճամբարն առաւելագոյնս մոբիլիզացնելու եւ Համաժողովրդական շարժման ներսում պառակտումներ առաջացնելու համար:

Նկատի ունենալով նշուած հանգամանքները, Հայ ազգային գոնկրէսը յոյժ անհրաժեշտ է համարում, Համաժողովրդական շարժման տարածքային գրասենեակների ձեւաւորմանը գուցարգաց, որեւէ կերպ չթուլացնել, այլ ընդհակառակը, աւելի թեժացնել ու

շարունակական դարձնել Ազատութեան հրապարակում սկիզբ առած լուրջ քաղաքական գործընթացը:

ԲՀԿ մամուլի խօսնակ, Աժ պատգամաւոր Տիգրան Ուրիխանեանը՝ մեկնաբանելով ՀԱԿ-ի յայտարարութիւնը ասաց, որ ԲՀԿ-ն վերահաստատում է մեր երկրում արմատական եւ խորքային փոփոխութիւններ իրականացնելու վճռականութիւնը:

«Մենք ողջունում ենք ՀԱԿ-ի մեր գործընկերների դրական մօտեցումները համաժողովրդական նոր շարժման տարածքային շտաբների ձեւաւորման աշխատանքները վերաբերելով: ԲՀԿ-ն վերահաստատում է մեր երկրում արմատական եւ խորքային փոփոխութիւններ իրականացնելու վճռականութիւնը:

ԲՀԿ-ն շարժմանը համաժողովրդական եւ առաւել ընդգրկուն տեսք տալու նպատակով պատրաստ է հրապարակային խոշոր միջոցառումների թէ՛ մարզերում, թէ՛ Երեւան քաղաքում, այդ թւում՝ նաեւ վճռական գործողութիւնների Ազատութեան հրապարակում՝ ճիշդ պահին:

Միեւնոյն ժամանակ ցանկանում ենք նշել, որ շարժմանը մասնակից քաղաքական ուժերից իւրաքանչիւրը եւ մասնաւորապէս ՀԱԿ-ի իրաւունքն է՝ ինքնուրոյն կազմակերպել ցանկացած զանգուածային միջոցառում՝ ցանկացած վայրում եւ ցանկացած պահին»:

Փաշինեանը Պահանջում է Բացայայտել Ադրբեջանի Կողմից Ֆինանսաւորուող Պատգամաւորներին

Ես զարմացած եմ, որ վահրամ Բաղդասարեանը տեղեկութիւն ունի, թէ ընդդիմադիր պատգամաւորները ֆինանսաւորում են ալիեւեան նաւթադոլարներով, իսկ ՀՀ ԱԱԾ-ն այդ մասին կամ չգիտի կամ էլ հետաքրքրուած չէ Աժ նախորդ քառօրեային արուած նրա յայտարարութեամբ, Նոյեմբերի 10-ին խորհրդարանի նիստում յայտարարել է ընդդիմադիր պատգամաւոր Նիկոլ Փաշինեանը՝ պատասխանելով ՀՀԿ խմբակցութեան դեկավար վահրամ Բաղդասարեանի աւելի վաղ հնչած հարցին:

Փաշինեանն ԱԱԾ-ին կոչ է արել զբաղուել Բաղդասարեանի յայտարարութեամբ եւ համապատասխան միջոցներ ձեռնարկել այդ դաւաճաններին բացայայտելու համար: «Թող յայտնաբերի ալիեւեան նաւթադոլարներով ֆինանսաւորուող պատգամաւորներին, եթէ այդպիսիք կան, ապա նրանց գործունէութիւնը պէտք է բացացարուի: Իսկ եթէ պարզուի, որ այս դահլիճում նման մարդիկ չկան, ապա ստիպուած գրանցելու ենք, որ Հայաստանի իշխանութիւնների համար Ալիեւը «մշուշ է», որի քողի տակ կատարում են իրենց «մութ գործերը»: Պատգամաւոր նաեւ նշել է, որ հետեւողական կը լինի այդ հարցում:

NEWS.am-ն աւելի վաղ



Ընդդիմադիր պատգամաւոր Նիկոլ Փաշինեան

յայտնել էր, որ վահրամ Բաղդասարեանն ընդդիմադիր պատգամաւորներին մեղադրել էր Ադրբեջանին ծախուած լինելու մէջ: «Ամէն անգամ Հայաստանի եւ Ադրբեջանի նախագահներին հանդիպման նախօրէին խորհրդարանի նիստերի դահլիճում սկսում է ադրբեջանական նաւթադոլարների հոտ գալ»: Բաղդասարեանի խօսքն ընդհատել էին դահլիճում նստած ընդդիմադիր պատգամաւորներ Նիկոլ Փաշինեանը եւ «Ժառանգութեան» անդամ Զարուհի Փոստանջեանը: Խորհրդարանի խօսնակ Գալուստ Սահակեանը պատգամաւորներին կարգի էր հրաւիրել:

Հայաստանի Սահմանային Մաքսակէտերում ԵՏՄ Ներկայացուցիչներ Կը Յայտնուեն

Շուտով Հայաստանի սահմանային մաքսակէտերում Եւրասիական Տնտեսական Միութեան ներկայացուցիչներ կը յայտնուեն՝ հայկական կողմի հետ համատեղ աշխատելու նպատակով: Այդ մասին լրագրողների հետ զրոյցում յայտարարեց ֆինանսների նախարար Գագիկ Խաչատրեանը՝ յաւելելով, որ Եւրասիական Տնտեսական Միութեան անդամակցելու ճանապարհին սա մաքսային ոլորտում միակ փոփոխութիւնը չի լինի եւ այժմ բազմաթիւ հարցեր են քննարկուում:

«Մենք հիմա 240 մաքսային կարգաւորումների վրայ ենք աշխատում: Բաւականին ծաւալուն, բարդ ընթացակարգեր են, երբ որ կ'աւարտուի, դուք տեղեկ կը լինէք», - ասաց Խաչատրեանը:

Ֆինանսների նախարարի խօսքով՝ Հայաստանի եւ Ղարաբաղի միջեւ սահմանային անցակէտ տեղադրելու հարցը փոփոխութիւնների այս փաթեթում ներառուած չէ:

Ազգային Անվտանգութեան Ծառայութեան նախկին ղեկավար, քաղաքագէտ Դաւիթ Շահնազարեանի կարծիքով առաջիկայում Եւրասիական Միութեան ներկայացուցիչներ կարող են յայտնուել նաեւ Ղարաբաղի հետ սահմանին, որտեղ մաքսակէտ տեղադրելու շուրջ ընդդիմախօսների մտահոգութիւնները դեռ ամբողջովին չեն փարատուել:

«Հայաստանի հանրապետութիւնը ընդունում է, որ Եւրասիական սահմանը անցնում է Հայաստանի եւ Արցախի սահմանով, եւ այդտեղ պէտք է լինի մաքսային կէտեր, սա փաստ է, թէ երբ դա կը լինի, դա արդէն ուրիշ հարց է: Ակնյայտ է, որ շատ մօտ ապագայում Ռուսաստանը Եւրասիական Միութեան սահմանները դարձնե-

լու է ընդհանուր մաքսային վերահսկողութեան սահմաններ եւ կենտրոնացուած մաքսային ծառայութիւն է իրականացրել: Դրանից յետոյ հետեւելու են սահմանապահները», - «Ազատութեան» հետ զրոյցում ասաց Շահնազարեանը:

Այս տարուայ Յուլիսին Ազգային Ժողովի նախագահ Գալուստ Սահակեանը եւ վարչապետ Յովիկ Աբրահամեանը բացառել էին Ղարաբաղի հետ սահմանին անցակէտի տեղադրումը: Արդէն Եւրասիական Միութեանը միանալու պայմանագիրը ստորագրելուց յետոյ Գալուստ Սահակեանը նոյն հարցին անորոշ պատասխան էր տուել: Մաքսային ոլորտը վերահսկող ֆինանսների նախարարն «Ազատութեան» հարցին ի պատասխան չբացառեց մաքսակէտի տեղադրման հնարաւորութիւնը:

«Ասում եմ չի քննարկուում, երբ որ քննարկուի՝ լինի, չլինի, դուք կիմանաք», - ասաց ֆինանսների նախարարը:

Առաջիկայում նաեւ Մաքսային ոլորտում բարեփոխումներ իրականացնելու նպատակով Հայաստանը Եւրասիական Միութիւնից 84 միլիոն դոլար է ստանալու: Գագիկ Խաչատրեանը ասաց, որ դա դրամաշնորհ է. - «Տարբեր նպատակների՝ մաքսային ծրագրերի, օրէնսդրական փոփոխութիւնների, բիւջետային աջակցութեան»:

Ֆինանսների նախարարի խօսքով՝ այժմ նաեւ աշխատանքներ են տարւում նոր մաքսակէտերի կառուցման շուրջ: Արդէն յաջորդ տարի 3 նոր մաքսակէտ շահագործման կը յանձնուի: Հարցին, թէ արդեօք առաջիկայում հնարաւոր է արդիականացուի նաեւ Ղարաբաղի հետ սահմանակէտը, Խաչատրեանը պատասխանեց, որ դա դեռ չեն քննարկում:

«Իշխանութեան կը մնանք մինչեւ ԼՂ խնդրի լուծումը».- Գալուստ Սահակեան

Հայաստանում իշխող ՀՀԿ-ն մտադիր է իշխանութեան մնալ այնքան ժամանակ, քանի դեռ չի լուծուել ԼՂՀ միջազգային ճանաչման հարցը: Այս մասին, Նոյեմբերի 12-ին, Աժ-ում լրագրողների հետ զրոյցում նշել է խորհրդարանի նախագահ Գալուստ Սահակեանը:

«Մենք իշխանութեան կը մնանք, քանի դեռ չի լուծուել ԼՂՀ միջազգային ճանաչման հարցը», - ընդգծել է նա:

Դիտարկմանը, թէ գուցէ հենց այդ պատճառով է ձգձգուում ԼՂ խնդրի կարգաւորումը, Աժ նախագահն արձագանքել է, որ հակամարտութիւնը չի լուծուում բացառապէս Ադրբեջանի ապակառուցողական քաղաքականութեան պատճառաւ:

Պատասխանելով հարցին, թէ ինչպէս է վերաբերւում նրան, որ եռեակը մտադիր է հասնել արտահերթ ընտրութիւնների անցկացման: Սահակեանը չի տեսնում Հայաստանում նախագահական եւ խորհրդարանական ընտրութիւնների անցկացման նախադրեալներ ի պատասխան հարցին, թէ



Հայաստանի խորհրդարանի նախագահ Գալուստ Սահակեան

ինչպէս է վերաբերւում նրան, որ ԲՀԿ առաջնորդը մտադիր է նախագահ դառնալ, Սահակեանը նշել է. «Հայաստանի նախագահն է Սերժ Սարգսեանը, եւ հենց որ աւարտուի նրա լիազօրութիւնների ժամկէտը, տեղի կունենան ընտրութիւններ, որոնց կարող են մասնակցել բոլոր ցանկացողները»:

Ըստ ՀՀԿ-ական պատգամաւորի Չի Բացառուում, Որ Եռեակը Կը Պառակտուի

ՀՀԿ փոխնախագահ, Աժ ՀՀԿ խմբակցութեան պատգամաւոր Ռազմիկ Զոհրաբեանը չի բացառում, որ ոչ խորհրդարանական եռեակը շուտով կը պառակտուի: Նոյեմբերի 11-ին, լրագրողների հետ զրոյցում Ռազմիկ Զոհրաբեանը կարծիք յայտնեց, որ եռեակի ներսում տարաձայնութիւնները այն կը հասցնեն պառակտման:

«ԲՀԿ-ի յայտարարութիւններն ու մօտեցումները ուսումնասիրելով՝ հասկանում ես, որ նրանք իշխանափոխութիւն ասելով նկատի ունեն 2017-2018թթ. ընտրութիւնները: Այստեղ արդէն եռեակի կարծիքները չեն համընկնում: Բացի դրանից՝ մենք առաջարկում են երկբեւեռ կառավարման համակարգ, որի մի բեւեռն արդէն կայ՝ ՀՀԿ-ն, իսկ երկրորդ բեւեռն էլ այս պահին է ձեւաւորուում: Թէ որ ուժը կը լինի դոմինանտ, չեմ կարող ասել», - ասաց նա:

ԼՈՒՐԵՐ

ԵՄ-ն Հայաստանում Բարեփոխումներին Աջակցելու Պարտաւորութիւն Է Ստանձնել

Հայաստանի եւ Եւրամիութեան միջեւ համագործակցութիւնը շատ արդիւնաւէտ էր, չնայած որ որոշակի խնդիրներ ծագեցին Ասոցացման համաձայնագրի հետ կապուած: Այս մասին Նոյեմբերի 11-ին Հայաստանում Եւրամիութեան խորհրդատուական խմբի 16-րդ նիստի ժամանակ յայտարարել է ՀՀ-ում Եւրամիութեան պատուիրակութեան ղեկավար, դեսպան Տրեան Հրիսթեան:



Եւրամիութեան դեսպան Տրեան Հրիսթեան

Ըստ նրա՝ արդէն հինգ տարի է՝ Եւրամիութեան խորհրդատուական խումբը աշխատում է Հայաստանում: Համագործակցութեան այս ընթացքում, ընդգծել է Հրիսթեան, ԵՄ-ն Հայաստանում բարեփոխումներին աջակցելու պարտաւորութիւն է ստանձնել: «Այս համատեքստում շատ կարեւոր է, որպէսզի Հայաստանը ԵՄ-ին տեղեակ պահի ԵՏՄ շրջանակում իր յարաբերութիւնների էվոլյուցիայի մասին, որպէսզի հասկանանք՝ ինչպէս ենք շարունակելու հետագայ երկարաժամկէտ համագործակցութիւնը», - ընդգծել է Տրեան Հրիսթեան: Եւրամիութեան խորհրդատուական խումբը, յաւելել է դեսպանը, իրոք արգասաբեր գործունեութիւն է իրականացրել Հայաստանում՝ աջակցելով նախագահի աշխատակազմին եւ իշխանական այլ մարմիններին:

ՀՀ-ԼՂԶ Զօրավարժութիւններին Արցախի Կողմից Մասնակցում Է 30 Հազար Զինճառաղ



Հայկական երկու հանրապետութիւնների ռազմական համագործակցութեան ծրագրի շրջանակներում Նոյեմբերի 6-ից անց են կացում «Միասնութիւն 2014» անունը կրող օպերատիւ-մարտավարական լայնածաւալ զօրավարժութիւններ:

ԼՂՀ ՊԲ-ի կողմից զօրավարժութեանը մասնակցում են աւելի քան 30000 զինճառաղներ, այդ թւում նաեւ զօրահաւաքային ռետուրսից, 1550 միաւոր հրետանային միջոցներ, 600 միաւոր զրահատեխնիկա, 300 միաւոր ՀՕՊ միջոցներ, այդ թւում նաեւ Ս-10ՄԱ ՁՀՀ-ներ, 1300 միաւոր հակատանկային միջոցներ, 160 միաւոր յատուկ տեխնիկայ եւ աւելի քան 3000 աւտոմեքենայ:

Զօրավարժութիւնները անցկացւում են նախատեսուած պլանի համաձայն:

Մասնակից շտաբները, ղեկավարման մարմինները, հրամանատարները եւ ողջ անձնակազմը ցուցաբերում են պատրաստականութեան բարձր մակարդակ՝ յաջողութեամբ իրականացնելով առաջադրուած մարտական խնդիրները:

Թուրքիայի Կանաչների Կուսակցութիւնը Ծանաչում Է Հայոց Ցեղասպանութիւնը

Թուրքիայի Կանաչների կուսակցութիւնը ճանաչում է Հայոց ցեղասպանութիւնը: Այս մասին Ստամբուլում Կանաչների կուսակցութեան նիստի շրջանակում «Twitter»-ում գրել է կուսակցութեան մամուլի քարտուղարը:

NEWS.am-ին փարիզցի լրագրող Ժան Էքեանը յայտնեց, որ Ստամբուլում Կանաչների կուսակցութեան նիստի ժամանակ, որին մասնակցում էին նաեւ Եւրոպայից ժամանած Կանաչների կուսակցութեան ներկայացուցիչներ, թուրքական «Կանաչների» մամուլի քարտուղարը «Twitter» սոցցանցի #greenCouncil էջում գրել է. «Մենք միանշանակ ճանաչում ենք Հայոց ցեղասպանութիւնը»:

Նախագահը Հիւրընկալել Է Ամենայն Հայոց Եւ Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսներին



Նախագահ Սերժ Սարգսեանն Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի եւ Արամ Ա. Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսի հետ:

Նախագահ Սերժ Սարգսեանն հանդիպում է ունեցել Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագոյն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի եւ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսի հետ:

Ինչպէս յայտնում են ՀՀ Նախագահի աշխատակազմից՝ հանդիպմանը քննարկուել են պետութեան եւ եկեղեցու միջեւ ձեւաւորուած սերտ համագործակցութեանը, հայրենիք-սփիւռք կապերի առաւել ամրապնդմանն ու ազգային-եկեղեցական կեանքի կարեւորագոյն խնդիրներին եւ առկայ մարտահրաւէրներին վերաբերող հարցեր, որոնք տեղ են գտել նաեւ ս.թ. նոյեմբերի 11-13-ը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում հրաւիրուած Հայաստանեայց Առաքելական Ս. Եկեղեցու Եպիսկոպոսաց ժողովի օրակարգում:

Հանդիպմանն անդրադարձ է եղել ՀՀ Նախագահի գլխաւորութեամբ գործող Հայոց Ցեղասպանութեան 100-րդ տարելիցին նուիրուած միջոցառումները համակարգող պետական յանձնաժողովի աշխատանքներին, որոնց Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին ակտիվօրէն մասնակցում է իր բոլոր Նուրիապետական Աթոռներով, թեմերով, ծուխերով ու կառուցներով: Զրուցակիցներն անդրադարձել են նաեւ համագոյն կարեւորագոյն խնդիրներին լուծման գործում Հայոց եկեղեցիների կողմից սփիւռքում, միջազգային ու միջեկեղեցական հարթակներում իրականացուող աշխատանքին, Սիրիայում չղաղարող կործանարար պատերազմի հետեւանքով այդ երկրի բնակչութեան հետ միասին ծանրագոյն փորձութիւնների եւ զրկանքների ենթարկուող սիրիահայ համայնքին աջակցութեան

խնդիրներին: Եպիսկոպոսաց համագումարի օրակարգում երկու հիմնական հարց է՝ Հայոց ցեղասպանութեան գոհերի սրբադասումը եւ Սուրբ Մկրտութեան խորհրդին առնչուող փաթեթի ընդունումը:

Այս մասին հաղորդում է 168.am-ը՝ մանրամասնելով, որ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում սկսուել է Հայաստանեայց Առաքելական Ս. Եկեղեցու Եպիսկոպոսաց ժողովը՝ Ամենայն Հայոց կաթողիկոսութեան եւ Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան 76 արքեպիսկոպոսներից ու եպիսկոպոսներից 58-ի մասնակցութեամբ:

1651 թուականից յետոյ՝ անցեալ տարի առաջին անգամ գումարուելով հայ իրականութեան մէջ՝ Եպիսկոպոսաց ժողովը համարուեց պատմական իրադարձութիւն, որով դարաւոր ընդմիջումից յետոյ փորձ էր անում համախմբել Հայ եկեղեցու սրբազան հայրերին:

Յատկապէս սրբադասման հարցը, որ քննարկուում է անցեալ տարուանից, եւ որի համար 2006 թուականից ստեղծուել է միացեալ յանձնախումբ, բոլոր եպիսկոպոսների կողմից չէ, որ միանշանակ է ընդունուում:

168.am-ի հետ զրոյցի ընթացքում նրանցից ոմանք նշել են, որ տարակուսանքի տեղիք տուող որոշ հարցեր՝ արդեօ՞ք ընդունելի տարբերակ է հաւաքական սրբադասումը, չէ՞ որ 1,5 միլիոն գոհերի շարքում եղել են նաեւ անհաւատներ, եղել են ոչ սպանուածներ, այլ՝ դիպուածների պատճառով գոհուածներ, եղել են հաւատուրացներ, որոնք ուրացել են քրիստոնէութիւնը, սակայն յետոյ կրկին սպանուել են:

**OFFICE SPACE FOR RENT
IN PASADENA**

ՎԱՐՁՈՒ ԳՐԱՍԵՆԵԱԿՆԵՐ

1060 North Allen Ave
Pasadena, CA 91104

Գրասենեակները վերանորոգուած
եւ յարմար վարձքերով
Հետաքրքրուողներէն հեռաձայնել՝
(626) 398-0506

ԱՅՍ ՏԱՐՈՒԲԱՆ ԴԵՌՈՒՄՏԱՄԱՐԱԹՈՆԻՆ ԴԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԸ ՎԱՐԴԵՆԻՍ-ՍԱՐՏԱԿԵՐՏ ԾԱՄԲՈՒ ԿԱՌՈՒՑՈՒՄՆ Է



«Հայաստան» Համահայկական Հիմնադրամի հեռուստամարաթոնը այս տարի տեղի պիտի ունենայ 27 Նոյեմբերին եւ ինչպէս նախորդ, այնպէս ալ այս տարուան մարաթոնին գլխուր նպատակը վարդենիս-Մարտակերտ ճամբու կառուցման համար գումարներ հաւաքելն է: «Թերթ»ին հետ ունեցած գրոյցին ընթացքին այս մասին յայտնած է հիմնադրամի գործադիր տնօրէն Արա Վարդանեան:

«Ճանապարհի ընդհանուր երկարութիւնը մօտ 116 քմ. է, որից 16-ը Հայաստանի տարածքում է: Այդ 16 քմ.ի թէ՛ հողային, թէ՛ ասֆալտապատման աշխատանքների ամբողջ արժէքը փոխհատուցել է Հայաստանի կառավարութիւնը՝ շուրջ 1 միլիարդ 600 միլիոն դրամ, եւ այդ աշխատանքները մօտենում են աւարտին, այսինքն՝ Հայաստանի հատուածը կարող ենք ասել, որ 80 տոկոսի չափով ասֆալտապատուած է: Ինչ վերաբերում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան հատուածին, ապա այս տարուայ վերջին կ'աւարտենք հողային աշխատանքները, այսինքն՝ առաջին փուլը, որի վրայ ծախսուած է մօտ 10 միլիոն տոլարի համարժէք դրամ: Ամբողջ ճանապարհն աւարտին հասցնելու համար մեզ անհրաժեշտ է 17 միլիոն տոլար», յայտնած է ան:

Արա Վարդանեան նշած է, որ բացի ճամբաներու շինութենէն, հեռուստամարաթոնին ընթացքին պիտի ներկայացուին բազմաթիւ յատուկ ծրագիրներ: Ան նաեւ յիշած է նախորդ տարի իրականացուած նմանատիպ յատուկ ծրագիրներ, որոնք առկայ պիտի ըլլան նաեւ յառաջիկայ հեռուստամարաթոնին:

«Օրինակ՝ Երեւանում Չայկովսկու անուան երաժշտական դպրոցի ամբողջական վերակառուցման ծրագիրը շատ կարեւոր է. միակ հանրակրթական պրոֆէսիոնալ երաժշտական դպրոցն է եւ շատ կարեւոր էր, որ կարողացանք գտնել մարդկանց, ովքեր համաձայնեցին ֆինանսաւորել այդ դպրոցի վերակառուցումը 1.5-2 միլիոն եւրոյի շրջանակում», ըսած է ան:

Արա Վարդանեան աւելցուցած է. «Նման ծրագիր է Ստեփանակերտում ծնկոտղիական կենտրոնի շինարարութիւնը եւ համալրումը սարքաւորում ներդրում, որը

Ֆրանսիայից մի բարերար է օժանդակել եւ չի ցանկանում, որ իր անունը նշուի»:

«Բայց մեծ ծրագիր է իրականացնում՝ 2 միլիոն եւրոյից աւելի գումարի շրջանակում: Հայաստանում Հնդկաստանի կառավարութեան ֆինանսաւորմամբ Վայոց Ձորի դպրոցներում ստեղծելու ենք համակարգչային դասարաններ, ամբողջ տեխնիկան տրամադրելու է Հնդկաստանի կառավարութիւնը», նշած է ան:

Պատասխանելով այն հարցումին, թէ ինչպէս վերջին տարիներուն, կա՞ն որոշ բարերարներու ու գործարարներու հետ պայմանաւորուածութիւններ՝ հեռուստամարաթոնին ընթացքին գումար փոխանցելու համար, ան յայտնած է, որ ներկայ դրութեամբ որեւէ պայմանաւորուածութիւն չկայ, գոնէ ինք այդ մասին տեղեակ չէ: «Չեմ կարող ասել, գուցէ բարձր մակարդակի վրայ ինչ-որ համաձայնութիւններ կան, բայց ես չեմ տիրապետում, ամէն ինչ յայտնի կը դառնայ բուն մարաթոնի ընթացքում: Շատ կարեւոր է, որ հեռուստամարաթոնի ընթացքում մենք ունենանք յատուկ նուիրատուներ հէնց ճանապարհի համար եւ այդ առումով կ'ուզեմ դիմել լայն հասարակութեանը, ինչպէս որպէսզի բոլորն իրենց հնարաւորութիւնների սահմաններում մասնակից լինեն ծրագրին», աւելցուցած է ան:

Նախորդ տարուան հեռուստամարաթոնին հաւաքուած եւ տարբեր ծրագիրներու իրականացման համար ծախսուած գումարներուն անդրադառնալով՝ Արա Վարդանեան նշած է, որ հաւաքուած շուրջ 21 միլիոն տոլարէն տակաւին հիմնադրամին հաշիւին փոխանցուած է 16.5 միլիոն դրամ:

«4.5 մլն. տոլար դեռեւս հաւաքման պրոցեսում է, այսինքն՝ ոչ թէ չենք ստանալու, այլ կան խոշոր նուիրատուներ, որոնց նուիրատուութիւնները մեզ փոխանցում են մաս-մաս, հէնց նրանք են այդ տարբերակը ընտրել, քանի որ գումարը ուղղում է շինարարութեանը, իսկ ինչպէս գիտենք շինարարութիւնները փուլային ձեւով են իրականացում, ամբողջ գումարը միանգամից անհրաժեշտ չի լինում», ըսած է ան:

ԵՐՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆԸ ԴՅՅԱՍՏԱՆԻՆ ՊԻՏԻ ՏՐԱՄԱԴՐԵ ՄԻՆՉԵՒ 170 ՄԻԼԻՈՆ ԵՐՕ ՕԳՆՈՒԹԻՒՆ



Յառաջիկայ երեք տարիներու ընթացքին Եւրոպական Միութիւնը Հայաստանին 140-170 միլիոն եւրօ պիտի տրամադրէ արդարադատութիւնը, մասնաւոր հատուածը ու հանրային կառավարումը բարեփոխելու համար: Այդ մասին փաստաթուղթ ստորագրուած է Միութեան կեդրոնատեղի Պրիւքսէլի մէջ, Եւրամիութեան ընդլայնման եւ հարեւանութեան քաղաքականութեան հարցերով նոր յանձնակատար Եովհաննէս Հանի ու Հայաստանի տնտեսութեան նախարար Կարէն Ճշմարիտեանի միջեւ:

Իր պաշտօնը ստանձնելու առաջին օրն իսկ՝ հանդիպելով հայաստանեան պատուիրակութեան հետ, Հան ընդգծած է, որ Պրիւքսէլ հաստատակամ է «աջակցելու Հայաստանի արդիականացման ուղղուած ջանքերուն եւ կը շարունակէ քաջաբերել անհրաժեշտ բարեփոխումները»:

Փոխըմբռնման յուշագրի ստորագրումէն ետք յայտարարուած է եռամեայ ծրագրի առաջին փուլին սկիզբը, որով Հայաստան Եւրամիութեանէն 7 միլիոն եւրօ պիտի ստանայ փոքր ու միջին ձեռնարկատիրութիւնը զարգացնելու, եւ 12 միլիոն եւրօ մարդու իրաւունքները պաշտպանելու համար:

Խոստանալով շարունակել աջակցութիւնը բարեփոխումներուն, Եւրամիութիւնը միաժամանակ ընդգծած է, որ տրամադրուելիք օժանդակութեան չափը նախնական է. վերջնական գումարը կախեալ է երկրի կարիքներէն ու բարեփոխումներ կատարելու կառավարութեան յանձնառութիւններէն:

Այս համաձայնութիւններէն բացի, Եւրոպական Միութեան յանձնակատարը ու Հայաստանի

տնտեսութեան նախարարը նաեւ փաստաթուղթ ստորագրած են, որով Պրիւքսէլ յաւելեալ 25 միլիոն եւրօ պիտի տրամադրէ՝ Հայաստանի մէջ գիւղատնտեսութեան ոլորտը զարգացնելու համար:

«Փոքր ու միջին գործարարներուն տրուող աջակցութիւնը երկարաժամկէտ կտրուածքով կը նպաստէ աշխատատեղերու ստեղծման, մասնաւոր հատուածի զարգացման, կ'աւելցնէ Հայաստանի տնտեսական մրցունակութիւնը: Մարդու իրաւունքներու մարզին մէջ իրականացուող նոր ծրագիրը կ'օգնէ բարելաւելու օրէնսդրութիւնը ազատ ընտրութիւններու, կտտանքներու կանխարգիւման, խտրականութեան դէմ պայքարի եւ երեխաներու պաշտպանութեան մարզերը», - յայտարարած է պաշտօնական Պրիւքսէլը:

Յանձնակատար Եովհաննէս Հան տեղեկացուց, որ քննարկումներ տեղի պիտի ունենան, որու ընթացքին կողմերը նստելով մէկ սեղանի շուրջ պիտի յստակացնեն թէ ինչ կ'ենթադրէ Մաքսային Միութեան Հայաստանի անդամակցութիւնը եւ որոնք են ԵՄ - Հայաստան համագործակցութեան յետագայ ոլորտները:

Հայաստանի տնտեսութեան նախարարը իր կարգին շնորհակալութիւն յայտնած է Պրիւքսէլին Հայաստանի դիրքորոշումը հասկնալուն համար, ընդգծելով, որ Երեւանը կ'ուզէ շարունակել համագործակցութիւնը առեւտուրի եւ ներդրումներու մարզերուն մէջ, իրականացնելով բարեփոխումներ տնտեսութեան բոլոր ճիւղերուն մէջ: «Մենք ուզում ենք առաւել գրաւիչ դարձնել մեր ներդրումային դաշտը Եւրոպացի գործընկերներ համար», - ըսած է նախարար Ճշմարիտեան:

Ֆրանսայի կառավարութեան Նոր օրինագիծ

Շարունակուած էջ 1-էն

րութիւնը օրէնսդիրներուն պիտի ներկայացնէ Հայոց ցեղասպանութեան ժխտումը քրէականացնող նոր օրինագիծ մը: Թերթը յիշեցուցած էր, որ Հայոց ցեղասպանութեան ժխտումը քրէականացնելը նախագահ Օլանտի նախընտրական յանձնառութիւններէն է:

Դեսպանը նաեւ տեղեկացուց, որ Ֆրանսայի նախագահ Ֆրանսուա Օլանտ 2015-ի Ապրիլի 24-ին

պիտի գտնուի Երեւան՝ մասնակցելու համար Հայոց ցեղասպանութեան 100-ամեակի կապակցութեամբ կայանալիք յիշատակի արարողութիւններուն:

«Հանրապետութեան նախագահ Ֆրանսուա Օլանտ պաշտօնապէս յայտարարած է, որ գալիք տարուայ Ապրիլ 24-ին՝ Հայոց ցեղասպանութեան հարիւրամեայ տարելիցին պիտի գտնուի Հայաստանի մէջ», - ըսաւ նորանշանակ դեսպան Ժան-Ֆրանսուա Շարպանտիէ:

Նախապայման Իշխանութիւններուն

Շարունակուած էջ 1-էն

Սակայն, իշխող Հանրապետականը կը յայտարարէ, որ այդ նախապայմանը պիտի չկատար-

ուի: Ազգային ժողովի նախագահ, Հանրապետականի փոխնախագահ Գալուստ Սահակեան եռեակի նիստէն յետոյ յայտարարեց որ, Ընտրական օրէնսգիրքը մօտ ժամա-

նակներուն պիտի չբարեփոխուի: Տարիներէ ի վեր Հայաստանի ընդդիմադրութիւնը կը պահանջէ, որպէսզի հրապարակուին ընտրութիւններուն մասնակցողներու անուանացանկե-

րը: Այնք համոզուած են, որ ընտրութիւնները կեղծելու համար իշխանութիւնները կ'օգտագործեն երկրէն գաղթածներու անունները, անոնց փոխարէն քուէարկութիւն կատարելով:

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՁՕՆՈՒԱԾ ՅՈՒՇԱՐՁԱՆԻ ՀԻՄՆԱՐԿԵՔԻ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆ ՖՐԷՉՆՈՅԻ ԳԱԼԻՖՈՐՆԻԱ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀԱՄԱԼԻՐԵՆ ՆԵՐՍ



Կիրակի, Նոյեմբեր 2ի կէսօրէ յետոյ Հարիւրաւոր մարդիկ ներկայ գտնուեցան Ֆրէզնոյի Գալիֆորնիա Պետական Համալսարանի բացօդեայ համալիրէն ներս, ուր պիտի գետեղուի Հայոց Յեղասպանութեան 100ամեակին ձօնուած յուշարձան մը, որ պատրաստ պիտի ըլլայ 2015ին: Պատմական այս առիթով, Հոգեւոր պետեր եւ Հայոց Յեղասպանութեան Հարիւրամեակի Յանձնախումբի անդամները եւ Ֆրէզնոյի քաղաքական կարգ մը պաշտօնեաներ ներկայ գտնուեցան:

Թեմակալ Առաջնորդ՝ Գերշ. Տ. Յովնան Արքեպիսկոպոս Տէր-տէրեան ներկայ գտնուեցաւ սոյն արարողութեան: Իրեն կ'ընկերանային Ֆաուլըրի Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ Հայց. Եկեղեցւոյ Հոգեւոր Հովիւ եւ Կեդրոնական Գալիֆորնիայի Առաջնորդական Փոխանորդ՝ Արժ. Տ. Նոյնի Աւագ-Քհնյ. Հայրապետեան, Երեմի Սուրբ Աստուածածին Հայց. Եկեղեցւոյ Հոգեւոր Հովիւ՝ Արժ. Տ. Ջաւէն Քհնյ. Մարկոսեան, Ֆրէզնոյի Սուրբ Պօղոս Հայց. Եկեղեցւոյ Հոգեւոր Հովիւ՝ Արժ. Տ. Նայի Քհնյ. Պետրոս, ինչպէս նաեւ Բրշ. Էլըն Նոյն Սրկ. ձեռնադրուած եւ Բրշ. Սեան Սրկ. Փալանճեան:

Յայտագրի սկիզբը Ֆրէզնոյի Պետական Համալսարանի Նախագահ ձոզէֆ Գալթրօ խօսք առաւ համալսարանի անունով, անդրադառնալով որ համալսարանէն ներս կ'ուսուցուի հայ ժողովուրդի հարուստ մշակութիւնը ու պատմութիւնը, ինչ որ չափազանց կարեւոր եւ կենսական է ուսանողներուն համար: Օրուան գլխաւոր պատգամը

փոխանց Համալսարանի Հայ Ուսմանց Համակարգող Պաուլօ Տէր Մկրտիչեան՝ շեշտելով, որ 1.5 միլիոն հայեր նահատակուեցան 1915-1923: Ան յայտնեց, թէ Օսմանեան Կառավարութիւնը 1915 թուի Ապրիլ 24ին սկսաւ ձերբակալել եւ սպաննել մեծ թիւով հայ Հոգեւորականներ, գրողներ եւ քաղաքական անուանի դեկավարներ: Յուշարձանի ճարտարապետը պիտի ըլլայ Փոլ Հաչիկեան, որ պիտի գետեղուի համալսարանի համալիրի "Maple Hall"ի վրայ:

Հայց. Եկեղեցւոյ Եպիսկոպոսներ եւ տեղւոյն հոգեւոր առաջնորդներ կատարեցին յուզիչ արարողութիւն մը Հայերէնով եւ Անգլերէնով՝ օրհնելու հողը, որ յատկապէս բերուած էր Հայաստանի Հանրապետութեան:

Թեմակալ Առաջնորդ՝ Գերշ. Տ. Յովնան Արքեպիսկոպոս Տէր-տէրեան աղօթեց, ապա տուաւ իր պատգամը, որուն մէջ ըսաւ. «Հայոց Յեղասպանութեան Հարիւրամեակը պիտի ոգեկոչուի խոր հաւատքով եւ նուիրումով՝ արդարութիւն բերելու մեր սիրելի նահատակներու յիշատակին: Յուշարձանը, որ պիտի կանգնի այս հողին վրայ, մնայուն յիշեցում պիտի ըլլայ բոլոր ժողովուրդներուն Հայ Ազգի մասին, որուն 1.5 միլիոն քաղաքացիները մահացան իրենց Քրիստոնէական Հաւատքին եւ Հայրենիքին համար՝ 1915 թուին տեղի ունեցած Յեղասպանութեան ընթացքին: Յուշարձանը յիշեցում պիտի ըլլայ սերունդներուն՝ գանոնք դատարարակելու Հայոց Յեղասպանութեան եւ պատմական անարդա-

ՄԵԾԱՐԱՆՔԻ ԵՐԵԿՈՅ Ի ՊԱՏԻ ՆԵՐՍԷՍ ՊԱԼԱՅԵԱՆԻ



Երկուշաբթի, Նոյեմբեր 10ին, 2014 Կլենտէյլի Իրանահայ Միութեան սրահին մէջ, մեծարանքի հանդիսութեամբ մը պատուուցեալ ծանօթ բանաստեղծ եւ հեղինակ Ներսէս Պալայեանը (Տէր Մեսրոպեան):

Իրանահայ Միութեան կողմէ կազմակերպուած սոյն միջոցառումին ներկայ էին մեծ թիւով միութենականներ, գրողներ, հասարակական գործիչներ, հայ մամուլի եւ մշակութային միութիւններու ներկայացուցիչներ: Այդ օր միաժամանակ կը գուգադիպէր վաստակաշատ բանաստեղծի ծննդեան 85ամեակին:

Այս առթիւ մեծարեալի գրական վաստակին մասին հանգամանօրէն խօսեցաւ Գալիֆորնիոյ Հայ Գրողներու Միութեան նախկին ատենապետ՝ Գրիշ Դաւթեան: Ան բարձր գնահատեց Ներսէս Պալայեանի գրական վաստակը, յատկապէս վերջերս հրատարակած «Կարօտը Հայի» բանաստեղծութիւններու հատորը: Շնորհալի ասմունքող եւ օրուան հանդիսավար Նունէ Աւետիսեան ապրումով արտասանեց բանաստեղծի քերթուածներէն ընտրուած գողտրիկ հատուածներ:

Սրտի ջերմ խօսքերով հանդէս եկան Իրանահայ Միութեան պատասխանատուներէն՝ Թոմիկ Ալեքսանեան, «Մասիս» շաբաթաթերթի գլխաւոր խմբագիր Տօքթ. Արշակ Գազանճեան: Ան առանձնապէս բարձր գնահատեց Ն. Պալայեանի գեղարուեստական ճաշակը: Անձնական յուշերով եւ բարեմտլթանքներով ելոյթ ունեցան նաեւ տասնեակ մը այլ անձնաւորութիւններ:

Գործադրուեցաւ գեղարուեստական ճոխ յայտագիր մը, որու ընթացքին ունկնդրուեցան Մեսրոպ Պալայեանի բանաստեղծութիւններու հիման վրայ յօրինուած երգեր, ձայնագրուած երգահան Ալեք Բագուկեանի կողմէ: Աւարտին շնորհակալական խօսքով հանդէս եկաւ մեծարեալ Ներսէս Պալայեանը: Միջոցառման երկրորդ մասին տեղի ունեցաւ ճոխ հիւրասիրութիւն եւ «Կարօտը Հայի» գիրքի մակագրութիւնն ու վաճառքը: Յիշարժան երեկոյ մըն էր, որուն մասին պիտի անդրադառնանք յառաջիկային:

Լոս Անճելըսի Հայաստանի Գլխաւոր Հիւպատոսարանի ներկայացուցիչ Տիար Լեւոն Մինասեան իր երախտագիտութիւնը յայտնեց Ֆրէզնոյի Պետական Համալսարանին եւ Հայ Համայնքին: Իր խօսքին մէջ շեշտեց, որ 20րդ դարուն Հայոց դէմ գործադրուած ցեղասպանութեան միջազգային ճանաչումը վերջին երկու տասնամեակներուն նախապատուութիւնը

Լոս Անճելըսի Հայաստանի Գլխաւոր Հիւպատոսարանի ներկայացուցիչ Տիար Լեւոն Մինասեան իր երախտագիտութիւնը յայտնեց Ֆրէզնոյի Պետական Համալսարանին եւ Հայ Համայնքին: Իր խօսքին մէջ շեշտեց, որ 20րդ դարուն Հայոց դէմ գործադրուած ցեղասպանութեան միջազգային ճանաչումը վերջին երկու տասնամեակներուն նախապատուութիւնը

Լոս Անճելըսի Հայաստանի Գլխաւոր Հիւպատոսարանի ներկայացուցիչ Տիար Լեւոն Մինասեան իր երախտագիտութիւնը յայտնեց Ֆրէզնոյի Պետական Համալսարանին եւ Հայ Համայնքին: Իր խօսքին մէջ շեշտեց, որ 20րդ դարուն Հայոց դէմ գործադրուած ցեղասպանութեան միջազգային ճանաչումը վերջին երկու տասնամեակներուն նախապատուութիւնը

Լոս Անճելըսի Հայաստանի Գլխաւոր Հիւպատոսարանի ներկայացուցիչ Տիար Լեւոն Մինասեան իր երախտագիտութիւնը յայտնեց Ֆրէզնոյի Պետական Համալսարանին եւ Հայ Համայնքին: Իր խօսքին մէջ շեշտեց, որ 20րդ դարուն Հայոց դէմ գործադրուած ցեղասպանութեան միջազգային ճանաչումը վերջին երկու տասնամեակներուն նախապատուութիւնը

Լոս Անճելըսի Հայաստանի Գլխաւոր Հիւպատոսարանի ներկայացուցիչ Տիար Լեւոն Մինասեան իր երախտագիտութիւնը յայտնեց Ֆրէզնոյի Պետական Համալսարանին եւ Հայ Համայնքին: Իր խօսքին մէջ շեշտեց, որ 20րդ դարուն Հայոց դէմ գործադրուած ցեղասպանութեան միջազգային ճանաչումը վերջին երկու տասնամեակներուն նախապատուութիւնը

Լոս Անճելըսի Հայաստանի Գլխաւոր Հիւպատոսարանի ներկայացուցիչ Տիար Լեւոն Մինասեան իր երախտագիտութիւնը յայտնեց Ֆրէզնոյի Պետական Համալսարանին եւ Հայ Համայնքին: Իր խօսքին մէջ շեշտեց, որ 20րդ դարուն Հայոց դէմ գործադրուած ցեղասպանութեան միջազգային ճանաչումը վերջին երկու տասնամեակներուն նախապատուութիւնը

Շաբ.բ էջ 18

Bedros S. Maronian
818/500-9585

Siamanto B. Maronian
818/269-0909

SERVING THE COMMUNITY SINCE 1975
More locations and more ways to service your insurance and financial needs

<p>6300 Wilshire Blvd. Suite 1900 Los Angeles, CA 90048</p> <ul style="list-style-type: none"> • Life Insurance • Health Insurance • Group & Individual • Long Term Care • Disability 	<p>805 East Broadway Glendale, CA 91205</p> <ul style="list-style-type: none"> • Estate Planning • Will & Living Trust • Full Annual Review • Mortgage Protection • College Planning 	<p>300 N. Lake Ave. Suite 500 Pasadena, CA 91101</p> <ul style="list-style-type: none"> • Workman's Compensation • Employee Benefits • Annuity • IRA • 401K & 403B
--	---	---

A.B.A. INSURANCE SERVICES

Insurance coverage can help you financially!
Ապահովագրութիւնը Աճիրածեղս է

Coverage & Protection should be on the top of your priority list.

ՅԻՇԱՏԱԿԵԼԻ ԱՅՅԵԼՈՒԹԵԱՆ ՄԸ ԱՌԹԻ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ ՊՈՒԷՆՈՍ ԱՅՐԷՍԻ ԵՒ ՄՈՆԹՎԻՏԵՈՅԻ ՀԱՅՎԱԿԱՆ ԳԱՂԹՕՃԱԽՆԵՐՈՒՆ ՄԷՋ

Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան Կեդրոնական Վարչութեան յանձնարարութեամբ, նաեւ զոյգ հրաւերներով Պուէնոս Այրէսի Ս.Դ.Հ.Կ. Վարիչ Մարմնի եւ Հաճնոյ Հայրենակցական Միութեան, տարւոյս Հոկտեմբեր 22-ին Պուէնոս Այրէս ժամանեցին Ս.Դ.Հ.Կ. Կեդրոնական Վարչութեան անդամ Տէր եւ Տիկ. Վազգէն Գալթագեանը, ինչպէս նաեւ Դոկտ. եւ Տիկ. Աբէլ Քհնյ. Մանուկեանը: Սոցն այցելութիւնը կը նախատեսէր ոչ միայն փոխադարձ ծանօթութիւններ հաստատել արժանի նաեւ համայնքի որոշ ներկայացուցիչներուն եւ անդամներուն հետ, այլ միաժամանակ ներկայացնել դասախօսութիւններու շարք մը Հաճնոյ դիւցազնական հերոսամարտին, ժընեկ մէջ Հնչակեան Կուսակցութեան հիմնադրութեան պատմութեան եւ Քսան Կախաղաններու վերաբերեալ Զուլիցերիոյ մամուլին մէջ կատարուած անդրադարձին մասին:

ՀԱՃՆՈՅ ՀԵՐՈՍԱՍԱՐՏԻ ՈԳԵԿՈՉՈՒՄԸ ՊՈՒԷՆՈՍ ԱՅՐԷՍԻ «ՀԱՃՆ ՏՈՒՆ» ՇԵՆՔԻՆ ՄԷՋ
Ժամանուածի երեկոյեան հիւրերը դիմաւորուեցան Պուէնոս Այրէսի Հաճնոյ Հայրենակցական Միութեան անդամ-անդամու-

բանախօսէր ժընեկէն յատուկ հրաւիրուած Դոկտ. Աբէլ Քհնյ. Մանուկեանը, նիւթ ունենալով Հաճնի ութամսեայ դիւցազնամարտին ձօնուած իր «Հաճնի Նահատակներուն Պատգամը՝ Մեր Յանձնառութիւնը» խորագրով բանախօսութիւնը:

Հաճնոյ Հայրենակցական Միութեան վարչականներէն Տիկին Մարինա Բիրանեան սպաներէն (քասթերէն) լեզուով ներկայացուց օրուան բանախօսը, կարդալով անոր համառօտ կենսագրութիւնն ու զիտական վաստակը: Բանախօսութեան սկիզբը արժանապատիւ դասախօսը ներկաները հրաւիրեց յոտնկայս աղօթքի մը նուիրուած Հաճնոյ դիւցազուն հերոսներու անմեռ հոգիներու լուսաւորութեան:

Արդարեւ, տարբեր տարիքի ներկայացուցիչներէ բաղկացած ունկնդիրներու բազմութիւնը լարուած հետաքրքրութեամբ կը հետեւէր Դոկտ. Աբէլ Քհնյ. Մանուկեանի դասախօսութեան, որ կը ջանար դիւրահաղորդ եւ ապրող զգացումներով ներկայացնել թուրք-քէմալական խուժանին դէմ հաճնցիներու ութ երկար եւ անվերջանալի ամիսներու կուրծք-կուրծքի, թիկունք-թիկունքի, ուսուսի տուած հերոսական դիւցազնամարտի, բայց, ի վերջոյ, օրհասական ինքնապաշտպանութեան պատմութիւնը:



հիններուն կողմէ: Բարի գալուստի խօսք արտասանեց միութեան ատենապետուհի Տիկին Շաքէ Գօփուշեանը:

1915 թուականին Պուէնոս Այրէսի մէջ հիմը դրուած էր «Հաճն Ընկերութիւն» անունով կազմակերպութեան մը, որ մինչեւ 1928 թուականը ունեցած էր փայլուն գործունէութիւն մը, կազմակերպելով պատկառելի դրամահաւաքներ՝ օգնելու համար կարօտեալ հայրենակիցներու: Սակայն դէպի Արժանի կատարուած հայերու զանգուածային գաղթը, նաեւ հաճնցիներու աճող թիւերը Պուէնոս Այրէսի մէջ, անհրաժեշտ դարձուցած էր 4 Հոկտեմբեր 1932-ին ստեղծելու հաճնցիներու նոր՝ «Հաճնոյ Հայրենակցական Միութիւնը», որ 29 Յունուար 1933-ին գումարած իր ընդհանուր անդամական ժողովին մէջ որոշում կայացուցած էր նոյն տարին հրատարակելու իր «Նոր Հաճն» անունով պաշտօնաթերթը:

Հետեւեալ օրը Հինգ շաբթի, 23 Հոկտեմբերի երեկոյեան, Պուէնոս Այրէսի Հաճնոյ Հայրենակցական Միութեան շէնքին մէջ պիտի

Հերոսամարտին կուռ պատմականը ներկայացնէ ետք, արժանապատիւ դասախօսը ներկաներուն փոխանցեց հետեւեալ պատկառազու պատգամը.

«Հաճն մեզի համար աշխարհագրական անուն մը չէ սոսկ, այլ ան ամէն բանէ առաջ հազարաւոր հաճնցիներու նուիրական արիւնով ամրագրուած պատմութիւն է, մեր կրանիթեայ ինքնութիւնն է ան, հպարտութիւն ներշնչող եղելութիւն եւ սրբգործուած հաւաքական յիշատակի մը անժամանցելի ներկայութիւնն է: Հաճնցի ըլլալ՝ գուրագործութիւն մը չէ: Հաճնցի ըլլալ՝ նոյնիսկ ընտրութիւն մը չէ, այլ անշիփութի պատկանելիութիւն եւ ամբողջանուէր առաքելութիւն մըն է: Ան հաճնցի բոլոր հերոսածին սերունդներուն համար աւանդուած սրբազան կտակ մըն է, որ մեր անհատական ու հաւաքական կեանքին մէջ անմնացորդ բովանդակութեան մը աննահանջելի յանձնառութիւնը կը կազմէ: Այլ խօսքով՝ պահանջատիրութիւն մինչեւ վերջ, մինչեւ Հայ Դատին՝ արդար իրաւունքի նուաճումը եւ պատմական ճշմարտութեան

ՍԱՍՆՈՅ ԱՊՍՏԱՄԲՈՒԹԵԱՆ 120-ԱՄԵԱԿԻ ՆՇՈՒՄ ՀԱԼԵՊԻ ՄԷՋ



Կիրակի 9 Նոյեմբերի երեկոյեան, հալէպահայ գաղութէն լայն շերտ մը, աւելի քան 600 հոգի, բերնէ բերան լեցուցեր էր «Եսայեան» հանդիսասրահը, այս անգամ ոգեկոչելու համար պատմական հին ու գրեթէ մոռցուած դէպք մը, որ արդէն ունի 120 տարուան վաղեմիութիւն: Մասնոյ Ա. ապստամբութիւնը՝ Մեծն Մուրատի գլխաւորութեամբ:

Ձեռնարկը կազմակերպուած էր Ս.Դ.Հ.Կ.ի Տիրուհի Ուսանողական-Երիտասարդական Միութեան կողմէ, ու պէտք է շեշտել՝ թէ կրցեր էր համախմբել տարբեր շրջանակներէ մեծաթիւ ներկայացուցչական դէմքեր ու մշակութասէրներ, որոնք հաճնցի հետեւեցան յայտագրին: Կոկիկ ու տպաւորիչ յայտագիր մը, որուն ընթացքին յիշատակուեցան զօր. Անդրանիկն ու Գէորգ Չառուշը, Հրայր Դժոխքն ու Տամատեանը: Ակնյայտ էր, որ ձեռնարկին յաջող կիրարկումին համար Հնչակեան շրջանակը զօրաշարժի ենթարկած էր իր ամբողջ կարողականութիւնը:

Յայտագրին առիւծի բաժինը պր. Յակոբ Կիւլվարդեանի կողմէ բեմադրուած թատերական ներկայացումն էր, ուր կ'երեւէին Սուլթան Համիտն ու իր գործակատարները մէկ կողմէ, ու Մեծն Մուրատն եւ իր գինակից հայդուկները՝ միւս կողմէ: Ընդմիջաբար, կը ներկայացուէին պատմական դրուագներէ ընթերցումներ, պարեր, ազգաշունչ երգեր: Բեմական ներկայացումը, տեղ-տեղ,

խնդուք կը յառաջացնէր իր ծիծաղաշարժ պատկերներով, տեղ-տեղ ալ կը խոնաւցնէր մեր աչքերը՝ իր փոխանցած ազդու եւ յուզիչ պատգամներով:

Ձեռնարկին Բ. բաժնով՝ յարմար տեսնուած էր հրապարակաւ պարզեւատրել Հալէպի Հնչակեան շրջանակէն խումբ մը վեթերան ընկերներ, որոնք անցեալին, տարիներով, անսակարկ ծառայութիւն բերած էին կուսակցութեան, ակումբին ու Կիլիկեան ձեռնարանին: Այսպէս, բեմ հրաւիրուելով՝ յուշամետալով մը պարգեւատրուեցան Սարգիս Զգուշեան, Յակոբ Օզճեան, Ժան Տէր Գէորգեան, Սարգիս Գուգուեան, Յակոբ Ապէճեան, Բաճճի Բազարեան եւ օրդ. Անայիս Զմանեան:

Երեկոյին եզրափակիչ խօսքը կատարեց վեր. Յարութիւն Սէլիմեան, որ ունեցաւ շատ խանդավառ ու գոտեպնդիչ ելոյթ մը: Զատագովեց մեր գաղութէն ներս պարգուած միասնական ոգին, ու Մասնոյ ապստամբութեան ակնարկելով՝ յիշեցուց որ հարկը եւ աւելի տարիներէ ի վեր, գործե ունինք թուրքին հետ: Վերապատուելին, ինչպէս միշտ, անգամ մը եւս իր ափսոսանքը յայտնեց, Հալէպը լքողներուն ու երկրէն հեռացողներուն համար եւ հակադրաբար՝ այն տեսակէտը պաշտպանեց, թէ հարկ է մնալ, կառչիլ Հալէպին, խնամել ու վերականգնել Հալէպը:

Լ. ՇԱՌՈՅԵԱՆ «Գաւճաասար»

վերականգնումը՝ դէմ յանդիման ժամանակին, քաղաքակիրթ ազգերու ընտանիքին մէջ եւ միջազգային-պետական հանրութեան առջեւ»:

Ելոյթի աւարտին ներկաները շնորհաւորութեան անկեղծ գնահատականով եւ երախտագիտութեան զգացումներով շրջապատեցին օրուան բանախօսը, անոր ուղղելով նիւթին վերաբերեալ բազմաթիւ հարցումներ:

Վերոնշեալ բանախօսութիւնը գուրահեռաբար սպաներէնի թարգմանեց Տիար Ռուբէն Մոզեանը:

ԲԱՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ Ա.Դ.Հ.Կ. «ՇԱՐԺՈՒՄ» ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԵԱՆ ՅԱՐԿԻՆ ՄԷՋ

Շաբաթ, 25 Հոկտեմբերի յետմիջօրէին, Պուէնոս Այրէսի

Ս.Դ.Հ.Կ. «Շարժում» Մշակութային Միութեան վարիչ Մարմնին հրաւերով, Միութեան շէնքի սրահին մէջ կրկին դասախօսութեամբ մը ելոյթ կ'ունենար Դոկտ. Աբէլ Քհնյ. Մանուկեանը: Օրուան բանախօսը հանդիսականներու գնահատելի բազմութեան հայերէն եւ սպաներէն լեզուներով ներկայացուցին Ս.Դ.Հ.Կ. Կեդրոնական Վարչութեան անդամ Ընկ. Սամօ Սարգիսեանը եւ իր ազնուափայլ Տիկինը՝ Անի Մուշեան-Սարգիսեանը: Տ. Աբէլ այս անգամ զեկուցեց «Հնչակեան Կուսակցութեան Կազմաւորումը Ժընեկի մէջ Եւ Հնչակեան Քսան Կախաղաններու վերաբերեալ Անդրադարձը Զուլիցերիոյ Մամուլին Մէջ» նիւթը: Բծախնդրօրէն պատրաստուած ուսումնասիրութիւնը, որ զեկուցաբերին կողմէ կ'ուղեկցուէր

ԹՈՒՐՔԻԱՅԷՆ ԵՐԵՍ ԹԵՔԱԾ ԻՐԱՆՆ ՈՒ ՅՈՐԴԱՆԱՆԸ ՋԵՐՄՕՐԷՆ ԸՆԴՈՒՆԵՑԻՆ ՉՈՐՍ ՅԱՅ ՂԵԿՎՎԱՐՆԵՐ

ՅԱՐՈՒԹ ՍԱՍՈՒՆԵԱՆ
«Քալիֆոնիա Քուրիքը» թերթի
հրատարակիչ եւ խմբագիր

Վերջին ամսուան ընթացքին հայերը ընդլայնեցին իրենց պատմական կապերը արաբական եւ իսլամական աշխարհի հետ՝ Հայաստանի նախագահին եւ Երուսաղեմի հայոց պատրիարքին միաժամանակեայ այցերով Յորդանանի Թագաւորութիւն, եւ Հայաստանի վարչապետին ու Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Ա. կաթողիկոսի այցելութիւններով Իրանի Իսլամական Հանրապետութիւն:

Թէեւ նման արտերկրեայ այցելութիւններ սովորական բնոյթ կը կրեն, սակայն շիի Իրանի եւ սիւննի Յորդանանի կողմէ չորս հայ ղեկավարներուն նկատմամբ ցուցաբերուած բացառիկ ջերմ ընդունելութիւնը կ'արտացոլային այս իսլամական երկիրներուն սերտ յարաբերութիւնները քրիստոնեայ հայ ժողովուրդին հետ եւ դժգոհութիւնը՝ Թուրքիոյ կառավարութեան վարած արմատական իսլամական քաղաքականութեան նկատմամբ:

Ընդամէնը քանի մը տարի առաջ բազմաթիւ արաբներ եւ իսլամներ կ'ողջունէին Թուրքիոյ վարչապետ, այժմ նախագահ Ռեճեփ Էրտողանը, որպէս՝ նորօրեայ սուլթանի, որ կը պաշտպանէր իրենց ազգային եւ կրօնական ձգտումները: 2010 թուականին Յորդանանը, Լիբանանը, Սուրիան եւ Թուրքիան որոշած էին ստեղծել ազատ առեւտուրի գոտի՝ իրենց տնտեսական համագործակցութիւնը ամրապնդելու համար: Սակայն շատ չանցած, նեցուկ կանգնելով Իսլամ եղբայրներուն եւ Ժհատականներու արիւնարբու սպանդներուն՝ ընդդէմ քիւրտերու, եգիպտացիներու, շիիներու, ալեւիններու եւ քրիստոնեայ փոքրամասնութիւններու, էրտողանի մենատիրական եւ անխոսեմ վարքագիծը վանեց Միջին Արեւելքի գրեթէ բոլոր պետութիւնները: Սուրիոյ հետ սիրոյ բերկրանքը արագօրէն վերածուեցաւ բացայայտ թշնամանքի, իսկ Եգիպտոսի, Իրանի, Յորդանանի, Սէուտական Արաբիոյ, Արաբական Միացեալ Էմիրութիւններու եւ յատկապէս Իսրայէլի հետ Անգարայի յարաբերութիւնները դարձան հակոտնեայ:

Հաւանաբար Թուրքիոյ հետ այս տարածաշրջանային լարուածութիւնը կարեւոր դեր խաղաց չորս հայ անձնաւորութիւններու ոգեւորիչ ընդունելութեան մէջ՝ Իրանի եւ Յորդանանի ամէնէն բարձրաստիճան պաշտօնատարներուն կողմէ, եւ անոնք ջերմ եւ արդիւնաւէտ քննարկումներ ունեցան իրենց փոխարքարձ շահերու ու մտահոգութիւններու վերաբերեալ: Ահա անոնց այցելութիւններուն գլխաւոր պահերը.

- Նախագահ Սերժ Սարգսեան հանդիպում ունեցաւ Յորդանանի Թագաւոր Ապտալլա Երկրորդի, վարչապետ Ապտալլա Անսուրի, խորհրդարանի նախագահ Ապտել Ռաուֆ Ռաուապտէի եւ Ներկայացուցիչներու պալատի նախագահ Աթեֆ Թարաունէի հետ: Այցելութեան ընթացքին Երեւանի եւ Ամմանի քաղաքապետները քոչըր քաղաքներ հռչակելու մասին համաձայնագիր ստորագրեցին: Երկու պետութիւններուն ղեկավարները

որոշեցին ստեղծել միջխորհրդարանական բարեկամութեան խումբեր եւ ընդլայնել իրենց համագործակցութիւնը գրասաշրջութեան, ուժանիւթի, գիւղատնտեսութեան եւ առողջապահութեան բնագաւառներուն մէջ: Նախագահ Սարգսեան իր երախտագիտութիւնը յայտնեց Յորդանանի ղեկավարութեան՝ 1915 թուականի Հայոց ցեղասպանութեան ժամանակ հայ փախստականներուն ապաստան տալու եւ ներկայիս Յորդանանի հայ համայնքի կարիքներուն յատուկ ուշադրութիւն դարձնելուն համար: Հայաստանի նախագահը իր շնորհակալութիւնը յայտնեց Հիւսէյն Իպըն Ալի ալ Հաշիմիի՝ 1917 թուականի ուղեւորին համար, որով մաս յորդորած էր հաւատացեալ մահմետականները՝ աջակցելու Յեղասպանութեան հայ գաղթականներուն. «Պաշտպանեցէ՛ք զանոնք այնպէս, ինչպէս կը պաշտպանէիք ձեր անձը, ձեր ունեցուածքը եւ ձեր զաւակները: Նախագահ Սարգսեան նաեւ յարգանքի տուրք մատուցեց հանգուցեալ Հիւսէյն Թագաւորի յիշատակին, որ 1988 թուականի աղէտալի երկրաշարժէն անմիջապէս ետք խիստ անհրաժեշտ մարդասիրական օգնութիւն ուղարկած էր Հայաստան: Այնուհետեւ նախագահը ներկայ գտնուեցաւ Երուսաղեմի հայոց պատրիարք Նուրհան արք. Մանուկեանի կողմէ Սուրբ Կարապետ եկեղեցւոյ օծման պատմական արարողութեան՝ Յորդանան գետի ափին, ուր մկրտուած էր Յիսուս Քրիստոս: Սրբազան վայրին մէջ եկեղեցւոյ հողը մեծահոգ բար Նուրհան էր Յորդանանի կառավարութիւնը: Հետաքրքրական է, որ երբ Թուրքիան կ'օգնէ եւ կը դրդէ Ժհատական անբեկիչները՝ ոչնչացնելու Հայոց ցեղասպանութեան եկեղեցի-յուշահամալիրը Տէր Զօրի մէջ, Յորդանանի կառավարութիւնը կ'օժանդակէ Յորդանան գետի ափին հայոց եկեղեցւոյ կառուցումին...

- Իրան կատարած իր կարճատեւ այցի ընթացքին Հայաստանի Հանրապետութեան վարչապետ Յովիկ Աբրահամեան հանդիպեցաւ նախագահ Հասան Ռոհանիի հետ եւ շարք մը պայմանագիրներ ստորագրեց ուժանիւթի, գիւղատնտեսութեան եւ մշակոյթի վերաբերեալ: Յ. Աբրահամեան նախագահ Ռոհանիի փոխանցեց Հայաստանի նախագահին հրաւերը՝ ներկայ գտնուելու 2015 թուականի ապրիլ 24-ին Երեւանի մէջ կայանալիք Հայոց ցեղասպանութեան գոհերու յիշատակի ոգեկոչման արարողութեան: Վարչապետը, եօթը նախարարներու ուղեկցութեամբ, նաեւ հանդիպումներ ունեցաւ Իրանի առաջին փոխնախագահ Իսհաք Ճահանկիրի, արտաքին գործոց նախարար Մոհամետ Ճաուատ Զարիֆի, քարիւղի նախարար Պիժան Նամտար Զանկանէի եւ Սպահանի նահանգապետ Ռասուլ Զարկարփուրիի հետ. վերջինս բարձր գնահատեց հայ համայնքին դերը Սպահանի զարգացման գործին:

- Արամ Ա. կաթողիկոս հանդիպեցաւ Իրանի խորհրդարանի նախագահ Ալի Լարիժանիին, որ բարձր գնահատեց իրանահայ համայնքին դերը. Իրանը միշտ մեծ յարգանքով վերաբերած է հայ

ՍԱԳՕ ԱՐԵԱՆ

Պոլսահայ լրագրող եւ թրքական «Րատիքալ» եւ «Զաման» թերթերու սիւնակագիր՝ Էթիէն Մահչուպեանի Թուրքիոյ վարչապետի Ահմետ Տաւուսօղլույի առաջին խորհրդական նշանակելու լուրին դիմաց անձնապէս կը սպասէի, որ սիւնակագրային մամուլը աւելի մեղադրական ոճով մը գրէր: Կարգացած բոլոր կարճ նշմարներուն մէջ երեւելի էր զգուշութիւն եւ հոն դատապարտումի խօսքեր ընդհանրապէս չկային:

Այս մէկը յառաջընթաց կարելի է նկատել մանաւանդ, որ Թուրքիոյ մէջ կատարուած որեւէ դէպք մեր կողմէ (նկատի ունիմ հայկական սփիւռքին կողմէ) կ'ընդունուի հետտորական խօսքերով, մեղադրանքով եւ «դաս տալու» հնամենի ոճով:

Մահչուպեան, ընդունինք կամ ոչ, Թուրքիոյ մտաւորականութեան երեւելի ներկայացուցիչներէն է եւ գործակիցն ու ուղեկիցը Հրանդ Տինքին, որուն գործունէութիւնը եւ ապա նահատակութիւնը կոչուած էին նոր ուղի մը բանալ թէ՛ Թուրքիոյ եւ թէ՛ սփիւռքի համար:

Ասկէ առաջ ալ գրած եմ, որ Հայաստանը ու մանաւանդ սփիւռքը Հրանդի նահատակութիւնը նոր ուղեկիչի մը վերածելու կարեւոր առիթը կորսնցուցին ու խօսեցան, գրեցին, բողոքեցին Հրանդը սպաննող կողմին մասին՝ հնչեցնելով հերթական դարձած ստեղծութիւնը:

Հրանդը մեզմէ գողցողը, Հրանդը սպաննողը խորքին մէջ Հրանդի ծրագրեր գողցաւ, ոչ թէ Հրանդ Տինք մարդը միայն:

Բացի ասկէ, այստեղ պէտք է նաեւ նկատել, որ մինչեւ վերջերս սիւնակագիր էթիէն Մահչուպեան Հրանդի նահատակութեանէն ետք վարած է «Ակօս»ի գլխաւոր խմբագիրի պաշտօնը: Մեզի համար պարզ է, թէ թերթի հիմնադիրին ու անոր ոգի տուող նահատակին ընկերը ինչո՞ւ այդքան արագ հեռացաւ գլխաւոր խմբագիրի պաշտօնէն: Թերեւս ոճի եւ գործելու տարբերութեան խնդիր մը կար ու այդ խնդիրը մնաց լուրթեան շղարշին տակ:

Հիմա կարեւորը նշանակման հարցը մատի փաթեթոյի չվերածելն է, կամ նոյնիսկ երկար բարակ քննարկումներու դուռ չբանալը: Պէտք է սպասել արդիւնքներուն:

Մահչուպեան իր պաշտօնի ստանձնումէն անմիջապէս ետք հարցազրոյց մը տալով մեզի յիշեցուց, որ Թուրքիոյ համար թիւ մէկ խնդիրը հայկական հարցը չէ եւ իրաւացի էր: Ան նաեւ ըսաւ, որ ինք կարեւոր ճիգեր պիտի գործադրէ հայ-թուրք յարաբերութիւններու ընդհանուր գործընթացներուն առումով:

Պոլսահայ կարգ մը շրջանակներու համար Թուրքիոյ իշխանութիւններուն Մահչուպեանի այս կարեւոր պաշտօն տալու քայլը միտուած է հայկական սփիւռքին հետ խօսակցութեան նոր հարթութիւն մը ստեղծելու: Ու հակառակ հերթական «հայ ըլլալը վերաւորանք մը» համարելու անտեղի խօսքերուն, կը կարծեմ որ Թուրքիոյ համար աւելի նպատակաշարժար է ուղղակիօրէն խօսք բանալ սեղանին վրայ եղող կարմիր սաւանով փակուած բոլոր թեմաներուն

մասին: Այստեղ պէտք է կարեւորել Մահչուպեանի եւ իր նմաններուն դերը, ու գաղտնիք չէ, որ Թուրքիոյ հետ խօսակցութեան ընդհանուր պրիսմակին մէջ կարեւոր ըսելիք ունի նոյն թրքահայութիւնը: Ի վերջոյ Մահչուպեան իր գրպանին մէջ ունի թրքական անցագիր ու այդ մէկը աւելի իրաւական հիմքերու կրնայ տանիլ խօսակցութիւնը:

Իրաւական հիմքի խնդիրը սփիւռքին համար այդքան ալ կարեւոր օրակարգ մը չէ: Հարիւր տարի կ'ընէ եւ հայկական սփիւռքը կը շարունակէ նոյն լողունները եւ չի մոռնար ամէն առիթի համաժողովներ ընել ու փակ սենեակներու մէջ պահել ցեղասպանութեան օրակարգը: Ինչո՞ւ: Որովհետեւ այդ մօտեցումը գործնական աշխատանքի չի կարօտիր: «Կարեւոր»ը պալարը եւ թոյնը հայ մարդու մարմնին մէջ հանգիստ ձեւով պահելու գործընթացն է: Վէրքը պահելու եւ հիւանդութեան հետ ապրիլը աւելի հեշտ է, քան՝ վիրաբուժութեան ենթարկուիլը կամ «դանակի տակ պառկիլը»:

Հարիւր տարի այդ հիւանդութեան հետ ապրելէ ետք, վստահ եմ, որ ժամանակը եկած է, որ մտածուի այդ ախտերը արեւուն հանելու մասին: Մեր հիւանդութեան համար բուժում տուողը էլիզէի կամ Սպիտակ Տան նախագահները չեն: Անոնց բերնէն ծորած եղեռն կամ ջարդ բառերը ոչ մէկ օգուտ կրնան տալ:

Ուսքը կտրական որոշումներու մասին չէ: Ուսքը նոր ընթացքներ ստեղծելու մասին է ու այս քոնթէքստին մէջ ինչքան հլու եւ անօգուտ կրնայ հնչել «պահանջատիրութիւն» եզրը, երբ ան իրաւական, մարդկային, դատական եւ խորքային հիմքերով չի դրուիլ վերը յիշուած եւ կարմիր սաւանով փակուած սեղանին:

Այդ կարմիր սեղանին շուրջ պիտի նստին սփիւռքը ներկայացնող բոլոր կողմերը՝ Եկեղեցին, կուսակցութիւնները, հայրենակցական եւ բարեսիրական միութիւնները, անհատ գործիչները: Ու նոյն սեղանին վրայ պիտի ըլլան թրքահայատակ հայերը, որոնց անունով խօսողներէն մէկը նաեւ իրաւական հիմք ունի եւ կը կոչուի էթիէն Մահչուպեան:

Այս մէկը ապագայի սցենար է ու այդ ապագայ պէտք է հեռացնել: Կը մնայ հարց տալ, որ՝ արդեօք սփիւռքը պատրաստ է նման քայլի մը, թէ՛ հերթական անգամ կ'ուզէ ե՛ւ քնանալ ե՛ւ քնացնել արդէն հարիւր տարիէ ի վեր մեր հետ ապրած, մեր հետ մեծցած, մեր հետ ծերացած մեր հետ սերտաճած ցաւը: Այստեղ արդարացի մօտեցում մը ունենալու համար պէտք է նշել, որ գոյութեան դաշտ սկսած են գալ նոր մարմիններ, որոնք նպատակ ունին նոր մէխանիզմներով ճանապարհ բանալ եւ նոր հարթութեան տանիլ վերը դրուած գործընթացները: Այս մասին պիտի խօսիմ աւելի ուշ:

Հայաստանի մասին չեմ խօսիր, որովհետեւ կը հաւատամ, որ ցեղասպանութեան հիմնական իրաւատէր կողմը հայկական սփիւռքն ու թրքահայութիւնն են:

Massis Weekly

Volume 34, No. 42

Saturday, November 15, 2014

Azerbaijan Shoots Down Karabakh Military Helicopter



STEPANAKERT -- A Mi-24 helicopter of the Nagorno Karabakh army was shot during a training flight as result of ceasefire violation by the Azerbaijani armed forces at about 1pm local time.

According to the NKR Defense Ministry, the attack took place at the eastern section of the line of contact between Azerbaijan and Nagorno Karabakh. The Azeris have continued firing in the direction of the helicopter crash site.

The downing of the helicopter at the line of contact with Artsakh was an unprecedented provocation, which resulted in the escalation of the situation, Spokesman for the Armenian Ministry of Defense Artsrun Hovhannisyan said.

"Senseless are the assertions of the Azerbaijani side that the Armenian helicopters attacked their positions. The investigation of the debris of the helicopter will prove it was not armed," the Spokesman said.

"The Azerbaijani side continued to aggravate the situation even after the helicopter had been shot down. Moreover, the shelling from the Azerbaijani side was making it impossible to ap-

proach the pilots," Hovhannisyan said.

"The consequences of this unprecedented escalation will be very painful for the Azerbaijani side and will remain on the conscience of the military-political leadership of Azerbaijan," he said.

The commander of the helicopter was Major Sergey Sahakyan, the Spokesman said, adding that further information about the fate of the crew would be provided.

According to Russia's Interfax news agency 3 servicemen of Karabakh military were killed in the attack.

Armenian MFA: Baku bears full responsibility

In a statement released on Wednesday the Armenian Ministry of Foreign Affairs strongly condemned the downing of the Mi-24 helicopter.

"Before and after every high-level meeting targeted at the settlement of the Karabakh issue, Baku resorts to new provocations to frustrate the negotiation process and undermine the efforts of Armenia and the international

Continued on page 3

France Working On New Armenian Genocide Bill

YEREVAN — France's President Francois Hollande has instructed his government to draft a new law that would make it a crime to deny the 1915 Armenian Genocide in Ottoman Turkey, a senior French diplomat said on Wednesday.

"In accordance with the president's instruction, the French government ... is working on the new bill that would address objections made by the Constitutional Council," Jean-Francois Charpentier, the new French ambassador to Armenia, told a news conference.

Charpentier said the bill is being drafted by the French Ministry of Justice. But he could not say when it will be approved by the government and sent to the French parliament.



The parliament's two houses already passed such a law in December 2011 and January 2012, a move that was orchestrated by Hollande's predecessor Nicolas Sarkozy. France's con-

Continued on page 2

US Recognition of the Armenian Genocide Will be the Biggest Nightmare for Turkey

ISTANBUL -- Turkey needs to develop a strategy to counter pressure to acknowledge the World War I killings of Armenians as a genocide as the 100th anniversary of the massacres looms, a top Turkish diplomat said Monday, Agence France Presse reports.

Altay Cengizer, director general for policy planning at the Turkish foreign ministry, told the Hurriyet daily that U.S.-based Armenian Diaspora groups saw the centenary as an opportunity to prove that genocide was carried out and planned by the Ottoman authorities.

He likened the anniversary to a "penalty shot" that some saw as a chance to settle the issue, adding that the biggest nightmare for Turkey would be for the United States to recognize the mass killings and deportations as genocide.

"We are challenging the fact that it was a penalty. But they will take their chance," he said.

He made it clear that Turkey — which has always categorically rejected the term genocide — had no intention of shifting its position.

"Genocide is a political concept. Turkey does not deserve to appear before the world as a nation that committed genocide," he said.

Cengizer said he had just returned from Washington and saw that "a great campaign of accusations" was being prepared by Armenian diaspora groups.

"Their aim is to leave Turkey with a past that it won't be able to overcome. And 2015 is their target," he said.

"Turkey will make every effort to say what we believe is right against these claims, which target our very identity," said Cengizer.

"But time will tell how successful this is. If we are not successful we are going to have to determine a strategy for post-2015. There is no other way," he said.

President Obama Received \$7,000 Worth Gift from Azeri Officials in 2013



WASHINGTON, DC -- Top US officials, including President Barack Obama and first lady, appear to have received expensive gifts from Azeri officials last year, according to the State Department's annual accounting of gifts published in the Federal Register on Tuesday.

Elin Suleymanov, Azeri Ambassador to the US, presented President Obama with a large Azerbaijani rug with red, white and blue geometric designs worth \$6,560 on December 5th 2013, while first lady Michelle Obama received a traditional Azerbaijani red headscarf worth \$435, according to the official records.

Secretary of State John Kerry also was handed by the ambassador a 24.5' x 39' hand-woven silk rug worth approximately \$760, last December in Washington DC, while his then-top diplomat to Baku Richard Morningstar was given a 39.25' x 47.25' silk carpet

last November worth \$625.

Safar Abiyev, Azerbaijan's former defense minister presented Chuck Hagel, Secretary of Defense wine serving set worth of \$600, during his trip to Washington, DC last August.

Besides gifts, the Azeri government officials also appeared to have upgraded a bunch of top US gov't officials travels to business class while flying from Baku to Paris last August, according to the official records.

The State Department's report comes just hours before several top American elected officials are reportedly to gather tonight at the luxury gala dinner hosted by Ambassador Suleymanov and a son of an Azeri multi-billionaire minister in the US Capital, Contact.az reports.

Dozens of guests from the US administration, Congress, diplomatic corps and think tanks are estimated to

Continued on page 4

Armenia to Reestablish Interior Ministry

YEREVAN (RFE/RL) — Armenian Prime Minister Hovik Abrahamian has advocated further structural changes in his Cabinet, saying that the Ministry of the Interior that was reorganized into the National Police Force in 2002 will be reestablished.

Addressing reporters in the southern resort town of Jermuk on November 7, Abrahamian defended a “gradual optimization” of the government system, saying 19 ministries is “too many for Armenia.” The PM said several government structures would be merged into a new Interior Ministry.

Earlier this week the Armenian government already endorsed a number of readjustments in its current structure, asking the parliament to approve the merger of the ministries of emergency situations and local government and the establishment of a new ministry to be tasked with advancing economic integration and reforms stemming from Armenia’s international commitments, including its planned membership in the Russian-led Eurasian Economic Union (EEU) beginning next year.

Talking to reporters while visiting the southern resort town of Jermuk

on Friday, Premier Abrahamian defended a “gradual optimization” of the government system.

Opposition groups have already criticized the government over its planned readjustments.

Talking to RFE/RL’s Armenian Service (Azatutyun.am) on Thursday, Mikayel Melkumian, of the Prosperous Armenia Party, challenged the wisdom of the decision to set up a new ministry in charge of international economic integration. “What is the big deal about it that we cannot entrust this integration to the already existing ministry of economy?” he queried sarcastically, implying that the creation of the new ministry is potentially another waste of taxpayer money.

Opposition Heritage party lawmaker Zaruhi Postanjian, meanwhile, highlighted the fact that next year’s draft budget envisages no separate funding for the establishment of the new ministry connected with membership in the EEU. She claimed it showed that the authorities themselves had hoped to avoid accession to the trade bloc before they were “forced” to sign the deal last month.

Telethon 2014 to Benefit Construction of Vardenis-Martakert Highway



YEREVAN — Proceeds from the 2014 Telethon of the Hayastan All-Armenian Fund, to be held on November 27, will be used to implement the final phase of the Vardenis-Martakert Highway construction project.

With funds raised during the 2013 Telethon, the first phase of the project was kicked off in early 2014 and is slated to be completed by year’s end. To date, crews have performed earthwork and installed all required engineering systems and fittings including drainage grates and pipes, embankments, crash barriers, and retaining walls. Crews have also built or refurbished a total of 17 big and small bridges, including abutments, along the route. Currently sidewalks are being built in sections of the highway that pass through towns and villages.

The Vardenis-Martakert Highway has a total length of about 116 kilometers and a width of ten meters, seven of which will be comprised of asphalted surfaces. Close to 12 kilometers of the highway’s Vardenis-Karvachar segment have already been asphalted. The next segment, up till Martakert, is currently paved with gravel and is suitable for car traffic.

With proceeds from the 2014 Telethon, the Hayastan All-Armenian Fund will complete the asphalted of the entire highway as well as install all remaining safety and navigation components, including traffic signs and lane marks.

Initiated at the Hayastan All-Armenian Fund’s 2013 Board of Trustees meeting, the Vardenis-Martakert Highway construction project is of major economic and strategic significance. When completed, it will function as an additional lifeline between Armenia and Artsakh, helping boost the economies and specifically tourism industries of the twin republics, with the 22 large and small communities which dot the length of the highway becoming the main beneficiaries of increased economic activity.

Toward the realization of this major construction project, the worldwide affiliates of the fund have been carrying out a multitude of public-awareness and fundraising campaigns since the beginning of 2014. Moreover, the fund has launched SMS- and postal-donation programs in Armenia, encouraging grassroots support of the initiative.

Armenia Participates in 2nd UN Conference of Landlocked Developing Countries

VIENNA — From 3 to 5 November in Vienna the Armenian delegation took part in the 2nd United Nations conference of landlocked developing countries (LLDCs). The delegation was headed by the Secretary General and Chief of Staff of MFA Shahen Avakian.

UN Secretary General Ban Ki-moon, President of Austria Heinz Fischer, presidents of Zambia, Bolivia, Zimbabwe, prime-ministers, ministers, other high ranking officials and heads of different international organizations delivered welcoming addresses at the opening of the ceremony. The Austrian Foreign minister Sebastian Kurz was elected as Chairperson of the conference.

The main purpose of the conference was to sum up the implementation of the Declaration and Action Plan adopted in Almaty in 2003, through general discussion outline effective international and regional strategies of international trade transit areas, as well as to reassure the commitment of international community to support to landlocked developing countries to face economic development challenges.

In his speech at the plenary session Shahen Avakian spoke in particular about the peculiarities of sustainable economic development of geographically landlocked Armenia and the chal-



lenges to regional cooperation. He presented the government’s investment and development projects, reforms of transportation infrastructure, as well as Armenia’s participation in multilateral economic formats of regional and international cooperation.

In the framework of the conference the Armenian delegation participated in the high-ranking thematic round table discussions, business investment forum and a number of other parallel events.

At the conclusion of the conference the Vienna Declaration and the Vienna Action Plan for 2014-2024 was adopted by member states, which defined the targets of sustainable economic development for 32 developing landlocked countries and the main challenges and priorities in their implementation process.

France Working On New Armenian Genocide Bill

Continued from page 1

stitutional court subsequently struck it down as unconstitutional, however.

Hollande pledged to criminalize public denial of the Armenian Genocide when he ran for president in 2012. He told leaders of France’s influential Armenian community at the time that the new bill should be drafted with “utmost legal security” that would satisfy the

French Constitutional Council.

Charpentier noted that Hollande reaffirmed that pledge in Paris last April while commemorating the 99th anniversary of the deaths of some 1.5 million Armenians in the Ottoman Empire. The envoy also confirmed that the French president will visit Armenia next April to attend official ceremonies marking the 100th anniversary of the genocide.

Armenian Turkish “Start-up Weekend” in IT Sphere

YEREVAN — More than 30 Turkish businessmen have arrived in Armenia to discuss the perspectives of cooperation in the field of Information and Communication Technologies. Entrepreneurs, programmers, designers, sales experts from both countries held a roundtable discussion today.

Tomorrow they will participate in a “Star-up Weekend” event, which will continue in Gyumri on November 8-9.

The Startup-Weekend is implemented by the Public Journalism Club (PJC, Armenia) and the Economic Policy Research Foundation of Turkey (TEPAV, Turkey) within the framework of the “Support to the Armenia-Turkey Normalisation Process” programme financed by the European Union.

During this weekend-long, hands-on experience established and aspiring entrepreneurs from Armenia and Turkey will come together to share ideas, form teams, launch startup projects, build products, demo prototypes and

find out if those projects are viable.

Today the Armenian specialists briefed their Turkish counterparts on the achievements and perspectives of development of the ICT in Armenia.

“I didn’t believe so many people would be interested in participating in the event. This is a new opportunity in the reconciliation efforts,” US Ambassador to Armenia John Heffern said.

“The information and communication technologies sector is a well chosen platform for the settlement of the Armenian-Turkish relations. It is important to show that the nations of these two countries have more similarities than differences”. Ambassador Heffern stated.

According to him, the “first track” diplomacy sometimes works, sometimes doesn’t. This initiative is a “second track” diplomacy, i.e. contacts between societies, private entrepreneurs and this initiative may become a good opportunity for the two countries to begin partner relations.

120th Anniversary of Sassoun Resistance Marked in Aleppo



ALEPPO -- On Sunday November 9th, more than 600 members of Aleppo's Armenian community commemorated the 120th anniversary of the Sassoun Resistance. The Sassoun resistance of 1894, organized by the Social Democrat Hunchakian Party and led by its activists Mihran Damadian, Hampartsoum Boyadjian (Metzn Mourad) and Armenak Ghazarian (Hrayr Dzhoghk), was the first notable battle in the Armenian resistance movement against Ottoman and Kurdish oppression and lack of government representation of the predominately Armenian inhabitants of the region.

The commemoration, held in Aleppo's Yesayan Hall was organized by the Social Democrat Hunchakian Party's Sarkis Dkhrouni Student/Youth Union who were not only able to mobilize Aleppo's S.D. Hunchakian Party's various sub-branches to participate but was attended by representatives of all of the various Armenian organizations still active in Aleppo.

The Lion's share of the commemoration was a theatrical performance directed by Mr. Hakop Gulvartian, contrasting the mindset and actions of Sultan Hamid and his assistants on the one hand, and Metzn

Murad and his fellow fedayees, on the other hand. The commemoration also included recitations of poetry, and personal/historical accounts to place context to the historical resistance, and Nationalistic and folk music and dances.

The organizers of the commemoration also took the opportunity to publicly honor individual members who have dedicated service to the SDHP, the Cilicia Armenian School in Aleppo and the entire Armenian community. The individuals honored were, Mr. Sarkis Zkoushian, Mr. Hakop Okgian, Mr. Jean Der-Kevorkian, Mr. Sarkis Kouzuyan, Mr. Hakop Abejian, Mr. Raffi Pakarian and Miss Anais Zamanian.

The closing statements were delivered by the president of the Armenian Evangelical Community in Syria, Reverend Haroutioun Selimian, who not only praised the organizers for commemorating such a historical event in Armenian history, but by doing so within the confines and obstacles the Armenian community of Aleppo faces today. The Reverend also praised the strong and prevailing unity of the Aleppo Armenians, and the need to persevere, maintain and restore Aleppo.

Azerbaijan Shoots Down Karabakh Helicopter

Continued from page 1

community aimed at solving the issue exceptionally in a peaceful way," the Ministry said.

"The Azerbaijani side grossly violates the agreements on peaceful settlement reached at the most recent summit meeting in Paris," the statement reads.

"This vicious provocation shows that Baku not only ignores the calls of the OSCE Minsk Group Co-Chairs and the international community not to use force, to consolidate the ceasefire and reinforce the confidence-building measures, but also does the opposite, thus bearing full responsibility for the escalation of the situation," the Armenian Foreign Ministry said.

Minsk Group Co-Chairs Express Concern

The Minsk Group Co-Chairs (Ambassadors Igor Popov of the Russian Federation, James Warlick of the United States, and Pierre Andrieu of France) have expressed their very serious concern about the downing of a helicopter near the Line of Contact and the recent violence.

"We regret the loss of life and express our condolences to the families.

The Co-Chairs are deeply worried by the events that prompted this drastic incident, the first of its kind since the ceasefire agreement was reached. We strongly appeal to the sides to avoid steps that would escalate tension along the Line of Contact and Armenia-Azerbaijan border. The region cannot afford another round of violence like we witnessed this summer. Today's events remind us of the volatility of the Nagorno-Karabakh conflict and the urgency to intensify efforts to find a lasting settlement. We remain resolved to assist the sides in any way possible.

We remind the Presidents of Armenia and Azerbaijan of their responsibilities to respect the ceasefire and honor the commitments they made in Sochi, Newport, and Paris to find a peaceful resolution to the conflict. We also encourage them to adopt confidence-building measures now that would increase transparency along the Line of Contact and the Armenia-Azerbaijan border, and reduce the likelihood of events like today's incident". They said in a joint statement.

AUA Honors Prof. Richard Hovannisian



YEREVAN — On October 10, 2014, the American University of Armenia (AUA) unveiled a plaque in honor of Richard Hovannisian, who has donated his professional library of 1,338 books to AUA's AGBU Papazian Library. Hovannisian's library includes many history books covering the subjects of Armenian, Russian and Soviet, Near and Middle Eastern, Ancient and Medieval, Byzantine, and Modern European history and cultures. AUA President Dr. Armen Der Kiureghian welcomed Mr. Hovannisian, who cut the red tape and was presented with

a hand-carved wooden box as a gift from Library Director Satenik Avakian.

Richard Hovannisian is Professor of Armenian and Near Eastern History and First Holder of the Armenian Educational Foundation Chair in Modern Armenian History at the University of California, Los Angeles (UCLA) and Adjunct Professor of History at the University of Southern California. A native of California, he received his M.A. in history from the University of California, Berkeley, and Ph.D. in history from UCLA.

Genocide Memorial Groundbreaking at CSU-Fresno



FRESNO — Hundreds of people packed the outdoor ceremony at Fresno State on November 2 at 1:30 p.m. to mark the start of construction of the Armenian Genocide Monument, which will be completed in time to mark next year's 100th anniversary of the genocide. Religious leaders and members of the Armenian Genocide Centennial Committee of Fresno joined local politicians, Fresno State leaders and a multitude of community members at the event.

The Diocesan Primate Archbishop Hovnan Derderian attended the historic event. Also present at the groundbreaking ceremony was Mr. Berj Apkarian, the newly-appointed Honorary Consul of the Republic of Armenia in Fresno.

Fresno State President Joseph I. Castro spoke for the university.

"Our primary mission (at Fresno State) is education, which is also at the core of this project," Castro said. "We've had a rich history of involvement by Armenian students, faculty, alumni and friends — we wouldn't be a great university without them."

The primary message of the event was the importance of spreading awareness of the Armenian Genocide, which Fresno State Armenian Studies Coordinator Barlow Der Mugrdchian said killed as many as 1.5 million Armenians from 1915 to 1923. Der Mugrdchian said that on April 24, 1915, the Ottoman Turkish government began arresting and executing hundreds of Armenian religious, academic and political leaders.

The stone-and-concrete monument will be dedicated on April 24, the 100th anniversary of the beginning of the genocide. It was designed by local architect Paul Halajian and will consist of nine pillars representing the six provinces of historic Armenia, Cilicia, the Diaspora and the Republic of Armenia. An incomplete halo will rest on top of the pillars, which is meant to symbolize both the damage left by the genocide and the unity of the Armenian people. It will be the first such monument marking the genocide on a U.S. college campus.

It will be located on the Maple Mall walkway just south of the Satellite Student Union on Fresno State's campus.

Groundbreaking Ceremony of the Armenian Church of Las Vegas



LAS VEGAS — More than 400 people participated in the Groundbreaking ceremony of the church building of the Armenian Church. The vision of hard working Armenian-American community of Las Vegas was realized on November 1st 2014 with the groundbreaking ceremony for a new church in the heart of the community.

At 12:30p.m., Godfathers, donors, and faithful gathered at the Pre-School building, which also serves as the temporary sanctuary of the church, and were led in a procession to the site where the future church building would be built. With the participation of Archpriest Fr. Arshag Khatchadourian, Archpriest Fr. Nareg Matarian, and Rev. Fr. Nerses Hayrapetyan, the Primate anointed the cross-stones and the foreheads of the Godfathers of the Armenian Church of Las Vegas. Archbishop Derderian congratulated the Godfathers on their God-pleasing endeavor as “church-builders.”

In his address to the faithful community, the Primate said “Beloved faithful in Christ, this historic day marks a new milestone in the life of the Armenian Church of Las Vegas. You have embarked on a God-pleasing journey. You are the living testament of the resurrected Armenian nation. Your commitment to the preservation of our ancestral Christian Faith, our rich heritage and culture is the realization of the dream of our martyred ancestors. I pray that you continue to uphold our sacred traditions and become exemplary citizens of this blessed land of the United States of America.”

Renowned attorney Mark Geragos,

who is also the Grand Benefactor of the Armenian Apostolic Church of Las Vegas, concluded the ceremonial rite with the breaking of the ground.

Diocesan Council Chairman Mr. Antranik Zorayan, Diocese’s Executive Director Harout Markarian, the Rev. Fr. Avedis Torosian, the Rev. Fr. Arsen Kassabian, the Rev. Samuel Agulian, the Rev. Kurt A. Sortland, Pastor of The Lakes Lutheran Church, Father and Son Jerry and Danny Tarkanian participated in the historic event.

The twelve Godfathers (“Pillars – Apostles”) are George Gregory Meguerian, Vahag Stepanyan, Rouben Grigoryan, Vigen Kirakosyan, Edmond Patvakanyan, Levon Akhsharumov, Stepan Gevorgryants, Mesrop Khachikyan, Shavarsh Papazian, Haik Atamian, Gagik Sekoyan and Joseph Djavairian.

The four Godfathers (“Pillars – Evangelists”) are Rouzanna Grigorian, Hovsep Shadarevian, Kevin Setanyan and Mihran Furnchyan.

In the artistic portion of the program, students of the Armenian Dance School of Las Vegas (instructor Las Vegas Isabella Martirosyan) delighted the crowd with exceptional performances of traditional Armenian dances. Saturday School students recited poems by famous Armenian poets. Renowned violinist Samvel Yervinyan displayed a masterful performance of the string instrument.

The event was covered by Las Vegas Channel 13 and was shown on local television at 8:30 p.m. on the same night.

President Obama Received Gift from Azeri Officials

Continued from page 1

attend the dinner named “Celebrating the Natural Beauty of Azerbaijan,” at the Andrew W. Mellon Auditorium in Washington, D.C.

Among the “Honorary Host Committee” of today’s gala there will be dozen of lawmakers, such as Congresswoman Corrine Brown, Senator Richard Burr, Congresswoman Marcia Fudge, Congressmen Michael Fitzpatrick, Steve Cohen, Cory Gardner, Gene Green, Billy Long and many others, according to the source. The official organizer of the

event is shown as Azerbaijani American for Alliance, a group chaired by Anar Mammadov, son of Azerbaijan’s transportation minister Ziya Mammadov.

None of the mentioned above immediately returned a request for comment on Tuesday.

Mammadov has paid at least \$2 million for covering expenses of 2012 gala dinner, according to the official records.

Last year, Mammadov’s organization spent \$5 million for a single DC lobbying group Fabiani & Company to establish contacts with the US officials.

“Armenia Today: Summer Study Trip 2014” Lecture by Prof. Barlow Der Mugrdechian



FRESNO — Prof. Barlow Der Mugrdechian, Director of the Armenian Studies Program at Fresno State will give an illustrated presentation on “Armenia Today: Summer Study Trip 2014” at 7:30PM on Tuesday, November 18, in the University Business Center, Alice Peters Auditorium, Room 191, on the Fresno State campus.

The lecture is part of the Fall Lecture Series of the Armenian Studies Program, supported by the Leon S. Peters Foundation.

Prof. Der Mugrdechian has led six student groups to Armenia over the past 25 years. In the summer of 2014, together with Prof. Sergio La Porta of the Armenian Studies Program, he led a group of nine students on the Summer Study Trip, from May 26-June 11. The presentation will discuss some of the major experiences that the group had, including visits with Yerevan State

University college students and visits to the Mer Hooys-Our Hope home in Yerevan.

Some of the students who participated in the Summer Study Trip will also recount their experiences, giving a different perspective to the presentation.

Barlow Der Mugrdechian is Director of the Armenian Studies Program and the Center for Armenian Studies at Fresno State and has been teaching Armenian language, art, history, and culture courses for thirty years.

The lecture is free and open to the public. Free parking is available, with a parking code 273501, after 7:00PM at Fresno State Lots P5 and P6, near the University Business Center.


More information about the lecture: website at www.fresnostate.edu/armenianstudies.

Armenian Asia Minor Volume Released

UCLA—Armenian Communities of Asia Minor has been released by Mazda Publishers as the 13th volume in the UCLA series, “Historic Armenian Cities and Provinces,” edited by Professor Richard G. Hovannisian. The Asia Minor volume focuses on several of the more than 100 Armenian communities within easy reach of Constantinople, the Ottoman capital.

Although these communities are less well known to the general public than the traditional Armenian provinces to the east, they nonetheless had a vibrant existence, playing an important role in the production and exportation of silk, textiles, timber, tobacco, and agricultural products. Among them were the cities and towns of Izmid, Adabazar, Bardizag, Armash (the site of a noted seminary), Bursa, Banderma, Eski-Shehir, Kutahia, Sivri-Hisar, and Afion-Karahisar, each with its own Armenian quarters, merchants and craftsmen, schools and churches, cultural and athletic organizations, fanfare bands and choruses.

Contributing to the volume are Armen Manoug-Khaloyan and Richard Hovannisian, who provide an overview of the many Armenian communities stretching from the Gulf of Izmid to Konia; Ara Melkonian on the all-Armenian town of Bardizag; Barbara Merguerian on American missionary schools in Bardizag and Adabazar; Peter Cowe on Konia in the Seljuk period; Arpi Vardumyan on Komitas vardapet, the renowned son of Kutahia; Dickran



Kouymjian on the exquisite tile works of Kutahia; Hasmik Khalapyan on the Armenian theater in Asia Minor and Rodosto on the European shore; Osman Köker on contemporary postcards depicting these communities; and Simon Payaslian on the decimation of the Armenians of Asia Minor, who were not spared in 1915 despite the fact that they constituted a small percentage of the total population. Roupen Berberian has prepared the maps that accompany the volume.

Copies of Armenian Communities of Asia Minor may be obtained from Mazda Publishers, local Armenian bookstores, or (in the U.S. only) directly from the series editor at hovannis@history.ucla.edu.

Հարցազրոյց Լիբանանահայ Կատակերգակ Եւ Վաստակաշատ Դերասան Բիէր Շամմասեանի հետ



Հարցազրոյցը վարեց՝ ԱՆԻ ՄԱՐՍԷԼԵՆ

«Սա անձրեւն ալ երբեմն մանուկներու նման վերաբերմունք ունի»։ Այս ծիծաղելի արտայայտութեամբ սկսած էր հարցազրոյցս Լիբանանահայ հանրայայտ կատակերգակ Բիէր Շամմասեանի հետ, որ կրկին կը գտնուէր Միացեալ Նահանգներու ու իր ներկայացուցած զանազան ելոյթներով յաջողած էր ամերիկաբնակ հայ եւ արաբ հանդիսատեսի ժպիտը խլել, ձերբազատելով զայն «Թէկուզ ժամանակաւոր» կեանքի դժուարութիւններու պատճառած հոգեվիճակէն։

Արաբական աշխարհի ու Լիբանանի երգիծական թատրոնի կարեւորագոյն դէմքերէն եղող վաստակաշատ դերասան՝ Բիէր Շամմասեան ծնած է Պէյրութ 9 Մարտ 1949-ին. թատերական կեանքէն ներս մուտք գործած է 1965-ին «Թիւ 5 Խելագարը» կատակերգութեամբ։ 1973-էն մինչեւ 1986 տարիներու ընթացքին կատակերգութեան թատրոնի սիւներէն մին համարուող «Սամի Խայյաթի» հետ համագործակցութեամբ երկար ժամանակ եղած է միշտ բեմահարթակի վրայ, ներկայանալով լիբանանի հանդիսատեսին՝ զանազան թատերախաղերով ու կատակերգութիւններով։

Բիէր Շամմասեան իր իւրապատուկ ոճով ու համակրելի անձ-

նաւորութեամբ յաջողած է արաբ ու հայ հանդիսատեսին ծիծաղեցնել ու երջանկութեան եւ ուրախութեան դրական ապրումներ արտայայտող ժպիտով զարդարել անոր դէմքը։

Ստորեւ կը ներկայացնեմ վաստակաշատ Բիէր Շամմասեանի հետ ունեցած հարցազրոյցս։

-Թատերական սեռը կ'ընդգրկէ ողբերգութիւն, սիրավէպ «րոմանս», կատակերգութիւն եւ այլն, ինչո՞ւ ընտրեցիք կատակերգութիւնը։

-Կատակերգութիւնը ընտրեցի որովհետեւ ամենադժուարն է եւ նկարագրէս բաժին մըն է, մանկութենէս իվեր շրջապատի ուշադրութիւնը գրաւել կ'աշխատէի։ Միակ ձեւն էր ծիծաղը եւ կատակերգութիւնը, բնածին կարողութիւններս օգտագործելով եւ ինքնաշխատութեամբ յաջողեցայ մուտք գործել եւ իմ տեղս գրաւել կատակերգութեան արուեստաշխարհէն ներս, իրականացնելով փափաքս եւ երազներս։

-Արաբական ու յատկապէս Լիբանանեան կատակերգութեան թատերաշխարհէն մերս մուտք գործելով մեծ հռչակ ու յաջողութեան տիրացաք, որպէս հայ ինչպէ՞ս յաջողեցաք ձեր տեղը գրաւել եւ ի՞նչ դժուարութիւններ ունեցաք։

- Հանդիսատեսի մղումով բեմ բարձրացայ, կրցայ ինքզինքս պարտադրել լիբանանեան բեմերուն վրայ, պահելով հայկական անունս ու ինքնութիւնս։ Ինքնակերտ էի,

անձնական ջանքերով կերտեցի հոշակա ու կրցայ արաբ եւ հայ հանդիսատեսի սրտին մէջ նշմարելի տեղ գրաւել, արժանանալով անոր գովեստին ու գնահատանքին։
-Ուրկէ կը ներշնչուէք ձեր նիւթերը։

-Առօրեայ իմ եւ շուրջիսնեւրուս կեանքէն կը ներշնչեմ նիւթերս։ Հարցերը դիտելու տեսանկիւնս կը տարբերի ուրիշներէն. Ուշադրութեամբ կը դիտեմ շրջապատս, ընտանիքի անդամներս, դրացիներս ու բարեկամներս, սուրբ, փողոցը, ուր որ ըլլան անոնք եւ ծիծաղելի կողմը գտնելու նպատակաւ կ'առանձնանամ, երբեմն քննադատական, երբեմն դատիրակչական բնոյթ տալով զանոնք կը բարձրացնեմ բեմ, ծիծաղելի կերպով ներկայացնելու հանդիսատեսին, ուր մեծ ընդունելութիւն կը գտնէ, յատկապէս երբ անոնք ինքնաքննադատութիւններ են կամ առօրեայ կեանքին հետ կապ ունին։

-Ի՞նչ զգացումներ կը տիրապետեն ձեզ երբ հանդիսատեսի բարձրածայն խնդրը կ'ողողէ թատերասրահները կամ այլ վայրեր ուր ձեր ելոյթները կը ներկայացնէք։

- Ժպիտը դէմքի զարդն է։ Երբ հանդիսատեսի դէմքին վրայ ժպիտ տեսնեմ եւ բարձրաձայն խնդուքը լսեմ, վարձատրուած կ'զգամ ու հոգեկան գոհունակութիւն կ'ստանամ, յաջողած կը համարեմ ինքզինքս երբ ուրախ մթնոլորտ կ'ստեղծեմ սրահին մէջ։ Ժողովուրդիս ժպիտը կ'արժէքաւորէ զիս։

-Բեմը այն ատենան է որուն միջոցաւ դերասանը կամ արուեստագետը պատգամաբերն է հանդիսատեսին։ Ձեր կարծիքով երկարամեայ ձեր գործունեութեան ընթացքին կարողացաք այդ մէկը իրագործել։

-Կը կարծեմ թէ որոշ չափով կարողացած եմ. երբ քննադատութիւններ կ'ընեմ որոշ անախորժ սովորութիւններու եւ վատ արարքներու մասին, որոնք կը խաթարեն մեր հայապահպանումն, պապենական սովորութիւնները, անուղղակիօրէն դատարարակչական դարձնելով զանոնք, բնականաբար իրագործած կ'ըլլամ պատգամաբերի պարտականութիւնն ու առաքելութիւնը։ Օրինակ մը կրնամ տալ, «Պաթթալի» կերպարիս միջոցաւ հայերէն լեզուն սիրելի դարձուցած եմ, սորվելու փափաքն արթնցնելով օտար երկնակամարի տակ, սփիւռքի մէջ ապրող կարգ

մը հայորդիներուն մօտ, իրենց ծնողներու վկայութեամբ։

-Բեմը իր սրբութիւնն ու վստմութիւնն ունի. ան ժողովուրդի մը քաղաքակրթութեան մակարդակը ցուցնող պատկերն է, իսկ դերասանին պարտականութիւնն է պահպանել այդ սրբութիւնը ու մակարդակը։ Համաձայն էք։

-Շատ ճիշդ է, աւելին բեմը ուսումնարան, իսկ թատերախաղը ուսուցիչ որուն պարտականութիւնն է որոշ խորհուրդ մը հասցնել հանդիսատեսին, թէ ինչպէս, ինչ ձեւ կ'որդեգրէ այդ մէկը կը մնայ իր կարողութեան սահմաններուն մէջ։

-Կարելի է ձեր ներկայացուցած թատերախաղերուն թիւը նշել։ Ո՞ր կերպարը յատուկ տեղ կը գրաւէ ձեր սրտին մէջ։

-Թատերախաղերու թիւը չեմ չիշեր բաց ինծի համար սիրելի է «Պաթթալի», «Ըմ ժօրժէթ» «Պրն. Յակօբ» կերպարները, որոնք ժողովուրդի քով մեծ ընդունելութիւն գտած են ու ես, ինքզինքս գտած եմ անոնց մէջ։

- Հանդիսատեսը երբ տխրի կը դիմէ Բիէր Շամմասեանին. Բիէր Շամմասեան երբ տխրի, այդ պարագային որուն կը դիմէ։

- Մարդկային է։ Բոլորի նման կ'ունենամ տագնապալից ու տխուր րոպէներ եւ այդ պարագային ձկնորսութեան կ'երթամ կամ առանձնանալով «Ճօքեր» կը ստեղծեմ, երգեր կը յօրինեմ ու ճաշ կ'եփեմ։

-Ի՞նչ են ձեր հետագայ ծրագիրները։

-Ծրագիրները շատ են որոնցմէ մի քանի հատը կրնամ նշել. Յարութ Սողոմոնեանի հետ կը պատրաստեմք «2 Man Show» ծրագիրը։ Լիբանանեան հեռուստացոյցի «Շի Մանօ» ծրագիրին մաս պիտի կազմեմ։ Շատ մը աշխարհահռչակ հայ դերասաններու հետ պիտի մասնակցիմ հայ ժողովուրդի ցեղասպանութեան 100 ամեակին նուիրուած պատկերասփիւռի ծրագիր մը, առաւել այլ ծրագիրներ ու թատերախաղեր, որ պիտի ներկայացուին Լիբանանեան բեմերու վրայ, մօտիկ ապագային։

-Ինչ պատգամ կու տար ձեզ դիտող ու չդիտող հանդիսատեսին։

-Չդիտողները թող դիտեն, դիտողները թող պատրաստուին նորութիւններու։ Կեանքը կարճ է, մի տխրիք։ Խնդացէք, խնդուքը դեղ ու բալասան է կեանքի բոլոր հիւանդութիւններուն։ Զիս լսեցէք եւ Տօքթ. Բիէր Շամմասեանն եմ։

ՆԱԽԱՃԱՇ

Կազմակերպութեամբ
Փասատինայի Փարամագ Մասնաճիւղի
Եւ Տիկնանց Օժանդակ Մարմնի

Տեղի կ'ունենայ
Կիրակի 16 Նոյեմբեր, 2014
առաւօտեան ժամը 9:00-ին

Կարօ Սողանալեան Սրահէն ներս
1060 N Allen Ave. Pasaena, CA 91107

Մուտք՝ \$15

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ

Yes, I wish to subscribe to Massis Weekly
Enclosed a check for (one year)
* \$50,00 * \$100,00 (first class) for USA
\$ 100,00 (Air Mail) for Canada.
\$ 250,00 (Air Mail) Overseas.

Name: -----
Address: -----
City: ----- State:----- Zip Code:-----
Country: -----
Tel :----- Fax :-----

ՕՐԵՆՔ, ԵԿԵՂԵՑԻ ԵՒ ՄԵՆՔ

ՈՍԿԱՆ ՄԻՏԻԹԱՐԵԱՆ

Կասկած չկայ մեր մտքին մէջ որ Մխիթար Գօշի մօտեցումը արդար արտայայտութիւնն է իր կրօնաւորական կեանքին, որուն ակունքն է Աստուածաշունչը: Նման հայեցակէտ կը տիրապետէր նաեւ հին եբրայական իրաւաբանական կեանքին մէջ, ուր դատաւորները կը կոչուէին «Աստուծոյ մարդիկ» տիրոջսով: Ահաւաստիկ ելլելով այս սկզբունքէն, Մխիթար Գօշ կ'ուզէ որ դատաւորները ըլլան մաքուր անձնաւորութիւններ, օժտուած մտաւոր եւ բարոյական բարձր յատկութիւններով. «պարտ է դատաւորին հմուտ լինել եւ քաջութեամբ, եւ հանճարեղ, եւ զիտուն Սուրբ գրոց եւ ամենայն մարդկային իրաց: Զի անսխալ զգատաստանն առնիցէ: Պիտոյ է եւ կատարեալ գոլ հասակաւ, եւ ուշիմ, մտաւոր եւ զգաստ, զի մի՛ յոչ իմանալոյ ի հարկէ սխալանս գործիցէ» (Նախդ. Գլ. Ե. էջ 26):

Անգամ մը եւս շեշտը դնելով դատաւորներու անաշտութեան վրայ, կ'ըսէ. «Եւ պարտ է դատաւորին առանց կաշառոց լինիլ... մի քննել զանձին իւրոյ շահ, այլ զի բազմացն միտք հաստատեցին ի նա եւ զգատարանն ուրախ արասցէ ճշմարիտ վճռաւ: Զէ պարտ կարողին ներել եւ հարստահարել զորքն կամ գաղթատն» (Նախդ. Գլ. Զ. էջ 27-28):

Ու կը շարունակէ յայտարարել. «Եւ պարտ է դատաւորաց ի գիշերի եւ ի տուրնջեան ընթեռնուլ ոչ միայն գտուրք Գիրս կտակարանաց եւ զգիրս դատաստանաց, այլ եւ որսալ եւ ի միտ առնուլ զբանս իմաստուն մարդոց յամենայն ազգաց... պարտ է դատաւորին ամենայն իրօք բարի եւ առաքինի լինել, եւ առաւել առանց բարկանալոյ, եւ բարւոյն աննախանձ յամենայն ժամանակի, մանաւանդ ի ժամ դատաստանին, զի մի՛ թիւրեցին միտք դատելոցն եւ կարծիցեն թէ վասն նախանձու կամ բարկութեան թիւրեցաւ դատաստանն: Այլեւ երկայնամիտ եւ ներող լինիցին դատաւորք, զի բազում անգամ պատահէ զի դժուարագիւտ եւ անյայտ լիցի դատաստանն: Մի՛ կարճամտեալ լուծցեն, այլ համբերելով պահիցեն զաւուրս եւ պարսպով քննեալ դարձեալ ատենիւ կատարեցեն զդատաստանն» (Նախդ. Գլ. Զ. էջ 31):

Մխիթար Գօշ չի՛ վարանի լիշեցնելու նաեւ. «բայց մի՛ հպարտասցէ դատաւորն եւ արհամարհեցցէ զոք, այլ զիտասցէ զի մի է դատաւոր Աստուած, որոյ առաջի եւ ինքն գալոց է ի դատաստան» (Նախդ. Գլ. Զ. էջ 33):

Մխիթար Գօշ իր Դատաստանագիրքին մէջ առաջ կը բերէ երկու տեսակ դատարան. - մէկը «մարմնաւոր», այսինքն՝ աշխարհական, իսկ միւսը «հոգեւոր», այսինքն եկեղեցական:

Առաջին դատարանը կը դնէ թագաւորներու եւ իշխաններու ինչպէս նաեւ աշխարհական վարչականներու իրաւասութեան տակ, իսկ երկրորդը՝ եպիսկոպոսներու, վարդապետներու եւ քահանաներու իշխանութեան տակ: Ինչպէս բոլոր ժողովուրդներու պարագային, մեր ժողովուրդի հասարակական-ընկերային կեանքի զարգացման պատմութենէն զիտենք որ ժամանակի ընթացքին՝ քաղաքական եւ ընկերային զարգացման հետ նօսրացան եւ տկարացան նաեւ եկեղեցական դատավարութեան իրաւական սահմանները:

Հոգեւոր իշխանութեան սկզբնական ազդեցութեան հզօրացումը բնական էր: Ի սկզբանէ հոգեւորականութիւնը օժտուած էր աւելի ընդարձակ հասարակական գործունէութեամբ եւ աւելի մեծ դեր կը խաղար ժողովուրդներու քաղաքական կեանքին մէջ քան ներկայիս: Հոգեւորականներ, անցեալին, էին գիտնականներ, բժիշկներ եւ իրաւագէտներ, որոնք ոչ միայն կը կարգաւորէին մարդոց յարաբերութիւնը դէպի աստուածութիւն եւ դէպի կրօնաբարոյական հաստատութիւնները, այլեւ կ'ուսուցանէին թէ ինչ պիտի ըլլային մարդոց յարաբերութիւնները իրարու հանդէպ, ինչպէս նաեւ բնութեան հանդէպ:

Այսպիսի մեծ դեր ունէր նաեւ Հայց. Եկեղեցւոյ հոգեւոր իշխանութիւնը, նամանաւանդ այդ քաղաքական անկաշուն եւ փոթորկալից շրջաններուն երբ չենք ունեցած քաղաքական անկախ իշխանութիւն եւ ենթարկուած ենք օտարազգի նուաճողներու կամայականութեանց:

Հետեւաբար՝ հոգեւոր կամ եկեղեցական դատարանները դարձած էին միակ կեդրոնները ուր կարող էին դիմել վիճող կողմերը, արդարութիւն որոնելու համար: Մխիթար Գօշ՝ գրած է իր «Դատաստանագիրք Հայոց»ը այնպիսի ժամանակաշրջանի մը մէջ, երբ հայ ժողովուրդի քաղաքական անկախութիւնը արդէն խորտակուած էր, երբ Հայաստանի աւերակներուն վրայ կը տիրապետէին մահմետական խաները, որոնց լուծին տակ սակաւաթիւ իշխաններ կամ մեկիքներ կրնային պահել իրենց կիսանկախ գոյութիւնը:

Ահաւաստիկ այսպիսի տխուր ժամանակը շրջանի մէջ էր որ Եկեղեցին իր հոգեւորականութեամբ կրցաւ իր ձեռքին մէջ կեդրոնացնել Հայ ժողովուրդի հոգեւոր դատաստանական ամբողջ կառուցը, ուր հայը կարող էր գտնել իրաւասութիւն եւ իրաւունք, օրէնք եւ արդարութիւն:

«Դատաստանագիրք Հայոց»ի համաձայն, հոգեւոր կամ եկեղեցական դատաստանին ենթակայ էին բոլոր այն գործերը որոնք կը վերաբերէին Եկեղեցւոյ, նոյնիսկ՝ աշխարհական բոլոր գործերը, եթէ այդտեղ չկային աշխարհական իշխանութիւններ. «Եւ ի տեղում, ուր ոչ իցեն թագաւոր կամ իշխանք, պարտ է եպիսկոպոսն տալ զայս յաւանդ, զի ամենայն դատաստանն նոքա հոգասցեն»:» (Նախդ. Գլ. Ե. էջ 26): Հոգեւոր դատարանի իրաւասութեան կը պատկանէին հետեւեալ կարեւոր հարցերը. -

1. Եկեղեցւոյ նուիրապետական կառուցը. Անոր պաշտօնեաներուն՝ կուսակրօն թէ ամուսնացեալ հոգեւորականութեան պարտաւորութիւնները Եկեղեցւոյ, ինչպէս նաեւ ժողովուրդին հանդէպ:
2. Եկեղեցւոյ կալուածներու պահպանումը եւ հոգեւորականութեան անձնական նկատուած ինչքերու կամ կալուածներու սահմանագծումը:
3. Հոգեւորականութեան նիւթական վիճակին ապահովումը ժողովուրդին կողմէ:
4. Ընտանեկան իրաւունքի պարտաւորութիւններ, որոնց սահմաններուն մէջ կ'իյնան՝ ամուսնութիւն, ապահարգան, զաւակներու կրթութիւն, ապահարգան, զաւակներու կրթութիւն, կանանց առեւանգում, ամուսիններու փոխադարձ յարաբերութիւն (ֆիզիքական եւ բարոյական):

5. Հերետիկոսութիւն, ուրացութիւն եւ ընդհանրապէս Եկեղեցւոյ Ս. Խորհուրդներու պղծում:

6. Ստախօսութիւն, բամբասանք, վիրաւորանք եւ այլ քրէական արարքներ ընդդէմ հոգեւորական դասակարգի:

Հոգեւոր դատաստանը տեղի կ'ունենար եպիսկոպոսի նախագահութեամբ: Թէեւ Մխիթար Գօշ յստակ կերպով չ'արտայայտուի թէ ո՛ր եպիսկոպոսներն են որոնք դատաւորի բարձր պաշտօնը պիտի կատարեն, բայց նկատի ունենալով Հայց. Եկեղեցւոյ ժողովական կանոնները, կարելի է եզրակացնել որ անոնք թեմակալ եպիսկոպոսներն էին, օժտուած դատաստանական իրաւունքներով:

Ահաւաստիկ այս դատաստաններու ժամանակ, եպիսկոպոսը պարտաւոր էր ընտրել երկու կամ երեք օգնական դատաւորներ, որոնք կրնային ըլլալ վարդապետներ, քահանաներ եւ կամ տանուտէրեր: Թէեւ աւելի մանրամասն տեղեկութիւններ չի տար մեզի Մխիթար Գօշ թէ որքան վճռական ձայն ունէին եպիսկոպոսին հետ միասին դատաստանական որոշումներ արձակող անձինք, այդու հանդերձ ան հետեւեալ բնորոշումը կ'ընէ Զ. Գլխուն էջ 31-ի մէջ. «Եւ զի թէ ինքն (եպիսկոպոսը) տգէտ իցէ, ի նոցանէ վճռէ ուսցի դատաստան: Այլ զի եպիսկոպոսն, զի նա է առաջին դատաւոր, երկու կամ երեք առ ինքն կալցի արս իմաստունս եւ նոքօք դատեցի զդատաստանն ոչ միայն զի նոքա իրաւանցն վկայք լիցին, այլ զի եւ ինքն ի նոցանէ ուսցի զդատաստանն»: Այսինքն եթէ եպիսկոպոսը տգէտ է եւ անպիտան իրաւաբանութեան մէջ, պէտք է որ սորվէր իր դատաւորակիցներէն, այլ խօսքով անոնց խօսքը աւելի կ'իշխ ունենար:

Մխիթար Գօշի համաձայն, վէճերու արդար լուծման համար անհրաժեշտ են դատավարութեան յատուկ միջոցներ: Այդ միջոցներն են՝ սեփական խոստովանութիւն, վկաներու ցուցմունքներ եւ երդում: Վկաներու ցուցմունքներուն շատ կարեւորութիւն կու տայ ըսելով. «Եւ հարկ է վկայիւք լինել դատաստանն, զի դատախաղացն յերկար վիճողութիւնն նոքօք հատանէ զդատաւորն» (Նախդ. Գլ. Ե. էջ 37), այսինքն դատաւորները պարտաւոր են քննութեան ժամանակ նախ լսել դատապարտեալի ցուցմունքներն ու ապա վկաները, որոնց նկարագրի եւ յատկութեան մասին մանրամասն բացատրութիւններ կու տայ, մասնաւորաբար մերժելով ոչ-քրիստոնեաներու եւ կանանց վկայութիւնը (դժբախտաբար տակաւին սահմանափակուած են կանանց վկայութեան իրաւունքները աշխարհի գահագան երկիրներու մէջ, նոյնիսկ այս քսանմէկերորդ դարուն...):

Մխիթար Գօշի «Դատաստանագիրք Հայոց»ը առիթ ընծայեց նաեւ որ նմանատիպ վեցերորդ ժողովածու օրինագիրք մը կազմուի նաեւ Կիլիկեան թագաւորութեան ժամանակ, Հեթում թագաւորի եղբոր՝ Սմբատ Սպարապետի հեղինակութեամբ 1255 թուականին: Այս անգամ սակայն, այդ բոլոր օրէնքները թարգմանուեցան աշխարհաբարի, մատչելի եւ հասկնալի ընելու համար ժողովուրդի զանգուածներուն:

Սմբատ Սպարապետի Դատաստանագիրքը կը տարբերի Մխիթար Գօշի «Դատաստանագիրք Հայոց»էն, որովհետեւ հոն՝ հեղինակին կողմէ կատարուած են կրճատումներ, փոփոխութիւններ եւ յաւելումներ, մասնաւորաբար հայ ժողովուրդի տեղական սովորութիւններու մասին,

նպատակ ունենալով յարմարցնել օրէնքները տեղական քաղաքական պայմաններուն եւ պետական կարիքներուն:

Հայց. Եկեղեցւոյ կանոնագրութեանց մասին լուրջ աշխատանքի բացակայութիւնը, Եկեղեցին տարած է անիշխանութեան եւ անօրինականութեան: Ահաւաստիկ այսպիսի իրաւական-օրինական մթութեան մէջ էջմիածնի Յովհաննէս Ը. Կարբեցի կաթողիկոսը 1841 թուականին իր գրած նամակին մէջ, ուղղուած Նիքոլայ Ա. Կայսեր, տգիտաբար կը յայտարարէր թէ Հայց. Եկեղեցին կ'ընդունի Տիեզերական Տրդ., Յրդ., եւ 7րդ ժողովները...:

Նոյնն էր պարագան Արեւմտահայոց մէջ: Մինչեւ 1840ական թուականները, պոլսահայ գաղութի տնտեսական, եւ անով պայմանաւորուած քաղաքացիական իրաւունքները վերապահուած էին Ամիրայութեան եւ անոր կամակատար՝ Կ. Պոլսոյ պատրիարքներուն ձեռքը: Սուլթաններու միջնորդութեամբ գերիշխանաբար գործող ամիրայական այս դասակարգը քմահաճօրէն կը հաստատէր կամ կը հեռացնէր պատրիարքները: Նոյն ատեն կը լուծէր կրօնական եւ դաւաբանական վէճեր, կամաւոր կ'անտեսէր գաւառը յուզող հարցերը, եւ այս բոլորը կը կատարէր առանց հաշուետու ըլլալու ազգին:

Նախ քան Ազգային Սահմանադրութեան հաստատումն ու վաւերացումը, պատրիարքներ անսահման իրաւունքներ ունէին դատելու, պատժելու, նոյնիսկ աքսորելու բոլոր այն հոգեւորական եւ աշխարհական անձնաւորութիւնները, որոնք անհնազանդ գտնուած էին եւ մեղանշած կրօնական աւանդութեանց դէմ: Ահաւաստիկ այս պատրիարքական առանձնաշնորհուածներն օգտուելով, Ամիրաները հաշուեցարդար կը տեսնէին իրենց հակառակորդներուն հետ:

Նոյն շարաշահումներն ու բռնութիւնները կը գործադրէին թեմական առաջնորդները: Կարծես չէին բաւեր թուրք աղաներու եւ քրեւտ պէկերու վայրագութիւնները՝ այդ բոլորին վրայ կու գային աւելնալու հայ հոգեւորականութեան վերնախաւի չարագործութիւնները, որոնք առաւել եւս ողբերգական վիճակի կը մատնէին գաւառի բնակիչները:

Նոյնքան եւ առաւել եւս շատ տխուր է իրողութիւնը ԱՅՍՕՐ Հայց. Եկեղեցւոյ կեանքէն ներս: Եկեղեցին հետզհետէ դարձած է կղերատիրական հաստատութիւն մը, անտեսելով ամէն ժողովրդապետական օրէնք, կարգ ու կանոն: Կարդացէք մամուլի էջերը եւ հոն գտնուող աղերսագրին կոչերն ու արդար պոռթկումները մեր ժողովուրդին՝ անօրինականութեան, անկանոնութեան եւ ամբարտաւան մենատիրութեան դէմ: Այս սանձարձակ վիճակին մէջ թէեւ տակաւին կան ոմանք, թէկուզ փոքրաթիւ, որոնք կը հաւատան սահմանադրական սկզբունքներու, բայց եւ այնպէս չունին բարոյական քաջութիւնը իրենց ձայնը բարձրացնելու, եւ դժբախտաբար այդպէս ալ կղզիացած, մեկուսի կ'ապրին:

Հայց. Եկեղեցւոյ հոգեւոր վերին իշխանութիւնը, որ օրուան կաթողիկոսն է, պարտաւոր է յարգել սահմանադրական-կանոնական կարգերը, որովհետեւ ժողովրդավարական կարգերու անտեսումը արհամարհանք մըն է, նետուած՝ հայ ժողովուրդի նուիրական եւ անկապտելի իրաւունքներուն դէմ:

ԱՆՋԱԿԱՏԱԿԻՆ՝ ԲԱՅՑ ԻՐԱԿԻ...

ՄԵԼԳՈՆԵԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆԸ ԿՐՆԱՐ (ԵՒ ՏԱԿԱԿԻՆ ԿՐՆԱՅ) 21-ՐԴ ԴԱՐՈՒ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԱՄԵՆԱԿԱՐԵԻՈՐ ԴՊՐՈՑԻՆ ՎԵՐԱԾՈՒԻԼ

ՎԱՐԴԳԵՍ ԳՈՒՐՈՒՆԵԱՆ

Մեղգոնեան Կրթական Հաստատությունների հիմքի վրայ 21-րդ դարու Համահայկական համաշխարհային բարձրագույն մակարդակով դպրոց մը հիմնելու եւ Մեղգոնեանի վերաբացումի հարցը լրջօրէն քննելու համար, «Այք Կրթական Հիմնադրամ»-ը, որ կը նպատակադրէ միջազգային բարձր կրթական մակարդակով հայկական դպրոցներ հիմնել, իր ժողովներուն մէջ լրջօրէն քննած է Մեղգոնեանը նման դպրոցի մը վերածելու ծրագիրը: Այս խումբի անդամները մինչեւ անգամ այցելած են Մեղգոնեան, դիմած են Հ.Բ.Լ.Միութեան եւ առաջարկած որ իրենք ստանձնեն Մեղգոնեանի վերաբացումի եւ մատակարարման բոլոր ծախսերը:

Մարտ 19, 2010-ին Երեւանի մէջ գումարուեցաւ շատ բարձր մակարդակի ժողով - ասուլիս մը: Այդ խորհրդաժողով - ասուլիսին կը մասնակցէին Տէր Մեսրոպ Քհն. Արամեան («Այք» Կրթական Հիմնադրամի Նախագահ, Հայաստանէն) Արդէն Շելեֆեան (գործարար, բարերար՝ Զուհիցերիայէն), Կարապետ Տաքէսեան (ՄԿՀի նախկին փոխ Տնօրէն, Ֆրանսայէն), Աշոտ Ասլանեան եւ Մարտիրոս Մինասեան (Կիպրոսէն):

Այս խորհրդակցական - ասուլիսը տեղի ունեցած է «Հայելի» մամուլի ակումբին մէջ:

Վերոյիշեալ ասուլիսի ընթացքին արտայայտուած կարգ մը գաղափարները կը համընկնին իմ (Վարդգէս Գուրուեանի, իմբ.) «Ամեմտահայերէն Լեզուի Փրկութեան եւ Պահպանութեան Համար» յօդուածիս գաղափարներուն հետ: Սփիւռքեան մեր պայմաններու լաւ ծանօթ ազգայիններու համար, շատ յստակ է որ Արեւմտահայերէնը հոգեվարքի մէջ է եւ թէ Չոհրապետներուն եւ Վարուժաններուն Լեզուն մահացու հարուած ստացաւ Հ.Բ.Լ.Միութեան Մեղգոնեան Կրթական Հաստատութեան փակումով:

Չակերտներու մէջ առնուած միտքերը ասուլիսի անդամներուն միտքերն են: Կարգ մը տեղեր ես փորձած եմ որոշ գաղափարներ գուզորդել Մեղգոնեանի մեր կեանքին եւ ներկայ իրականութիւններու հետ:

Այսպէս...

«Այսօր չկան արդի դարաշրջանի շնչին եւ գարգացումներին համապատասխան դպրոցական գործող համակարգեր Հայաստանում եւ Սփիւռքում...: Լինելով աշխարհով մէկ սփռուած ժողովուրդ՝ հայ ժողովուրդը չունի միասնական պատկեր եւ գիտակցութիւն, թէ ինչպիսի՞ կրթական համակարգ է ինքն ուզում ունենալ, որ մի կողմից համապատասխանի այսօրուայ համաշխարհային չափանիշներին եւ միւս կողմից էլ համապատասխանի ազգ լինելու հանգամանքին: ...Այս սերունդն ի՞նչ ունի փոխանցելու յաջորդ սերունդին, որովհետեւ եթէ մենք որեւէ բան չունենք փոխանցելու յաջորդ սերունդը բարոյագրւում է... Այլ կերպ ասած՝ մեր ազգի գոյատեւման խնդիրը 21-րդ դարի բուն գարգացումների մէջ, կրթական զարգացումների մէջ համախմբուելն է կրթութեան առանցքի շուրջ: ...Այդ մտահոգութիւնից

ծնունդ է առել Սփիւռքում միջազգային հայկական դպրոց ստեղծելու ծրագիրը: Բոլորիս համար ակնյայտ է որ Մեղգոնեան Կրթական Հաստատութիւնն իր բազմամեայ հարուստ աւանդով, իր շրջանաւարտների հակայական փառանգով, իր աշխարհագրական շատ բարենպաստ տեղակայութեամբ ունի լաւագոյն հիմքերը, հնարաւորութիւնները, որպէսզի այդ միջազգային հայկական դպրոցն իրագործուի այդ տարածքի, այդ հիմքի վրայ:»

Ահաւասիկ ոչ Մեղգոնեանցի պատասխանատու անձնաւորութիւններու կարծիքով, Մեղգոնեան Կրթական Հաստատութիւնը ամենայարմար վայրն է ուր կարելի է ստեղծել համահայկական կրթութեան կեդրոնը, մտքի կաճառը, լուսոյ տաճարը: Չմոռնանք, համահայկական բառը: Ոչ միայն Սփիւռքի, այլ ամբողջ աշխարհի:

Լոս Անճելէսի մէջ ունինք 12 ամէնօրեայ վարժարաններ: Բացի «Ազգային Վարժարան»-ներէն, միւս բոլոր վարժարանները ինքնագլուխ կը գործեն, հետեւելով Քալիֆորնիոյ Կրթական Ծրագրին, բաց հայագիտական, հայակերտման առաքելութեան մէջ չկայ միացեալ ծրագիր կամ ուղղութիւն: Ամէն դպրոց իր հասկացած ձեւով «հայութիւնը կը պահէ»:

Բնականաբար Մեղգոնեանը վերաբանալու համար հակայական նիւթական ներդրումներու պէտք կայ: Ուրկէ պիտի գան այդ հակայական գումարները:

«Նախաձեռնող խումբը միաւորում է գանազան գործարարների Կիպրոսից, Շուեցարէայից, Ռուսաստանից եւ Հայաստանից, որոնք ունեն լրջագոյն տրամադրուածութիւն եւ որոշում ներդրում հաստատութեան վերաբացման պարագայում: ... Ե՛ւ կան ներդրում անելու պատրաստակամութիւն ունեցող մարդիկ, ե՛ւ կան կրթութեան գիտակ կազմակերպութիւն, անհատներ, որոնք պատրաստ են այսօր նոր բովանդակութիւն մատակարարել դպրոցի վերաբացման պարագայում:»

«Բաւականին լուրջ դրամական հիմք այսօր վերաբացման համար ես կարծում եմ, որ ապահովուած է: Անմիջապէս, երբ որ մենք համաձայնութիւնը ստացանք, մենք պատրաստ ենք վերանորոգման աշխատանքներն այնտեղ սկսել:» (Տէր Մեսրոպ)

Պահ մը երեւակայեցէք: Եթէ Բարեգործականը Մեղգոնեանը յանձնած ըլլար այս մարդոց (2010-ին կամ 2011-ին) այսօր Մեղգոնեանը բաց պիտի ըլլար եւ հարիւրաւոր Սուրիահայ աշակերտներ ապահով պայմաններու տակ պիտի ուսանէին ճոն: Մի մոռնաք որ դրամական հարց չկայ...

«Մեղգոնեանը յոյսի դուռ էր մեր երիտասարդների համար:»

Մեղգոնեանը սփիւռքի գաղութները եւ Հայրենիքը իրարու միացնող հաստատութիւնն էր: Հոն ուսանելու կուգային սփիւռքի գաղութային գաղութներէն եւ Հայաստանէն հայ պատանիներ: Այնտեղ Լիբանանահայը կը հանդիպէր Յուդահայուն, Սուրիահայը՝ Եգիպտահայուն, Իրաքահայը՝ Պարսկահային, Քուէթահայը՝ Պուլկարահայ-

յուն, Պոլսահայը՝ Հայաստանցիին, Երուսաղէմահայը՝ Ֆրանսահային, եւ այլն: Այսպէսով, նոյն յարկին տակ, սփիւռքի գանազան գաղութներէ եւ Հայաստանէն ու Ղարաբաղէն եկող հայորդիները կ'եղբայրանային իրարու, եւ Մեղգոնեանի մաքուր շունչով վերամիլտուելով կը գինուէին հայութեամբ, եւ վերադառնալով իրենց գաղութները, կը նուիրուէին հայակերտման սրբազան պայքարին:

«Դա (ՄԿՀ) սփիւռքեան կեանքի մէջ ունի մեծ աւանդ, իբրեւ կրթութեան մակարդակ: Հիմա կան որոշ բաներ կեանքի մէջ, որ չեն կարող վաճառել: Այսինքն՝ Ֆրանսան չի կրնար Սորբոնը վաճառել: Կան սրբութիւններ, որոնք պէտք է պահպանուին եւ պէտք է աւելի արդիական դառնան:»

«Մեղգոնեանի տուած կրթութիւնն ունեցել է շատ բարձր մակարդակ, շրջանաւարտներն ընդունուել են Օքսֆորդ, Քեմբրիջ, Հարվըրդի համալսարան, աշխարհի լաւագոյն համալսարանները: Դա միջազգային չափանիշներով շատ բարձրորակ կրթական հաստատութիւն է եղել: Ինք եղել է մեր լաւագոյն կրթական հաստատութիւններից մէկը:»

Պէտք կա՞յ մանրամասնելու... Ա. Շելեֆեանի միտքերէն (Զուհիցերիահայ գործարար, բարեբար)

«Ի՞նչ էր Բարեգործականի պատրուակը՝ աշակերտ չկայ, հայ ուսումը հոս տեղը տեղ չունի... Եթէ դուք ուզում էք մի հաստատութիւն ուժեղացնել եւ դարձնել արդիական, դուք աշակերտ կը գտնաք, բաց եթէ դուք չէք չէ՞ հետաքրքրուած դպրոց ղեկավարելու, ուրեմն՝ դուք ամէն միջոց կը ձեռնարկէք որ այդտեղ նոր աշակերտ չգայ... Այսօր իրենք ասում են՝ մենք հետաքրքրուած չենք ուսում տալու, այսինքն՝ Բարեգործականն ինքը չի ուզում այդ գործը: Մենք ասում ենք իբր հայ կազմակերպութիւն, որ մենք այդ նախաձեռնութիւնը կարող ենք ստեղծել, իրենց հետ պայմանագիրներ անելով՝ այդ ուսումը գետնի վրայ դնելու: Մենք պատրաստ ենք:»

Ուրեմն... մարդիկը պատրաստ են Մեղգոնեանը վերանորոգելու, արդիականացնելու, միջազգային բարձր կրթական մակարդակով դպրոցի վերածելու, պիւտիքէ բեռը իրենց վրայ առնելու, պայմանաւ որ Բարեգործականը բարի ըլլայ Մեղգոնեանը տրամադրելու այս մարդոց:

«Մենք բացարձակապէս հետաքրքրուած չենք, որ դա լինի մեր սեփականութիւնը, Բարեգործականը թող դա տա տնօրինման այն մարդկանց, ովքեր հետաքրքրուած են կրթութեամբ, կարող են ներդնել, կարող են որակեալ բովանդակութեամբ մատուցել:»

Տէր Մեսրոպ, նախագահը «Այք Կրթական Հիմնադրամ»-ին կը վստահեցնէ որ «բաւականին լուրջ դրամական հիմք այսօր վերաբացման համար ես կարծում եմ, որ ապահովուած է:»

Բայց այս «Ապագայի Դպրոց»ը ի՞նչ նկարագիր պիտի ունենայ: Բացի շատ բարձրորակ ուսում ջամբելէն, ինչո՞վ պիտի տարբերի միւս հարիւրաւոր հայ-

կական դպրոցներէն:

Կարդանք Տէր Մեսրոպ Քահանայ Արամեանի ծրագիրը:

««Ապագայի դպրոց»-ում երէխան լինելու է ոչ թէ գիտելիքների իւրացման պասիւլ օբիեկտ, այլ մասնակից: Կեանքի պէտք է կոչուի նաեւ պրոֆեսիոնալ ուսուցչի գաղափարը, այսինքն՝ ուսուցիչ, ով առաւօտուանից մինչ երեկոյ դպրոցում է, ով սովորեցնում ու սովորում է միաժամանակ:»

Մեղգոնեանը ըլլալով գիշերօթիկ վարժարան, մեծ թիւով ուսուցիչներ կալուածին վրայ կ'ապրին, ուսուցիչներու յատուկ բնակարաններու մէջ: Այս ուսուցիչներէն շատեր հերթապահութեան պաշտօններ ալ կը վերցնեն, եւ շատ կը շփուին աշակերտներու աւօրեային հետ: Նուիրեալ ուսուցիչներու գուրգուրանքին տակ հասակ առնող պատանին շատ աւելի հասուն եւ պատրաստուած դուրս կու գայ Հաստատութենէն, քան թէ ամէնօրեայ վարժարան յաճախող տղան:

«Դպրոցը պէտք է լինի հայ դպրութեան աւանդոյթների եւ արդի կրթական տեխնոլոգիաների համադրում: Այսինքն՝ երբ մէկը մտնում է դպրոց, սկսած ճարտարապետութիւնից, ամէն տեսակ սիմվոլիկ լուծումներից, որոնք արտայայտուած են այդ միջավայրում, պէտք է զգայ աւանդոյթի շունչը, պէտք է զգայ, որ ինքը ինչ-որ մի բանի կրիչն է եւ ժառանգորդը:»

Մեղգոնեան Կրթական Հաստատութեան շրջապատը իր «ճարտարապետական սիմվոլիկ լուծումներով» այդ «աւանդոյթի շունչը» կը փոխանցէ աշակերտին: Դպրոցին մուտքէն կը սկսի այդ խորհրդաւոր վեհութիւնը: Լիմասոլի մայր ճամբէն երբ կը մտնենք Մեղգոնեան, բլրան գագաթին կը հանդիպինք Ադա Կարապետ եւ Ադա Գրիգոր Մեղգոնեան եղբայրներու դամբանին: Ճերմակ մարմարով, քանդակներով եւ ուժի ցուցադրիչ հիւսուածքներով բարձրացած, Մեղգոնեան եղբայրներու կիսանդրիները խորհրդաւոր լրջութեամբ բաց բարեակցական ժպիտով կը դիմաւորեն եւ բարիգալուստ կը մաղթեն քեզի: Այդ եղաւ իմ առաջին տպաւորութիւնս երբ 1961-ին առաջին անգամ Մեղգոնեան մտայ: Ապա, դամբանին երկու կողմերը, եռաշարկ, փառաւոր գոյգ շէնքերը Մեղգոնեանի, ձախին՝ աղջկանց, աղին՝ մանչերունը, իրենց յատուկ ճարտարապետական ոճով, գեղեցիկ, աստիճանաւոր եւ կիսագմբեթապետի վրայ: Շէնքերու առջեւ բացուող պուրակները կարծես գիրենք ցանող որբերուն լեզուներով բարիգալուստ կը մաղթեն քեզի եւ կը յուշեն որ «ազգիդ վրէժը լուծելու չմոռնաս...» Կան տակաւին հայ մտաւորականներու եւ հերոսներու քանդակները, որոնք քեզ կը կապեն մեր պատմութեան միտքին եւ բազուկին: Իր դաշտերով, իր ծառուղիներով, իր գրադարանով, իր արուեստանոցներով եւ հանդիսասրահով եւ այլ բազմապիսի առաւելութիւններով, Մեղգոնեան Կրթական Հաստատութիւնը է՝ եւ կը մնայ մեր ազգին պատրաստող տիպար Հաստատութիւնը:

ԼՈՍ ԱՆՃԵԼՈՍԻ ՀԱՅ ՔՈՅՐԵՐՈՒ ՎԱՐԺԱՐԱՆ ՄՇԱԿՈՅԹԻ ԱՄԻՍ

ԼԻՆՏԱ ԳԱՆՏԻԼԵԱՆ

Սփիւռքի տարածքին հայ ժողովուրդը հնարամտութիւնը ունեցաւ մշակոյթը վերածելու ինքնապաշտպանութեան զէնքի, հայապահպանման իւրայատուկ վահանի, եւ հայրենիքը փոխարինող անմիջական ասպարի, օգտագործելով զայն ընդդէմ ցուլումի:

Նոյն մտահոգութենէ մղուած սփիւռքի տարածքին հայ համայնքներու ծաւալումով նաեւ բազմացաւ նոյն նպատակը հետապնդող մշակոյթի հնոցներ՝ վարժարաններ որոնք իրենց աւօրեան նուիրաբերեցին հայ մշակոյթին, զիրն ու գրականութեան ընդմէջէն հայ մանուկին ու պատանիին մէջ ներմուծեցին հայրենիքի սէրը, պատկանելիութեան զգացումը եւ ազգային գիտակցութիւն:

Նոյն նպատակներով առաջնորդուող Հայ Քոյրերու Վարժարանի տնօրէնութիւնն ու հայկական բաժանմունքի ուսուցչուհիները, իրենց կոչումը դարձուցած են՝ «Ապրիլ հայ մշակոյթով ապրեցնելու համար հայ մանուկն ու հայ դպրոցը այդ նոյն շունչով ու ոգիով» անտեսելով շրջանող աւօրեայի թոհուբոհը:

Հակառակ ամէնօրեայ հայերէն բազմատեսակ ծրագիրներու, Հոկտեմբեր ամսուայ ընթացքին անոնք քիչ մը աւելի կը ճոխանան

պարզեւելով անմոռանալի պահեր: Խումբին կ'ընկերանային Գալիֆորնիոյ թատերա-երաժշտական միութեան նախագահ Վիքթոր Մարտիրոսեան, փոխ նախագահ Նելլի Մանուկեան եւ վարչութեանէն յարգելի անդամներ:

Յիշենք որ երիտասարդ դերակատարները նաեւ առիթ ունեցան աշակերտներու հետ կէսօրուան ճաշը բաժնելու, միասնաբար խօսակցելու եւ ծանօթանալու:

Երկրորդ միջոցառումը որ ունեցան աշակերտները Երեքշաբթի Հոկտեմբեր 28ի ընդհանրապէս ամբողջ օրն էր: Նոյն օրուան առաւօտեան տեղի ունեցաւ աշակերտական Ս. Պատարագ օրուան պատարագիչն էր Կլէնտէյլի Կաթողիկէ եկեղեցու ժողովրդապետ՝ Հայր Անտոն Նորատունկեան, Ս. Սեղանին կը ծառայէին Եօթերորդ դասարանի աշակերտները: Հայր Անտոն պատշաճ քարոզ մը տուաւ շեշտելով՝ հայ լեզուի, հայ դպրոցի եւ հայ ուսուցիչի կարեւորութիւնը աշակերտները անուանելով բախտաւորներ, որովհետեւ հայկական դպրոց գալու հնարաւորութիւնը ունին, ապա աշակերտները հաղորդուելով հեռացան սրահէն պատրաստուելու յաջորդ ծրագրին:

Նոյն օրուան յետմիջօրէին վարժարանի Տնօրէնութիւնը, ուսուցիչներ, ծնողներ եւ աշակերտներ մէկտեղուած էին վարժարանի



վարժարանիս երաժշտութեան ուսուցչուհի Վարդուհի Պաղտասարեան:

Գեղարուեստական ծրագրի վերջաւորութեան խօսք առաւ հայերէն բաժնի պատասխանատու Լինտա Գանտիլեան, ան դրուատեց հայ ուսուցիչները, որոնք աշակերտներու հոգիին մէջ կը սերմանեն հայերէն լեզուի հանդէպ սէր ու հաւատարմութիւն, եւ իրենց նուիրուիրական հոգատարութեամբ իրենց աշակերտներու հոգիներուն մէջ կ'աճեցնեն հայ լեզուի բուրաստաններ, ապա շնորհաւորեց բոլոր հայրենաւանդ ուսուցիչները, որոնք կը շարունակեն մեր առաջին ուսուցիչ՝ Մեսրոպ Մաշտոցի աշխատանքը:

Հանդիսութեան վերջին բաժնով ներկայացուցաւ թատերադրութիւն մը կատարողութեամբ՝ Եօթերորդ կարգէն աշակերտներ՝ Արփի Պօյաճեանի, Ռիթա եւ Մէրի Քէօզկէրեաններու, Յուլիա Քիլիսեանի, Քաթիանա Գասպարեանի, Վանա Յովսէփեանի եւ Նոյ Շաթոյեանի, իսկ Նարեկ Քիւրտեան թատրոնին կ'ընկերակցէր Չութակի վրայ նուագելով յարմար եղանակներ:

Աշակերտները ճարտարօրէն ներկայացուցին Յովհաննէս Թումանեանի «Կիկոսի Մահը» շատ բնական խաղարկութեամբ, սահուն եւ վարժ լեզուով հաճոյքի պահեր ստեղծելով ներկաներուն:

Հանդիսութեան աւարտին հայկական հիւրախրութեան օրինակով բոլոր ներկաները հիւրասիրուեցան Յուլիա Քիլիսեանի ծնողներուն կողմէ տրամադրուած Գաթաներով:

Հանդիսութեան եզրափակիչ խօսքը տուաւ Կլէնտէյլի Փոխ ժողովրդապետ Տէր Թովմաս Վրդ. Կարապետեան, որ աշակերտները յորդորեց հայկական մշակոյթով լիցքաւորուելու եւ քաջալերեց զանոնք որպէսզի հայերէն լեզուով արտայայտուին գրաւոր թէ բանաւոր: Ապա շնորհաւորեց հայերէն լեզուի ուսուցիչները, որմէ ետք Տնօրէնուհի Քոյր Լուսիա բեմ հրաւիրեց բոլոր հայրենաւանդ ուսուցիչները եւ երաժշտութեան ուսուցչուհին, շնորհաւորեց զանոնք եւ շնորհակալութիւն յայտնեց անոնց ստանձնած պատասխանատու աշխատանքին զանոնք պատուելով ծաղկափունջերով:

ԹՈՒՐԻԱՅԷՆ ԵՐԵՍ ԹԵՔԱԾ

Շարունակուած էջ 8-էն

համայնքին, իսկ իրանի մասնետականներու եւ հայ քրիստոնեաներու միջեւ յարաբերութիւնները միշտ դրական զարգացում ունեցած են: Անոնք նաեւ քննարկեցին տարածաշրջանին մէջ թրքական կառավարութեան բացասական դերը: Արամ Ա. կաթողիկոս նաեւ հանդիպեցաւ Սպահանի նահանգապետին եւ Միջմշակութային եւ միջկրօնական երկխօսութեան իսլամական կազմակերպութեան առաջնորդներուն հետ: Իրանի նախագահի ազգային եւ կրօնական հարցերով յատուկ օգնական Ալի Եւուսեանի նախագահ Ռոհանի անունով ընթրիք կազմակերպեց՝ ի պատիւ Արամ Ա.

կաթողիկոսի: Ելոյթ ունենալով Նոր Զուղայի համաժողովին՝ Թուրքիայէն Հայոց ցեղասպանութեան պահանջատիրութեան վերաբերեալ, կաթողիկոսը յայտարարեց. «Անկախ հանգամանքներէ եւ անցած տարիներէն՝ մենք պիտի շարունակենք արդարութիւն պահանջել մեր նահատակներուն համար»:

Չորս հայ դեկավարներու զուգադիպած այցերը իրան եւ Յորդանան՝ կ'ամրապնդեն խիստ դրական կապերը երկու մասնետական երկիրներուն եւ Հայաստանի ու հայ ժողովուրդին միջեւ եւ կ'ընդգծեն Թուրքիոյ յաւելեալ մեկուսացումը Միջին Արեւելքէն:

Թարգմանեց՝ ՌՈՒՋԱՆՆԱ ԱՒԱԳԵԱՆ

ԷԹԻՆ ՍԱՐՉՈՒՊԵԱՆ

Շարունակուած էջ 8-էն

Երկու կողմերը, այսինքն Հայաստան եւ սփիւռք պէտք է լաւ հասկնան, որ սփիւռքը իրաւունք չունի Հայաստանի պետական շահերուն վնասելու կամ խաչաձեւելու: Բնականաբար Հայաստանը, որպէս դէտ կրնայ մասնակցել այդ գործընթացներուն եւ գործնական քայլերու հասնելու պահուն, որպէս սփիւռքի տուժած հայութեան իրաւական տարածք, կրնայ մասնակցել գործնական ընթացքներուն:

Այս բոլորը խօսելու վրայ են: Կարեւորը սփիւռքի ըսելիքն ու

ընելիքն է, որուն մեծագոյն մասը մինչեւ այս պահը դժբախտաբար ամբօրէն կառչած է ցեղասպանութեան հարիւրամեակը «տօնահանդէս»ի վերածելու գաղափարին: Այդ սպասուածային միջոցառումները ընենք, վատ չէ, բայց կարեւորը իրական գործի մասին մտածելն է:

Ահմետ Տաւուսօղլուի Մահուաբանը առաջին խորհրդական նշանակելու որոշումը կարեւոր քայլ մըն է ճատրակի սեղանին վրայ: Սեղան մը, որուն վրայ մինչեւ այս պահը մենք չկանք ու հարկ է որ ըլլանք, ապահովելու համար խաղը մեր օգտին ուղղելու նախնական հիմերը:



եւ կը բազմանան կը դառնան աւելի հաճելի, գործնական եւ տեսակաւոր, ինչպէս՝ հայկական ճաշերու ծրագիր միջնակարգ դասարաններու համար, թատրոն երգեր եւ արտասանութիւններ զծագրութիւններ եւ հէքիաթասացութիւններ:

Առ այդ Հայ Քոյրերու վարժարանի աշակերտները Հոկտեմբեր ամսուայ ընթացքին մշակոյթի ուղղուած ծրագիրներու եւ յաւելեալ արտասանութիւններու եւ երգերու ուսուցումի կողքին ունեցան երկու գլխաւոր ելոյթներ, առաջինը՝ Ուրբաթ 24 Հոկտեմբերին աշակերտները մեծ հաճոյքով եւ ուրախութեամբ ներկայ գտնուեցան «Մանկական թատերական դպրոց» ի ներկայացուցած «Մնուշիկը եւ կախարհները» երաժշտախառն թատրոնին որ քաղուած էր Սաղաթել Յարութիւնեանի հէքիաթներէն եւ երաժշտութիւնը գրած էր Մելիք Մաւրսաթալեանը, բեմադրութեամբ Մանկական թատերական դպրոցի ղեկավար՝ Արսէն Վարդանեանի: Դերասանները՝ երիտասարդ ուսանողներ որոնք ճարտարաւորութեամբ եւ համոզիչ կատարեցին իրենց բաժինները մականիսացնելով աշակերտները եւ անոնց

Դանիէլեան սրահէն ներս, հանդիսութիւնը իր ներկայութեամբ կը պատուէր Կլէնտէյլի Հայ Կաթողիկէ եկեղեցու փոխ ժողովրդապետ՝ Տէր Թովմաս Վարդապետ Կարապետեան եւ այլ հիւրեր:

Հանդիսութիւնը պաշտօնական ձեւով ընթացք առաւ Հայաստանի Հանրապետութեան քայլերգի երգեցողութեամբ, օրուան հանդիսավարն էր ուսուցչուհի Լինտա Գանտիլեան որ հրաւիրեց վարժարանի Տնօրէնուհի Քոյր Լուսիա տալու օրուան պատգամը: Քոյր Լուսիա իր պատգամի մէջ բացատրեց թէ մեր ամէն օրուայ աշխատանքը ինքնին մշակոյթ է մեր հայերէն խօսիլը կարգալ ու գրելը մշակոյթ է ապա իր խօսքը եզրակացուց Սուրբ Յովհաննէս Պողոս Բ. Պապին հետեւալ խօսքով՝ «Քրիստոնէական հաւատքը մշակեց ու բերեղացուց Հայ Մշակոյթը, փոխադարձաբար ալ Հայ Մշակոյթը նպաստեց Քրիստոնէական հաւատքի տարածմանը՝ մասնայատուկ ոճով ու ճանապարհով»:

Հանդիսութիւնը շարունակուեցաւ օրուան պատշաճ երգերով եւ արտասանութիւններով որոնց դաշնամուրի վրայ կ'ընկերակցէր

ԱՄԵՆԵՆ ՆԵՂԱՑՈՒՑԻՉ 3 ԽՕՍՔԵՐՈՆ ՏԱՌԱՊԱՆՔԻ ՄԵՋ ԳՏՆՈՒՈՂ ԱՆՁԻ ՄԸ ՀԱՄԱՐ

Երբ ընկեր մը կամ բարեկամ մը գտնուի դժուար կացութեան մէջ՝ կորուստի, ամուսնալուծման, ճախողութեան կամ նման դէպքերու հետեւանքով, մարդիկ յաճախ կ'արտայայտեն իրենց զգացումները արտասանելով ժամանակի ընթացքին սովորական դարձած արտայայտութիւնները: Այս երեւոյթը ամէնէն շատ կը նկատուի Ֆէյսպուքի կամ նման ընկերային կայքերու վրայ՝ երբ մարդիկ արտայայտեն իրենց տառապանքին մասին:

Արտայայտութեան յաջորդող նկատողութիւնները կամ «գոմէնդները» յաճախ կրկնողական նախադասութիւններ կ'ըլլան:

Սովորական դարձած այս «քլիշէ» խօսքերէն են՝ «Աստուած հոգին լուսաւորէ», «Աստուած սիրելիներդ պահէ», «Կեանքը քեզի», «rest in peace», «you are in my thoughts», եւ այլն:

Երբեմն մարդիկ նոյնիսկ վերոնշեալ արտայայտութիւնները կը գրեն կամ կ'արտասանեն պարզապէս պարտականութեան համար: Հետեւեալ երեք արտայայտութիւնները, ըստ կարգ մը մասնագէտներու, կրնան չափազանց անհանգստացնել տառապող անհատը:

Ըստ հոգեբաններու, մարդիկ կը փորձեն իրենց ընկերը համոզել թէ կը զգան այն ինչ որ իրենց տառապող ընկերը կը զգայ: Այս մէկը նեղացուցիչ կրնայ ըլլալ, նոյնիսկ երբ մարդիկ ենթադրեն թէ նոյնանման կացութեան մէջ ըլլալով կրնան զգալ այլ մարդոց զգացումները: Իրականութեան մէջ, սակայն պահի մը ընթացքին, իւրաքանչիւր անձ կ'ունենայ իրեն համար իւրաքանչիւր զգացումներ, որոնք ոչ մէկուն կողմէ կրնան ամբողջովին ըմբռնել ըլլալ: Մասնագէտներ կը բացատրեն թէ կարելի է որոշ չափով հասկնալ այլ մարդոց նեղութեան սաստկութիւնը, սակայն անոնց

զգացումները բաժնելու ակնարկը պարզապէս ձեւակերպութիւն կրնայ ըլլալ:

Մեր ընկերութիւններուն մէջ սովորութիւն է նաեւ անդադար չիշեցնել Աստուծոյ դերը եւ կամ քը կեանքի ընթացքին պատահած դէպքերուն վերաբերեալ: Այս եւ Աստուծոյ հետ կապուած նման արտայայտութիւններ եւս կրնան կարգ մը զգացական հանգրուաններու պարագային նեղացուցիչ թուիլ մարդոց: Նաեւ, մեր ընկերութեան մէջ մերժուած գաղափար է թերահաւատներու կամ ընդհանրապէս հաւատք չունեցող մարդոց գոյութիւնը, սակայն զգացականօրէն դժուար հանգրուաններու պարագային անհրաժեշտ է յարգել մարդոց զգացումները եւ սկզբունքները:

Ամէնէն շատ օգտագործուող արտայայտութիւններէն մէկն է նաեւ «երբ պէտք ըլլայ դիմէ ինձի»: Իրականութեան մէջ, դժուար կացութեան մէջ գտնուող մարդիկ հազուադէպ, որ իրենք նախաձեռնեն այս կապը: Օգտակար դառնալու պարտականութիւնը իրենց յանձնելը բնաւ օգտակար չէ: Վստահ, որ դժուար պայմաններու մէջ գտնուող մարդիկ անպայման պէտք ունին իրենց ընկերներու եւ բարեկամներու քաջալերանքին եւ օգնութեան, սակայն իրենք բնաւ պատրաստ չեն ըլլալ օգնութիւն խնդրելու իրենց ընկերներէն:

Մասնագէտներու այս մտտեցումը նկատի ունենալով, կարելի է ի մտի պահել թէ որքան նոյնանման ըլլան կեանքի պայմանները բոլորին համար՝ իւրաքանչիւր անձ յատուկ ձեւով կ'ըմբռնէ իր պայմանները եւ կացութիւնները: Անկարելի է բոլորին հետ վարուիլ միեւնոյն ձեւով, բոլորին խրատել նոյն ձեւով եւ բոլորին արտասանել նոյն խօսքերը: Թելադրելի է, որ նախքան անհատի մը օգտակար դառնալը, լաւ ճանչնանք զայն:

ԴՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ ՍՏԵՂՈՇԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԻՆԳ ԿԱՐԵՐԻ ԿԵՏԵՐ

Մեզմէ իւրաքանչիւրս ունի յատուկ բառեր, արտայայտութիւններ եւ խօսքեր որոնք սովորաբար կը կրկնէ իր մտքին մէջ:

Առանց անդրադառնալու, բոլորս կ'որդեգրենք բառեր եւ արտայայտութիւններ որոնք կ'ուզենք յաճախ կրկնել մեր մտքին մէջ: Հոգեբանական ուսումնասիրութիւնները ցոյց կու տան թէ մեր մտքին մէջ յաճախ կրկնուող արտայայտութիւնները մեծ ազդեցութիւն կրնան ունենալ մեր վրայ: Այս արտայայտութիւնները կրնան հիմը դառնալ մեր մտածելակերպին, տրամադրութեան, զգացումներուն:

Ըստ հոգեբաններու, կարգ մը մարդոց պարագային միտքին մէջ գոյութիւն ունեցող կրկնողական միտքերը նաեւ կրնան արտասանուիլ սովորաբար երբ մարդիկ առանձին ըլլան: Այս self-talk-երու կամ առանձին խօսելու սովորութիւնը արդիւնք է տառապանքի կամ նեղութեան: Նման խօսակցութիւններու պարունակութիւնները յաճախ ժխտական կ'ըլլան:

Ժխտական միտքերը կը յառաջացնեն ժխտական խօսքեր, որոնք իրենց կարգին պատճառ կը դառնան ժխտական վարմունքի եւ ժխտական կեանքի ընթացքի: Մասնագէտներ կը շեշտեն թէ նման ընթացք մը փոխելու համար, մարդիկ նախ պէտք է փոփոխութիւններ կատարեն իրենց միտքերուն մէջ՝ յատկապէս կրկնողական արտայայտութիւններուն գծով:

Ինչպէ՞ս կարելի է ժխտական ուժերը վերածել դրականի: Ինչպէ՞ս կարելի է դրականութիւն ստեղծել մեր կեանքին մէջ: Հետեւեալ հինգ գործօնները կ'օգնեն, որ մարդիկ դրականութիւն ստեղծեն իրենց մտածելակերպին եւ կեանքին մէջ:

Դրականութեան ամէնէն կարեւոր

ուր սիւներէն է երախտապարտութիւնը: Դրական հոգեբանութեան (positive psychology) մասնագէտները կը թելադրեն ամէն օր գրաւոր արտայայտութեամբ լիչել երեք բան որոնց համար երախտապարտ կը զգանք:

Հոգեբաններ կը թելադրեն որ մարդիկ անդադար հետեւին իրենց մտածումներուն եւ յայտնաբերեն թէ ե՞րբ եւ ի՞նչ պայմաններու տակ անոնք հակամէտ են ժխտական ձեւով մտածելու, գանգատելու կամ ուրիշները դատելու: Իւրաքանչիւր ժխտական միտք կարելի է չէզոքացնել դրական միտքով մը:

Հետեւաբար, երկու դրական միտքեր ընդդէմ մէկ ժխտական միտքի կրնան դրականութիւն ստեղծել ուղեղին մէջ:

Բոլորս լաւ գիտենք թէ մարմինն ու միտքը որքան կապուած են իրարու եւ թէ որքան մէկուն առողջութիւնը առնչուած է միւսին հետ: Այս տեսութեան վրայ հիմնուելով, հոգեբաններ խորհուրդ կու տան առողջ եւ ուրախ պահել մարմինը:

Թէեւ «դիմակ»ներու օգտագործումը ունի ժխտական հասկացողութիւն, սակայն ժպտուն դիմակներով դէմքը ծածկելը կրնայ բաւական դրական ներդրում ունենալ հոգեկան առողջութեան վրայ: Ժպիտը ունի աներեւակալիլ ուժ մը: Նոյնիսկ օտարները ժպիտով դիմաւորելը կրնայ գտահատուիլ դրականութեամբ:

Նշանաւոր առածի մը համաձայն՝ գրպանին մէջ երկու խնչափառ եթէ դնես երկուքը կը մնան այստեղ, սակայն եթէ մէկը հանես միւսը ձգես, երկուքը դուրս կ'ըլլեն գրպանէն: Այլ խօսքով, դրականութիւն ստեղծելու եւ զայն պահպանելու համար կարելի է որ անձը ինքզինք շրջապատէ դրական մարդոց հետ:

ԱՐԴԵՕՔ ՄԱՐԶԱՆՔԻ ՏԵՍԱԿԸ ԱԶԴԵՑՈՒԹԻՒՆ ՈՒՆԻ՞ ԱՐԴԻՒՆԱՒԵՏՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ

Քանադացի գիտնականներ վերջերս քննած են մարզանքներու գանազան տեսակներու ազդեցութիւնը ուղեղի առողջութեան վրայ: Գիտնականները յատկապէս ուսումնասիրած են ուղեղի մտածելու, ուշադրութեան, կեդրոնացումի եւ ծրագրաւորման պատասխանատու բաժնին եւ մարզանքի ձեւին միջոցը կապը:

Դրական լուրը այն է, որ ուսումնասիրութիւնը կը պարզէ թէ մարզանքէն օգտուելու համար պարտադիր չէ մարզասրահ յաճախել: Նոյն մարզաձեւերը տան կամ բնութեան մէջ կատարելը կրնայ նոյնքան օգտակար ըլլալ:

Ժամանակին գիտնականներ համոզուած էին, որ այրուիլ քար եւ քարտիօ մարզաձեւերը, ինչպէս՝ քալելը, վազելը եւ լողալը, ամէնէն

շատ օգտակար են թէ՛ ֆիզիքական եւ թէ՛ մտային առողջութեան համար: Սակայն նորագոյն ուսումնասիրութիւնը ցոյց կու տայ թէ որքան մեծ ըլլայ անհատին տարիքը այնքան անկարելի կը դառնայ մարզանքին տեսակը: Այլ խօսքով, տարեցներու համար որեւէ մարզաձեւ օգտակար է ուղեղի առողջութեան համար:

Այս ուսումնասիրութեան մասին անդրադարձած է AGE գիտական ամսագիրը: Ուսումնասիրութեան մաս կազմած են 74 առողջ չափահասներ, որոնց տարիքը 62-էն 84-ի միջոց է:

Մոնրէյալի համալսարանի հոփանաւորութեամբ կատարուած այս ուսումնասիրութիւնը տեւած է ութ շաբաթ:

ԿԻՆԵՐՈՒ ՄՕՏ ՄՐՏԻ ԿԱԹՈՒԱԾԻ ՀԵՏԵՒԱՆՔՈՎ ՅԱՌԱՋԱՑՈՂ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

Լիթուանացի գիտնականներ քննելով առնուազն մէկ անգամ սրտի կաթուած դիմագրաւած կիներու հոգեկան առողջութիւնը՝ կաթուածէն առաջ եւ ետք, յայտնաբերած են թէ սրտի կաթուածը կիներու մօտ կրնայ յառաջացնել հոգեբանական լուրջ հարցեր:

Այս ուսումնասիրութեան արդիւնքները պարզած են թէ սրտի կաթուածէ ետք, կիներու մօտ կրնան բարձրանալ անձկութեան (anxiety) եւ ընկճուածութեան (depression) հաւանականութիւնները: Իսկ սրտի կաթուածի հետեւանքով ընկճուածութեան տառապող կիներու մօտ բարձր է կաթուածէն ետք վեց ամսուան ընթացքին մահանալու վտանգը: Այս եզրակացութիւններուն հասնելու համար, հետազոտ-

ներ ուսումնասիրած են 160 կիներ, որոնք սրտի կաթուածի հետեւանքով այցելած են Լիթուանիոյ մէջ գտնուող Վիլնիւս համալսարանի հիւանդանոցը:

Ըստ ուսումնասիրութեան արդիւնքներուն, սրտի կաթուածէ ետք կիներու մօտ մինչեւ 25 առ հարիւր համեմատութեամբ կրնայ բարձրանալ ընկճուածութեան տառապելու հաւանականութիւնը: Ուսումնասիրութեան մասնակիցներուն պարագային, 28.2 առ հարիւրը կ'օգտագործէին հակա-ընկճուածալիս դեղահատեր (anti-depressants): Ընդհանուր առմամբ, սրտի կաթուած դիմագրաւելէ ետք կիները տղամարդոցմէ աւելի հակամէտ են տառապելու ընկճուածութեան եւ անձկութեան:

ԲԱՆՋԱՐԵՂԵՆՆԵՐԸ ԿՐՆԱՆ ԴԱՐՄԱՆԵԼ AUTISM-Ը

Մինչ գիտնականները Autism-ի բուժման գծով իրենց հետազոտութիւնները կը կատարեն պատուաստներու եւ դեղորայքի ծիրին մէջ, ամերիկեան նոր ուսումնասիրութիւն մը կը պարզէ թէ բոլորին հասանելի կարգ մը բանջարեղէններ ունին Autism-ի ախտանշանները մեղմացնելու յատկութիւնը:

Հոգեբանական ծիրին մէջ դժուար է բուժել այն անհանգստ-

տութիւնները, որոնց ծագման պայմանները անյայտ են: Autism-ը մաս կը կազմէ այս անհանգստութիւններու շարքին: Մինչեւ օրս անյայտ կը մնան Autism-ի պատճառները, սակայն գիտնականներ յաջողած են յայտնաբերել հիմնական գործօններ, որոնք կրնան նպաստել անհանգստութեան:

Փորձագէտներ վերջերս իրենց ուշադրութիւնը դարձուցած են

autism-ի բուժման կարելիութիւններուն եւ միջոցներուն վրայ:

Այս գծով Միացեալ Նահանգներու մէջ կատարուած ուսումնասիրութիւն մը ցոյց կու տայ թէ կարգ մը բանջարեղէններ կրնան նպաստել անհանգստութեան բուժման: Ծաղկակաղամբի եւ նման բանջարեղէններու մէջ գտնուող Սալիկորաֆէյն նիւթը կրնայ մեղմացնել Autism-ի ախտանշանները: Յատկապէս բաց գոյն ունեցող բանջարեղէնները կրնան օգտակար դառնալ Autism-է տառապող անձերուն:

Միացեալ Նահանգներու մէջ անհանգստութիւնները հսկող եւ կանխարգիլող ամերիկեան CDC կազմակերպութեան համաձայն՝ ներկայիս Autism-ը ամէնէն արագ աճ արձանագրող անհանգստութիւնն է Միացեալ Նահանգներու մէջ: Վերջին 12 տարիներու ընթացքին երկրին մէջ Autism-ի համեմատութիւնը 289.5 առ հարիւրով բարձրացած է: Ներկայիս, Միացեալ Նահանգներու մէջ աւելի քան երեք ու կէս միլիոն ամերիկացիներ ախտաճանաչուած են Autism-ով:

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԶՕՆՈՒԱԾ ՅՈՒՇԱՐՁԱՆ

Շարունակուած էջ 6-էն

եղած է Հայաստանի արտաքին քաղաքականութեան: Յայնեց նաեւ, որ թէեւ կարգ մը նահանգներ եւ ազգեր պաշտօնապէս ճանչցած են Հայոց Յեղասպանութիւնը, սակայն աշխատանքը կը շարունակուէր նոր թափով: Յուշարձանի հիմնարկէքի արարողութեան ներկայ էր նաեւ Ֆրէզնոյի Հայաստանի Պատուակալ Հիւպատոս՝ մեծայարգ Տիար Պերճ Աբգարեան:

Հայոց Յեղասպանութեան ճանաչման պարագան գլխաւոր նիւթն էր օրուան, որու մասին անդադարձան խօսք առնողներ՝ շեշտելով, որ տակաւին թուրքիան եւ Ամերիկայի Միացեալ Նահանգները չեն ճանչցած այս ճշմարտութիւնը: Խօսք առնողներուն մէջ էին Rep. Jim Costa, D-Fresno and Assembly Member Jim

Patterson, R-Fresno:

Պառլո Տէր Մկրտիչեան ներկաներուն ծանօթացուց Հայոց Յեղասպանութեան Հարիւրամեակի Յանձնախումբի Անդամները, գնահատեց անոնց նուիրեալ ծառայութիւնը, որ տարի մը առաջ ծրագրած էին պաշտօնապէս ոգեկոչելու Հայոց Յեղասպանութեան Հարիւրամեակը:

Պրն. ձիւմ Գօսթա յատարարեց, որ այս նոր յուշարձանը պիտի դառնայ Միացեալ Նահանգներու մէջ կանգնած շուրջ երեսուն յուշարձաններէն մին՝ որոնք ձօնուած են Հայոց Յեղասպանութեան:

Պառլո Տէր Մկրտիչեան յայտարարեց, ըսելով. «Մենք ակնատես կը դառնանք մեր պատմութեան նոր շրջանին: Ասիկա պիտի ըլլայ տեսանելի յուշարձանը, որ պիտի արտայայտէ մեր ոգին»:



ցութեան Շրջանի վարիչ Մարմինն անունով պատուեց հիւրերը՝ տիկիներուն յանձնելով գեղեցիկ ծաղկեփունջեր, իսկ Ընկ. Վազգէն Գալթաքեանին եւ Դոկտ. Աբէլ Քհնյ. Մանուկեանին՝ յուշանուէրներ: Աւարտելով ուրախ երեկոն, հետեւեալ օրուան արշալոյսը իր հետ պիտի բերէր կառուցողական քանի մը նոր հանդիպումներ եւ ծրագրերու իրականացումներ, երբ ահաւոր գոյժ մը խոր սուգի մատնեց Մոնթէվիտէի հայ գաղութին անդամները: Ընկ. Մարսէլ Քէօզկէրեան ոչ եւս էր:

Հանգուցեալ Տոքթ. Մարսէլ Քէօզկէրեանի դազողին առջեւ, որ ծածկուած էր Հնչակեան Կուսակցութեան կարմիր դրօշով, Ուրուկուայի Ս.Դ.Հ.Կ. Շրջանի վարիչ Մարմինն անունով խօսք առաւ Ընկ. Տիէկո Գարամանուկեանը: Ան դրուատեց կուսակցական գաղափարակիր ընկերջ կեանքն ու ծառայական բազում ներդրումները: Իբրեւ վիրաբոյժ, ան որ շատերուն կեանքը փրկած էր, հրաժեշտ կու տար կեանքին՝ այն չափ վաղաժամ եւ անսպասելի: Հանգուցեալ Ընկ. Տոքթ. Մարսէլ Քէօզկէրեանի յիշատակը կը մնայ անմոռաց Ուրուկուայի Հնչակեան Կուսակցութեան պատմութեան ոսկեմատեանին մէջ:

անունակոչութեան փաստը: Նորածիններէն մին կոչուած էր Շաւարշ, իսկ միւսը՝ Վազգէն: Շաւարշ Սրբազանի եւ Վազգէն Ա. Վեհափառի անուններով, քանի էջմիածնասէր հայ ժողովուրդին համար անոնք էին ճշմարիտ հաւատքին եւ եկեղեցիին հօր պահպանները, նաեւ հայրենասիրութեան լուսեղէն փարոսները: Տակաւին մինչեւ այսօր հաճընցի մեր հիւրերուն ընտանիքներուն մէջ վառ մնացած է Շաւարշ Սրբազանին յիշատակը, ուստի, Մոնթէվիտէօ գտնուելով, անոնց համար նուիրական պարտականութիւն մըն էր այս այցելութիւնը, որ իրականացաւ քաղաքի անգլիական գերեզմանատան մէջ: Հոգելոյս Սրբազանին հոգույն լուսաւորութեան համար երախտագիտութեան խորագրած զգացումներով աղօթք կարդաց Դոկտ. Աբէլ Քհնյ. Մանուկեանը:

«Աստուած հոգիդ լուսաւորէ, հերոս Սրբազան, յայտարարեց ան, այս հիւրընկալ երկրին հողը թեթեւ ըլլայ յոգնաբեկ ոսկորներուդ վրայ: Թէպէտ աճիւններդ հոս կը հանգչին յաւիտեանական խաղաղութեամբ, բայց անթառամ յիշատակդ ու հոգիդ պայծառ կը մնայ անդաւաճանօրէն քեզ սիրող ժողովուրդիդ սրտին մէջ»:

Ազգային այսպիսի գործիչներու, հայ մշակոյթի եւ ինքնութեան պահպանման նուիրեալ մշակներու անձնդիր զոհողութիւններով է որ գոյութիւն ունեցաւ հայ Սփիւռքը աշխարհի բոլոր ծագերուն: Երէկ եւ այսօր, բայց վաղը դեռ շատ աւելի հայ Սփիւռքը կանգնած է հայապահպանման հօր մարտահրաւէրներու առջեւ: Կրցանք տոկալ եւ դիմագրաւել զանգան դժուարութիւններ՝ ահաւասիկ աւելի քան հարիւր տարիներ: Այժմ, աւելի քան երբեք, բոլորս հրաւիրուած ենք միասնական ուժերով վերակազմակերպելու սփիւռքահայ մեր կեանքը, համատեղելու մեր հաւաքական ներոյժն ու աշխատանքը, մշակելու նպատակային ուղղուածութիւն ունեցող նոր եւ ժամանակահատուց մարտավարութիւններ, ի խնդիր համահայկական գերագոյն շահերու պահպանումին, հայութեան բարգաւաճումին եւ ապահով պայպային:

Թղթակցութիւնը պատրաստեցին՝ Իրաւաբան Օրդ. Լիլիանա Մերտիքեան, Պուէնոս Այրէս եւ Ընկ. Տիէկո Գարամանուկեան, Ս.Դ.Հ.Կ. Ուրուկուայի Շրջանի վարիչ Մարմնի Ատենադպիր, Մանթէվիտէօ

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ ՊՈՒԷՆՈՍ ԱՅՐԵՍԻ ԵՒ ՄՈՆԹԵՎԻՏԵՈՅԻ ՄԷՋ

Շարունակուած էջ 7-էն

պատառին վրայ ցուցադրուող պատմական փաստաթուղթերով եւ լուսանկարներով, մեծապէս խանդավառեց ներկաները: Բանախօսը մասնաւորաբար ընդգծեց այն բոլոր դժուարութիւնները, որոնք ժընեւի մէջ դիմագրաւած էին Ս.Դ.Հ.Կ.-ի հիմնադիր անդամները՝ յանուն ազգի ազատագրութեան սրբազան գործին: Ան վերլուծեց պատմական հարուստ տուեալները հայ իրականութեան մէջ ազատագրական այդ շարժումի արագ տարածումին, գնահատեց լեղափոխական համոզումներով տոգորուած նուիրեալներու ինքնագոհութեան պատրաստակամութիւնը հայրենիքի ազատագրութեան զոհասեղանին, արեւմտեան Հայաստանի հայհոս բոլոր շրջաններէն մինչեւ Կ. Պոլսոյ Սուլթան Պայազիտ հրապարակին վրայ իրագործուած Քսան Կախաղաններու սրտածմբիկ իրադարձութիւնը՝ 15 Յունիս 1915 թուականին: Այս առթիւ, Զուրիցերիոյ մամուլը բողոքի յօդուածներով լայն անդրադարձ մը ունեցած էր իր էջերուն մէջ, հայոց ողբերգութիւնը ներազգային շրջագիծէն փոխադրելով միջազգային մակարդակի մը վրայ, անթաքոյց ցոյց տալով եւրոպական հասարակութեան, որ Երիտթուրք կառավարութիւնը մարդկութեան դէմ գործած էր ահաւոր ոճիր մը, բնաջնջելով ամբողջ ազգ մը՝ հայ ազգաբնակչութիւնը Արեւմտեան Հայաստանի եւ Կիլիկիոյ ամբողջ տարածքին:

լուսաւորութեան: Ապա քաղաքիս Հաճնոյ Հայրենակցական Միութեան հրաւերով շատ մը հայրենակիցներ համախմբուեցան Հաճըն Տան հիւրընկալ սրահներուն մէջ, միասնաբար ճաշակելու համար Առաջնորդ Սրբազան Հօր կողմէ օրհնուած Հաճնոյ հերոսամարտի 94-րդ տարելիցին ձօնուած յիշատակի ճիտապարտ: Միջոցառումի ընթացքին հաճընցիներու անունով սրտի գեղուն եւ բովանդակալից խօսքերով ելոյթ ունեցաւ Օրդ. Մաքրուհի Էօլմէսէքեանը, որ ընդգծեց ազգային աւանդներու եւ արժէքներու պահպանման խնդիրը, նաեւ զանոնք ներկայացնող մշակոյթի եւ գիտութեան մշակները գնահատել կարենալու կարեւորութիւնը:

ԲԱՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ Ս.Դ.Հ.Կ. ՄՈՆԹԵՎԻՏԵՈՅԻ ԱԿՈՒՄԲԻՆ ՄԷՋ

Երկուշաբթի, 27 Հոկտեմբերի երեկոյեան, Ս.Դ.Հ.Կ.-ի ակումբն էին հաւաքուած Մոնթէվիտէոյի հայ գաղութի մշակութասէր շատ մը անդամներ, ունկնդրելու համար Դոկտ. Աբէլ Քհնյ. Մանուկեանի բանախօսութիւնը: Հիւրերուն բարի գալուստ մաղթելէ ետք, Ընկ. Տիէկո Գարամանուկեան հայերէն եւ սպաներէն լեզուներով ներկայացուց օրուան գեկուցաբերը: Շահեկան բանախօսութիւնը, որ նոյնպէս Հնչակեան Կուսակցութեան կազմաւորման պատմութեան եւ Քսան Կախաղաններուն կը վերաբերէր, ունկնդրող հասարակութեան կողմէ արդարեւ ընկալուեցաւ խանդավառութեամբ: Երախտագիտութեամբ պէտք է նշել, որ բանախօսութիւնը զուգահեռաբար սպաներէնի թարգմանելու դժուարին գործը ստանձնեց Հ.Բ.Լ.Մ.-ի Նուպարեան վարժարանի հայկական բաժնի պատասխանատու եւ ծանօթ բանասէր Տիար Յովհաննէս Պոտուքեանը: Միջոցառումի աւարտին ջերմ խօսքերով ելոյթ ունեցաւ Ս.Դ.Հ.Կ. Ուրուկուայի Շրջանի վարիչ Մարմնի ատենապետ Տոքթ. Մարսէլ Քէօզկէրեանը: Ան իր ելոյթին մէջ ընդգծեց, որ «Հնչակեան ըլլալ գաղափարական համոզումի մը նուիրուելու իրողութիւն է»:

ՇԱԲԱՐՇ ՍՐԲԱԶԱՆԻ ՇԻՐԻՄԻՆ ՄՕՏ

Ծագումով ըլլալով հաճընցիներ, հիւրերուն անձկայրեաց փափաքներէն մէկն էր անպայման այցելել նաեւ Դամասկոսի երբեմնի հաճընցի Առաջնորդ՝ երջակա յիշատակ Գերշ. Շաւարշ Արք. Գուլումմեանին շիրիմը: Հոգելոյս Սրբազանը իր կեանքին վերջին կարճ շրջանը անցուցած էր իր քրոջ մօտ Մոնթէվիտէոյի մէջ, ուր ան կնքած էր իր մահականացուն: Գերշ. Սրբազանը եղած էր Դամասկոսի էջմիածնասէր ժողովուրդի անառարկելիօրէն սիրուած հոգեւոր-կրօնական հեղինակութիւնը: Ան իր օրինակելի եւ անբասիր կեանքով լայն ընդունելութիւն գտած էր ոչ միայն դամասկահայութեան հիւրընկալ օճախներուն, այլ ստուգապէս նաեւ անոնց սրտին ու մաքուր զգացումներուն մէջ: Անմնացորդ յարգանքը իր օրինակելի անձին նկատմամբ այնքան մեծ եղած էր, որ ծնողներ իրենց գաւակները անուանած են Շաւարշ անունով: Այս մասին կը վկայէ նաեւ պարագան Ս.Դ.Հ.Կ. Կեդրոնական վարչութեան անդամ Ընկ. Վազգէն Գալթաքեանի երկուորեակ եղբօր

ՀԱՃՆՈՅ ՀԵՐՈՍԱՍԱՐՏԻ 94-ՐԴ ՏԱՐԵԼԻՑԻՆ ՆՈՒԻՐՈՒԱԾ ՄԱՍԱԴԻ ՕՐՀՆՈՒԹԻՒՆԸ ՊՈՒԷՆՈՍ ԱՅՐԵՍԻ ՀԱՃՆ ՏԱՆ ՄԷՋ

Կիրակի, 26 Նոյեմբերի առաւօտեան, Պուէնոս Այրէսի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Առաջնորդանիստ Եկեղեցւոյ մէջ մատուցուեցաւ Ս. Պատարագ: Պատարագին էր թեմի բարեջան առաջնորդ Գերշ. Տ. Գիսակ Արք. Մանուկեանը: Պատարագի աւարտին կատարուեցաւ հոգեհանգստեան պաշտօն՝ նուիրուած Հաճնոյ հերոսամարտին զոհուած հերոսներու հոգիի

ԱՆՐԱԲԱՏԱԼԻ՝ ԲԱՅՅ ԻՐԱԲ...

Շարունակուած էջ 15-էն

Սերունդէ սերունդ մեզի կը համէին պատմութիւնները Մելգոնեանցիներու անցեալի յաջողութիւններուն, տղոց հերոսութիւններուն, մարգական, կրթական, գեղարուեստական, երգչախումբի, պարախումբի եւ այլ բնագաւառներու յաղթանակներուն: Ոսկեշղթայ յուշերը անցեալի մշտնջի մէջէն կուգային մեր հոգիները պարուրելու հայ տղոց երազներով: «Կիլիկիա» երգը կը յուզէր մեզ: Իրաքանչիւրս կ'ուզէինք «Թորոս Լեւոնի» ըլլալ եւ երթալ Կիլիկիան ազատագրելու: Հայերէնի թէ Հայոց Պատմութեան դասերու ժամանակ, գրական - գեղարուեստական հանդէսներու թէ հայրենիքէն ժամանած արուեստագէտներու ելոյթներուն, մեր մէջ կը բոցավառէին Հայրենիքի կրակը, մեր նահատակներուն կանչն ու վրէժը, մեր հերոսներուն սիրազործութիւններն ու ազգային աւանդութիւններուն համանուագը:

«Դպրոցում գործելու են ճոխ գրադարան...արուեստանոցներ եւ երաժշտական ստուդիաներ, սպորտային խմբեր, երգչախմբեր, ցուցասարահներ, կարիերայի եւ հոգեբանական պատրաստութեան կենտրոններ: ... գարգացնելու ենք մարդու գրելու եւ խօսելու ունակութիւնները...ուզում ենք հաւաքել համայնքաստեղծման կարեւորագոյն էլեմենտները եւ դպրոցը դնել որպէս համայնքի կենտրոն...Համայնքը դպրոցում պէտք է ներկայ լինի դպրոցական ակումբների (գրական, մշակութային), սպորտային միջոցառումներին...»

Մելգոնեանցիներս շատ լաւ գիտենք որ վերոնշեալ տուեալները արդէն իսկ գոյութիւն ունենին ՄԿԶ-ի մէջ: Տակաւին՝ քիչ մըն ալ աւելին: Սակայն, ոչ Մելգոնեանցի մեր բարեկամներուն համար, հոս կարտագրեմ «Արեւմտահայերէն Լեզուի Փրկութեան եւ Պահպանութեան Համար» յօդուածէս մէջ բերումներ:

«Մելգոնեան Կրթական Հաստատութիւնը իր գիշերօթիկի հանգամանքով, տասնամեակներ շարունակ պատրաստած է հայեցի արժէքներով օժտուած հպարտ սերունդներ: Գիշերօթիկի պայմաններուն մէջ սերունդներ շարունակ կազմաւորուած են որպէս լաւ հայերէն գիտցող տղաք: Մեծ է թիւը Մելգոնեանցի նուիրեալ ուսուցիչներուն, տնօրէններուն, խմբագիրներուն, արուեստագէտներուն, նկարիչներուն, երաժշտագէտներուն, գրագէտներուն, ակադեմիկոսներուն, քաղաքական գործիչներուն ... ՄԿԶ-ի ճոխ գրադարանը ... Շաբաթական գրական-գեղարուեստական հանդէսներով, արտասանական, երգու պարի մրցումներով, երգչախումբով, պարախումբով, թատերական ներկայացումներով, վիճաբանական ելոյթներով այս աշակերտները պիտի վարժուին նաեւ բեմի կեանքին...Ջանազան աշակերտական «խմբակ»ներու միջոցաւ (ՀԲԸՄԻութեան աշակերտական մասնաճիւղ, աշակերտական

խորհուրդ, գրական, պատմական, մարգական, թատերական, երգչախումբի եւ այլ յանձնարումներով) Մելգոնեանցիները պիտի մարգուռին նաեւ ժողովական կեանքին եւ կանոններուն եւ պիտի կարենան իրենց քաղաքներուն մէջ վերակազմակերպել գաղութային օղակները...» (Յօդուածը ամբողջութեամբ կարդալ www.melkonianforever.org կայքին վրայ):

Եւ գիտենք որ գաղութը միշտ ներկայ էր Մելգոնեանի գեղարուեստական թէ մարգական միջոցառումներու, ինչպէս Մելգոնեանը ներկայ էր գաղութի կարեւոր ձեռնարկներուն:

Հայելի պատկերը՝ կատարեալ, երազային դպրոցին:

Գալով Արեւմտահայերէն լեզուի պահպանման՝ «Արեւմտահայերէն լեզուն լիազօրուած է պահպանման եւ Եւրախորհրդով Կիպրոսի մէջ: Այսօր օրենքով Եւրոպայում ենտն ընդունել է, որ արեւմտահայկական լեզուն պէտք է պահպանուի, եւ Կիպրոսը լիազօրուած է, երաշխուորուած է, որ այդ բանը պէտք է տեղի ունենայ: ...ինչու՞ ենք փակում, ինչպէ՞ս կարելի է փակել այդ գանձը: Արեւմտահայկական լեզուն պէտք է պահպանուի Սփիւռքում: Եւ դա (ՄԿԶ) եղել է համար մէկ ուսումնական հաստատութիւն: ... Մենք դարձել ենք միջազգային ժողովուրդ... մենք պէտք է պահպանենք սփիւռքեան իրականութիւնը՝ ուժեղացնելու համար հայրենիքը: Արեւմտահայերէն լեզուն եւ իր սպեցիֆիկը Հայաստանի մէջ կարող է լինելու, Հայաստանն ունի իր լեզուն...»

«Քանի որ մեր ժողովուրդին 2 / 3-ը կապրի Սփիւռքի մէջ, մեր միակ երաշխիքը դպրոցն է: Մելգոնեանը պարզապէս գումարի կամ շէնքի եւ այլնի հարց չէ, այլ՝ մեր գոյութեան համար ռազմավարական նշանակութիւն ունեցող խնդիր:»

«Մելգոնեանը մեր գոյութեան համար ռազմավարական նշանակութիւն ունեցող խնդիր» է:

Այս հաստատումը ահաւոր նշանակութիւն ունեցող եւ խիստ կարեւոր ճշմարտութիւն է: «Ազգապահպանում» բառը այնքան կրկնուած է մանաւանդ անպատասխանատու անձերու կողմէ որ կարծէք պարպուած է իր իմաստէն: Հոս սակայն մեր «գոյութեան» հիմնահարցը դրուած է ամենայն պատասխանատուութեամբ եւ ահաւոր ծանրութեամբ:

Կառավարութեան մը, պետութեան մը առաջին եւ ամենակարեւոր պարտականութիւնն է երկրին հողային ամբողջականութիւնը եւ ժողովուրդին կեանքի ապահովութիւնը երաշխաւորել: Պետութիւններ իրենց պիտոճէին մեծ մասը կը յատկացնեն զինուելու, բանակ պահելու եւ երկիրը, ժողովուրդը պաշտպանելու: Միւս բոլորը պերճանք է: Ինչ իմաստ ունի հսկայական գումարներ ծախսել որեւէ այլ բանի համար երբ երկիրը գրաւուած է եւ ժողովուրդը գերեվարուած, ջարդ-

ուած: Արեւմտեան Հայաստանը կորսնցուցինք, Արեւմտահայութիւնը ջարդուեցաւ որովհետեւ բանակ չունէինք: Մեր ղեկավարները ռազմավարութիւն չունէին: Պատրաստուած չէին: պարզուեցանք, երկիրը կորսնցուցինք, հողը, հայրենիքը կորսնցուցինք բայց հազարաւոր եկեղեցիներ ունինք հոն, ինչ օգուտ: Նայեցէք ներկայ Իրաքին եւ Սուրիոյ: Այս երկու երկիրները փճացան որովհետեւ բանակները բաւարար ուժ չունէին թշնամիին դէմ կռուելու (որիչ պատճառներ ալ կան անշուշտ): Որովհետեւ Սուրիոյ բանակը բաւականին ուժ չունէր, պայթեցուեցաւ նաեւ մեր նահատակներուն սուրբ լիշատակին նուիրուած Սրբոց Նահատակազ եկեղեցին իր յարակից մասերով Տէր Զօրի մէջ:

Այսօր «պատերազմական վիճակ» գոյութիւ ունի նաեւ Արեւմտահայերէնի պաշտպանութեան մարզին մէջ: Եթէ կը ռաւատանք մեր Ազգի գոյութեան, ուրեմն կը հաւատանք, ստիպուած ենք հաւատալ որ Արեւմտահայերը նաեւ մէկ անբաժան մասն են Հայ Ազգին: Եթէ Արեւմտահայերը անբաժան մասն են Հայ Ազգին, որեւէ բանիմաց հայ գիտէ որ լեզուն, Արեւմտահայերէնը, հիմնական վահանն է, ամբողջ է Արեւմտահայութեան: Արեւմտահայերը եւ Արեւմտահայերէնը պահպանելու, պաշտպանելու համար հրամայական պահանջք է որ ամբողջ Ազգը ոտքի կանքնի եւ պաշտպանէ Արեւմտահայութիւնը, հետեւաբար Արեւմտահայերէնը:

19-րդ դարու մեր «ղեկավարութեան» սխալները չկրկնենք: Զինուելուք եւ զինենք Արեւմտահայերէնը մեր լաւագոյն ուժերով: Զինուելուք լաւագոյն կրթական հաստատութիւններով, եւ մեր կրթական հաստատութիւնները զինենք լաւագոյն Արեւմտահայերէնի ուսուցիչներով: Ամբողջական նուիրումով:

Կարելի է երեւակայել Հայաստանը առանց Սփիւռքի: Եթէ Սփիւռքը մեռնի, Հայաստանի ապագան շատ կը տփուցի, շատ կը վտանգուի: Եթէ Արեւմտահայերէնը մեռնի (ինչ որ հոգեվարքի մէջ է հիմա), շուտով պիտի մեռնի նաեւ Արեւմտահայութիւնը: Ինչ որ թուրքը չկրցաւ ամբողջացնել, հայերուս, մեր ղեկավարութեան անհեռատեսութեան պատճառով, անճառակութեան պատճառով պիտի ամբողջանայ:

Այս Լափալիսեան ճշմարտութիւնը ամէն մարդ գիտէ (գոնէ ազգով հետաքրքրուող որեւէ բանիմաց, ինչքը գլուխը մարդ) ինչու՞ սակայն ճիգ չենք ընել փրկելու Արեւմտահայերէնը եւ իմա՝ Արեւմտահայութիւնը:

Հայաստանի եւ Սփիւռքի ներկայ ղեկավարութեան (նախագահ, կառավարութիւն, կաթողիկոսներ, կուսակցական, միութենական ղեկավարներ, մտաւորականներ, քաղաքան գործիչներ, խմբագիրներ, եւ այլն) առաջնահերթ պարտականութիւնը պէտք է ըլլայ փրկել Արեւմտահայութիւնը փրկելով Արեւմտահայերէնը: Ազգային ռազմավարութեան կեդրոնական խնդիրներէն մին պէտք է ըլլայ Արեւմտահայերէնի պահպանութիւնը:

Եւ ո՞րն է այդ «վահան»ը, ո՞րն է այդ ամբողջը եթէ ոչ Կիպրոսի Մելգոնեան Կրթական Հաստատութիւնը: Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութիւնը, սփիւռքահայ այլ եւ այլ բարեսիր-

րական եւ կրթական կազմակերպութիւններ եւ միութիւններ, եկեղեցին, մեծահարուստներու փաղանգը, հայրենի կառավարութիւնն ու կուսակցութիւնները միանալով պէտք է վերաբանան Մելգոնեան Կրթական Հաստատութիւնը եւ ամէն գնով ապահովեն անոր գոյութիւնն ու շարունակականութիւնը:

Մելգոնեանի տարեկան պիւտոճէն կրնայ 2-3 միլիոն տոլար ըլլալ: Տարեկան թէլէթոններու եկամուտէն կրնանք այդ գումարին մէկ մասը հանել: Հայաստանը տարեկան 3 միլիոն տոլարով ոչ պիտի հարստանայ, ոչ ալ պիտի աղքատանայ: Սակայն այդ 3 միլիոն տոլարով մենք կրնանք վերաբանալ Մելգոնեան Կրթական Հաստատութիւնը, հաւաքել մօտ 5-600 աշակերտներ, լրջօրէն ուսումնասիրուած հայկական կրթական ամբողջական ծրագրով պատրաստել մեր վաղուան պատրաստուած Արեւմտահայը եւ փրկել Արեւմտահայերէնը:

Գիտեմ, ոմանք համաձայն պիտի ըլլան հետս, ուրիշներ գլուխնին պիտի շարժեն, ոմանք պիտի ծիծաղին, ուրիշներ ծաղրեն եւ անիծեն զիս: Հոգ չէ, թող վերաբանանք Մելգոնեան Կրթական Հաստատութիւնը, թող փրկենք Արեւմտահայերէնն ու Արեւմտահայութիւնը, մնացածին համար ըսենք «Աստուած մեծ է»:

«Թուրքերը բացել են արտասահմանում 1000 ից աւելի դպրոց վերջին 20 տարուայ ընթացքում: 1000 դպրոց՝ 110 երկրի մէջ եւ իրենց այդ դպրոցներու ցանցի նյութական հնարաւորութիւնները 25 միլիոն տոլար են: Այսօր թուրքը Փարիզի սրտում կառուցում է դպրոց եւ ֆրանսացիներին բերում է սովորեցնում է թուրքական մշակոյթ եւ թուրքերեն լեզու:»

Եւ մենք, մեր ազգի «իմաստուն ղեկավարները», Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան Պատկառելի Կեդրոնական Վարչութիւնը, առանց նուազագոյն իսկ խղճի խայթի, մեր միակ գիշերօթիկ հաստատութիւնը կը փակէ ճղճիմ պատրուակներով եւ չ'արտօներ որ ուրիշ կազմակերպութիւններ ստանձնեն անոր վերաբացումն ու մատակարարումը: Եւ մեր Նախագահը, Կաթողիկոսները, Կրթական Նախարարը, երեք Կուսակցութիւնները, մամուլը, մտաւորականները, անտարբեր լուրթեամբ միւս կողմ կը նային:

Թուրքը արտասահմանի մէջ աւելի քան 1000 դպրոց ունի, 25 միլիոն տոլար տոլար պիւտոճէնով: Ամերիկայի Միացեալ Նահանգներում մէջ տասնեակներով «Չարթըրտ» դպրոցներ ունի (12 դպրոց միայն Քալիֆորնիոյ մէջ) «մեր, հարկատուներուս տոլարներով մատակարարուած... Մե՞նք... մեր միակ գիշերօթիկ դպրոցը կը փակենք: Եւ մենք կրթասէր, մշակութասէր ժողովուրդ ենք... (Թուրքերուն չափ ալ չկանք... Ամօ՛թ մեզի:)

Տեր Մեսրոպ կ'առաջարկէ «Եկէք կրկին վերաթմայնենք մեր հայրերի ոգին, որպէսզի շարունակենք իսկապէս որպէս լիարժէք ժողովուրդ:»

Կ'ուզենք ՅՈՒՍԱԼ որ Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան Պատկառելի Կեդրոնական Վարչութիւնը եւ անոր նախագահ՝ Տիար Պերճ Սեդրակեանը վերհասնեն Մելգոնեան Կրթական Հաստատութիւնը փակուած պահելու իրենց որոշումը եւ կարելի փութով կը վերաբանան գայն:

ՇՆՈՐԱԻՈՐԱՆԵ

ԱՆԻ ԱՃԷՄԵԱՆ ԸՆԴ ՇԱՆԹ ՔՈՒԼԼՈՒՔԵԱՆ
 Ամուսնացեալք 8 Նոյեմբեր, 2014 Մոնթեպելլօ

«Մասիս» ջերմօրէն կը շնորհաւորէ նորապսակ զոյգը, մաղթելով երջանիկ եւ արեւշատ տարիներ: Շնորհաւորութիւններ նաեւ անոնց ընտանեկան համայն պարագաներուն, մասնաւորաբար՝ Տէր եւ Տիկ. Սեդրակ եւ Ալին Աճէմեանին:



LIVE
 8am - 8pm PST*
 *San Francisco 8am - 7pm PST

ԴԵՊՐԻ ԱՐՅԱԽ
EN ROUTE ARTSAKH

Scan Below
 and Donate
\$10!

CITY-STATE-REGION	STATION	DIGITAL CHANNEL	CABLE CHANNEL	SATELLITE	TIME
Northern California Sacramento	KSAO 49	49.1	Comcast Channel 194 AT&T U-verse Channel 4		8am to 8pm PST
San Francisco Bay Area San Francisco, Oakland, San Jose, Berkeley, and others.	KTSF 26	26.1	Comcast Channel 8, 21 or 26 Charter Channel 8 or 98 AT&T U-verse Channel 8 Google Fiber Channel 8	DirecTV 26 or 893 DISH 26 or 8237	8am to 7pm PST
Central California Fresno & Mid-State	KGMC 43	43.1	Comcast Channel 10 AT&T U-verse Channel 43	DirecTV 43 DISH 43	8am to 8pm PST
Southern California Greater Los Angeles Area	KSCI 18	18.1	AT&T U-verse Channel 18 Verizon FiOS Channel 18 Major Cable Systems Channel 18	DirecTV 18 DISH 18	8am to 8pm PST

For all other locations please tune in to our **LIVE WEBCAST** at www.ArmeniaFund.org

Text **ARMENIA** to **50555** to give **\$10** to Armenia Fund Inc. Reply with **YES** to confirm your donation.

\$10.00 donation to Armenia Fund Inc. Charges will appear on your wireless bill, or be deducted from your prepaid balance. All purchases must be authorized by account holder. Must be 18 years of age or have parental permission to participate. Message and Data Rates May Apply. Text **STOP** to **50555** to **STOP**. Text **HELP** to **50555** for **HELP**. Full Terms: mGive.org/T. Privacy Policy: mGive.org/P

Visit & Donate: www.armeniasfund.org or Call: 1-800-888-8897